



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ**

**ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ  
ԿԱՊԵՐԸ 1918-1985ԹԹ.**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ**

**8-10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010Թ.  
ԵՐԵՎԱՆ - ԾԱՂԿԱԶՈՐ**

**ԵՐԵՎԱՆ  
2011**

ՀՏԴ 941 (479.25) :06 Յրատարակումը երաշխավորված է  
ԳՄԴ 63. (2Հ) Հայաստանի ազգային արխիվի  
Հ 240 գիտխորհրդի կողմից

Խմբագրական խորհուրդ՝

Ամատուն Վիրաբյան - պատմ. գիտությունների դոկտոր  
Սոնյա Միրզոյան - պատմ. գիտությունների թեկնածու  
Արմեն Բաղայան - պատմ. գիտությունների թեկնածու

Հ240 Հայ գաղթականությունը և Հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985թթ.: Միջազգ. գիտաժողովի զեկուցումներ / Հայաստանի ազգային արխիվ; Խմբ. խորհուրդ՝ Ա.Վիրաբյան և որիշ. - Եր.: Հայաստանի ազգային արխիվ, 2011 - 138 էջ:

«Հայ գաղթականությունը և հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985թթ.» գիտական աշխատությունների ժողովածուն լուսաբանում է ինչպես հայոց ցեղասպանությունից փրկված հայ գաղթականության վիճակը, այնպես էլ՝ Մայր հայրենիքի և սփյուռքի միջև 1918-1985թթ. հաստատված կապերը:

Ժողովածուն հասցեագրված է պատմաբաններին և հայոց պատմությանը հետաքրքրվող ընթերցող լայն հասարակությանը:

ՀՏԴ 941 (479.25) :06  
ԳՄԴ 63. (2Հ)

ISBN 978.99941-878-8-1

© Հայաստանի ազգային արխիվ, 2011

## ՆԵՐԳԱՂԹ, ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ. ԴԻՄԿՈՒՐՄԻՎ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մինչ բուն նյութին անցնելը անդրադառնամ *գաղթ, գաղթել* բառերին, որոնք անհրաժեշտաբար պետք է օգտագործեն ստորև: Ստ. Մալխասյանցի բառարանը տալիս է հետևյալ բացատրությունը՝ «Թողնել իւր բնիկ երկիրը եւ գնալ այլ երկիր՝ բնակություն հաստատելու»:՝ Նույն բացատրությունն է տալիս Էդ. Աղայանի բառարանը՝ «Հայրենի երկրից հեռանալ եւ բնակություն հաստատել այլ երկրում, գաղթական դառնալ»:՝ Ա. Ղարիբյանի խմբագրած բառարանում՝ «Որևէ աղետի հետևանքով թողնել իր հայրենիքը՝ բնակավայրը, այլ երկիր տեղափոխվել, գաղթական դառնալ»:՝ Ավելի վաղ նման բացատրություն է տվել Հ. Աճառյանը՝ «հայրենիքը թողնելով՝ փախչիլ ուրիշ տեղ երթալ բնակիլը»:՝ Ինչպես տեսնում ենք, եթե Ստ. Մալխասյանցի և Էդ. Աղայանի մոտ խոսքը ընդհանրապես հայրենիքից, բնիկ երկրից հեռանալու մասին է, ապա Հ. Աճառյանի և Ա. Ղարիբյանի մոտ՝ հենց իսկ հարկադրված հեռանալու (որևէ աղետի հետևանքով, փախչիլ) մասին է: Իմ կարծիքով, այսօր մեզանում գաղթել բառը, որպես կանոն, օգտագործվում է հենց «*փախստական*» իմաստով. վերջին տարիներին Հայաստանից հեռացածների մասին խոսելիս ասում են ոչ թե գաղթականներ, այլ արտագաղթողներ, միգրանտներ, հեռացողներ: Մյուս կողմից պետական համապատասխան հիմնարկները անվանում են

<sup>1</sup> Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան: Հ. 1: Եր., 1944, էջ 407:

<sup>2</sup> Էդ. Աղայան, Արդի հայերեն բացատրական բառարան: Հ. 1: Եր., 1976, էջ 216:

<sup>3</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հ. 1: Գլխ. խմբ. Ա. Ղարիբյան: Եր., 1969, էջ 364:

<sup>4</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան: Հ. 1: Եր., 1971, էջ 505:

պետական համապատասխան հիմնարկները անվանում են «միգրացիոն ծառայություն»: Այլ կերպ ասած, «գաղթել, գաղթական» բառերը հայերենում ունեն որոշակի, ինչպես ընդունված է ասել լեզվաբանության մեջ, կոնոտացիա, ինչը արտահայտություններին հաղորդում է հուզական կամ արժեքային երանգներ եւ արտացոլում է ժողովրդի պատմամշակութային ավանդույթներն ու փորձը: Ահա թե ինչու, երբ ասում ենք գաղթական, գաղթականություն, մենք նախ և առաջ նկատի ունենք հարյուր հազարավոր մարդկանց, որոնք 1915թ. ցեղասպանությունից և բռնագաղթից հետո պարտադրաբար ցրվեցին աշխարհով մեկ:

Նկատի առնելով վերոբերյալ բացատրությունները՝ որքանով է արդարացված նույն այդ մարդկանց անվանել գաղթական կամ փախստական: Նրանց հիմնական մասը ոչ «թողել» էր իր հայրենիքը որևէ աղետի հետևանքով և ոչ էլ հայրենիքը թողնելով «փախել էր» ուրիշ տեղ: Նրանք հենց իսկ բռնագաղթվել էին իրենց հայրենիքից թուրքական իշխանությունների կողմից և մինչ օրս զրկված են հայրենիք վերադառնալու հնարավորությունից: Այլ կերպ ասած, նրանք գաղթականների առանձին տեսակ են, որը հստակ արտացոլում է *վտարանդի* տերմինը: Ի պատասխան արդարացիորեն կասվի, թե մեզանում «գաղթական» և «վտարանդի» տերմինները հոմանիշներ են: Այդ դեպքում, սակայն, ինչ բառով կամ տերմինով պետք է անվանել բոլոր նրանց, որ հեռանում են հայրենիքից կամ երկրից՝ անկախ պատճառներից և ձևից: Պատասխանը հայտնի է. մենք ստիպված ենք ասել «միգրանտ», «միգրացիոն ծառայություն», մինչդեռ կարող էինք ասել «գաղթականական կամ գաղթային ծառայություն»: Ինչպես վերը նշվեց, հենց այսպես է բացատրվում գաղթական բառը Ս. Մալխասյանցի եւ էդ. Ադայանի բառարաններում:

Հայտնի է, որ որևէ գիտության զարգացման աստիճանի մասին (թե՛ ընդհանրապես և թե՛ այս կամ այն երկրում) կարելի է

գիտական տերմիններին ներկայացվող կարևոր պահանջներից է նրանց թարգմանելու հնարավորությունը: Այս առումով, որքան էլ այն առաջին հայացքից խորթ թվա, գուցե արժի քննարկել հետևյալ տարբերակը. *գաղթական* - мигрант, migrant, *վտարանդի* - изгнанный, exile, *փախստական* - беженец, refugee, *բռնագաղթված* - депортированный, deportee.

Տարիներ առաջ Խորհրդային Հայաստանում Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը ուսումնասիրելիս, ուշադրությունս գրավեց այն, որ 1920-1930-ական թթ. տարբեր տեքստերում, խոսելով Հայաստան գաղթած վտարանդիների մասին, ամենուրեք օգտագործվել է ոչ թե *հայրենադարձություն*, այլ *ներգաղթ* տերմինը: Նույն «ներգաղթ», «ներգաղթողներ» տերմիններին հանդիպեցի հետագայում, երբ անդրադարձա ՎՃԸՄ 1940-ական թթ. պատմությանը: Իմ զարմանքը հասկանալի էր, քանի որ հետպատերազմյան (խոսքը Երկրորդ Աշխարհամարտի մասին է) բոլոր սերունդների նման կարդացել և լսել էի հենց իսկ «հայրենադարձության», «հայրենադարձների» մասին: Ակնհայտ էր, որ նշված բառերի օգտագործումը պատահական չէր և պետք է ունենար իր բացատրությունը: Երբ սկսեցի զբաղվել այս հարցով, պարզ դարձավ, որ տվյալ դեպքում գործ ունենք մի երևույթի հետ, որը ժամանակակից գիտության մեջ նշանակվում է *դիսկուրս* տերմինով: Հիշեցնեմ, որ դիսկուրսը խոսքի կամ տեքստի սոցիալապես պայմանավորված կազմակերպումն է, ինչպես նաև որոշակի սկզբունքներ, որոնց համապատասխան իրականությունը դասակարգվում և ներկայացվում է առանձին ժամանակահատվածներում: Ըստ ռուսաստանցի հայտնի լեզվաբան Ն. Արուտյունովայի պատկերավոր արտահայտության՝ «դիսկուրսը կյանքի մեջ խորասուզված խոսքն է»: Իսկ քանի որ կյանքում կամ իրականության մեջ լինում են տարբեր գործող անձեր՝ անհատներ և խմբեր, կամ ինչպես հիմա է ընդունված ասել՝ ակտորներ, ապա դիսկուրսը անպայմանորեն ունենում է *ինչպիսի*

տորներ, ապա դիսկուրսը անպայմանորեն ունենում է *ինչպիսի* և *ու՛մ* սահմանումները:

Տվյալ դեպքում ակտորները երեքն են՝ վտարանդիները և խորհրդային իշխանությունները՝ Երևանում և կենտրոնում՝ Մոսկվայում: Վտարանդիների կողմից «ներգաղթ» բառի օգտագործումը թվում է բնական և արդարացված, քանի որ նրանց համար հայրենիքը Արևմտյան Հայաստանն էր և Հայկական Կիլիկիան, ուր նրանց նախնիները ապրել էին դարերով, մինչդեռ Ռուսական կայսրության մաս կազմող Արևելյան Հայաստանը նրանց բացարձակ մեծամասնությանը պարզապես անծանոթ էր: Իրենց գաղթը Խորհրդային Հայաստան անվանել հայրենադարձություն կնշանակեր դավաճանություն իրենց նախնիների հանդեպ, կնշանակեր, որ իրենք վերջնականապես հրաժարվում են իրենց հայրենի օջախները՝ Արևմտյան Հայաստան և Հայկական Կիլիկիա վերադառնալու հույսից: Նկատի առնենք նաև, որ 1920-1930-ականներին Հայաստան գաղթած մարդիկ (ավելի քան 42 հազար) անմիջական զոհերն էին թե՛ ցեղասպանության և թե՛ բռնագաղթի, ուստի և նրանց հիշողություններն ու հոգեվիճակը անկարելի էին դարձնում հայրենիքի մասին գաղափարի կամ պատկերացումների այդչափ արագ փոփոխումը: Այս ամենի պատճառով է, որ վտարանդիները, ավելի ստույգ՝ նրանց մտավոր վերնախավը գաղթը Խորհրդային Հայաստան նշանակեց *ներգաղթ* չեզոք տերմինով:

Շատ ուշագրավ է, սակայն, այն, որ նույն ներգաղթ տերմինը օգտագործվում էր նաև Խորհրդային Միությունում՝ Երևանում և Մոսկվայում: Հայաստանի այդ տարիների ղեկավարները, հավատարիմ լինելով կոմունիստական գաղափարախոսությանը, մինևնույն ժամանակ իրապես ազգային գործիչներ էին, նրանցից շատերը թեև ո՛չ ծնվել և ո՛չ էլ ապրել էին Արևմտյան Հայաստանում կամ Կիլիկիայում (բացառություններից էր Ա. Խանջյանը), սակայն լավ հասկանում էին վտարանդիների մտայնությունը, հայրենիքի վերաբերյալ նրանց պատկերա-

կողմից նույնպես կարելի է բնական համարել: Բայց կար ևս մեկ, շատ ավելի կարևոր հանգամանք՝ Մոսկվայի կենտրոնական իշխանությունների օրինակը:

Արդեն 1920 թվականից Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները մեծ աշխատանք էին տանում ռուս փախստականների (այսպես կոչված սպիտակ էմիգրացիա) մեջ՝ նրանց հայրենիք վերադառնալու (репатриация) նպատակով, 1921թ. նույնիսկ հայտարարվեց քաղաքական համաներման մասին: Թեև այն չդարձավ զանգվածային նույն իշխանությունների կողմից հայրենադարձների նկատմամբ բռնաճնշումների պատճառով, այնուամենայնիվ 1921թ. Ռուսաստան վերադարձավ 121 343, իսկ 1921-1931թթ. ավելի քան 181 հազար մարդ:<sup>1</sup> Բոլոր այս մարդիկ իրապես *հայրենադարձ* էին, *репатриант*. Լրիվ այլ էր հայերի պարագան, այլ էր նաև իշխանությունների վերաբերմունքը նրանց հանդեպ. չեղան ո՛չ բռնաճնշումներ և ո՛չ էլ այլ տիպի պատժամիջոցներ: Այս տարբերությունը ունեցավ իր լեզվական արտահայտությունը. նրանց համարեցին կամ կոչեցին *армяне-иммигранты*, այլ ոչ թե *армяне-репатрианты*: Այստեղ առաջ է գալիս մի հարց, որի պատասխանը ես չունեմ. լեզվական այս սահմանազատումը, տարբեր տերմինների օգտագործումը կատարվեց Մոսկվայի, թե Երևանի իշխանությունների նախաձեռնությամբ: Ամեն դեպքում, այն ամրագրվեց և ստացավ պաշտոնական կարգավիճակ. *Иммиграционный комитет, иммигрантские поселки, иммигрантское строительство* և այլն, *Ներգաղթի կոմիտե, ներգաղթողների ավաններ* և այլն:

Ինչպես հայտնի է, հայերի զանգվածային գաղթը Հայաստան վերսկսվեց Երկրորդ Աշխարհամարտից հետո՝ 1946թ.: Մինչ այդ՝ 1945թ. նոյեմբերի 21-ին, Խորհրդային Միության կառավարությունը Ստալինի ստորագրությամբ ընդունեց այն թույլատրող հաստուկ որոշում, որում օգտագործվում էին հետևյալ ձևա-

<sup>1</sup> В. Ионцев, Н. Лебедева, М. Назаров, А. Окороков. Эмиграция и репатриация в России. М., 2001. С. 210.

րությունը Ստալինի ստորագրությամբ ընդունեց այն թույլատրող հատուկ որոշում, որում օգտագործվում էին հետևյալ ձևակերպումները՝ *армяне-иммигранты, возвращение армян*:<sup>1</sup> 1948թ. կայացած կուսակցության XIV համագումարում Հայաստանի կոմկուսի առաջնորդ Գ. Հարությունովը իր ելույթում օգտագործում է *армяне-переселенцы*, իսկ երեք տարի անց՝ հաջորդ համագումարում՝ *армяне, вернувшиеся из-за границы* բառակապակցությունները:<sup>2</sup> Այդ տարիներին հայերենով գրված տարբեր պաշտոնական գրություններում նույնպես խոսվում է *վերադարձող հայերի* մասին:

Այսպիսով, 1920-1930թթ. ռուսերեն *армяне-иммигранты* ձևակերպման հետ մեկտեղ 1940-ականներին սկսում են օգտագործվել նաև *возвращающиеся армяне, армяне-переселенцы*, իսկ հայերենով՝ *ներգադրող հայերի* փոխարեն՝ *վերադարձող հայեր* բառակապակցությունները: Սակայն համապատասխան պետական հիմնարկների անվանումներում երկու լեզուներում էլ պահպանվում են *иммигрант* և *ներգադրող հայեր* բառերը՝ Комитет по приему и устройству армян-иммигрантов, Արտասահմանից ներգադրող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե:

Կարևորն այն է, որ ինչպես և նախորդ շրջանում չեն հանդիպում *հայրենադարձ, հայրենադարձություն* և *репатриант, репатриация* տերմինները: Այս անգամ, սակայն, այլ պատճառով: Ինչպես հայտնի է, Երկրորդ Աշխարհամարտի տարիներին Խորհրդային Միության 6,8 միլիոն քաղաքացիներ հայտնվել

միլիոնը, որոնց ընդունված է անվանել *տեղահանված անձինք* (ստիպողական աշխատանքի համար թշվառներ, գերիներ, գերմանացիների հետ համագործակցողներ նս): Ուշագրավ է, որ նրանց մեծամասնությունը վախենում էր ոչ թե նրանից, որ իրենց թույլ չի տրվի մնալ Արևմուտքում, այլ որ իրենց թույլ չի տրվի վերադառնալ Խորհրդային Միություն: Մինչդեռ մարդկային մեծ կորուստներ կրած Խորհրդային Միությունը ձգտում էր վերադարձնել բոլոր այդ մարդկանց, որոնց մի մասը ենթակա էր պատժի՝ գերմանական, այդ թվում «ազգային» գորամիավորումներում ծառայելու, նացիստների հետ համագործակցելու համար: Խորհրդային Միության քաղաքացիների տեղահանված անձանց այս վերադարձը, որը տևեց շուրջ յոթ տարի՝ 1945-1952թթ., հենց սկզբից կոչվեց *репатриация* (հայրենադարձություն): Արդեն 1944թ. հոկտեմբերին ստեղծվեց Управление уполномоченного СНК СССР по делам репатриации (ԽՍՀՄ Ժողկոմխորհի հայրենադարձության գործերով լիազորի վարչություն), որը հետագա տարիների ընթացքում ղեկավարեց երկրի քաղաքացիների վերադարձի հետ կապված բոլոր աշխատանքները:

Հարկ է նկատել, որ 1945թ. փետրվարին Ցալթայում կայացած դաշնակից երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ կնքած համաձայնագրերում ամրագրվեց նրանց քաղաքացիների *հայրենադարձության փոխադարձ պարտադիր (взаимная обязательная репатриация)* սկզբունքը: Վ. Զեմսկովի բերած արխիվային տվյալները փաստում են, որ մինչև 1946թ. մարտի 1-ը հայրենադարձվել էր մոտ 4,2 միլիոն խորհրդային քաղաքացի, այդ թվում՝ 25 063 հայ:<sup>1</sup>

Լրիվ այլ էր պատկերը սփյուռքահայերի 1946-1949թթ. ներգադրի պարագայում: Առաջինը՝ նրանք Խորհրդային Միության

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 74, թ. 1.

<sup>2</sup> Գր. Арутюнов. Отчетный доклад на XIV съезде коммунистической партии Армении о работе ЦК КП(б)А. Ер., 1948. С. 92; Он же. Отчетный доклад на XV съезде коммунистической партии Армении о работе ЦК КП(б)А. Ер., 1951. С. 78

<sup>1</sup> В. Земсков. Проблема советских перемещенных лиц (1944-1956) // Россия в XX веке. Война 1941-1945 годов. Современные подходы. М., 2005. С. 522.

քաղաքացիներ չէին, և երկրորդը՝ նրանք գալիս էին Խորհրդային Միություն զուտ կամավորության սկզբունքով, այն էլ երկրի ղեկավարի՝ Ստալինի հատուկ թույլտվությամբ: Այս երկու սկզբունքային տարբերությունները արդեն բավական էին, որպեսզի առանձնացնեն նրանց և չանվանեն մյուսների նման *репатриант* կամ հայրենադարձ:

Ինչպես և 1920-1930թթ., *հայրենադարձ* տերմինը չի հանդիպում նաև 1940-ականներին, խորհրդային իշխանությունների ի դեմս վերը հիշատակած Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեի կողմից սփյուռքին հղած բազմաթիվ գրություններում: Երկու կողմերն էլ, շարունակելով ավանդույթը, իրենց փոխադարձ նամակագրության մեջ գրում են *ներգաղթի* և *ներգաղթողների* մասին: Սակայն սփյուռքահայերի պարագայում նույն այդ բառի օգտագործումը ստանում է մի նոր իմաստ՝ կապված այդ ներգաղթի հանգամանքների հետ:

Խոսքը Ստալինի աշխարհաքաղաքական ծրագրի մասին է, որի հիմնական կետերից էր ռուս-թուրքական պայմանագրով (1921թ., մարտ) Թուրքիային անցած Կարսի և Արդահանի մարզերի վերադարձը: Նկատի առնելով իր դաշնակիցների՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հնարավոր հակազդեցությունը, նա որոշեց այդ նպատակին ծառայեցնել նաև սփյուռքահայերին, նրանց այդ ազգային-քաղաքական սպասելիքները: Սփյուռքահայերը, տեղեկանալով («տեղեկատվության արտահոսքի» շնորհիվ) Ստալինի ծրագրերին, իրենց բազմաթիվ նամակ-դիմումներում ողջունեցին նրա մտադրությունները հայկական տարածքների վերադարձման և ներգաղթի կացմակերպման վերաբերյալ:<sup>1</sup>

Նրանց ոգևորությունը հասկապես ուժեղացավ 1946թ. փետրվարի 3-ին «Սովետական Հայաստան» պաշտոնաթերթում հրապարակած Հայաստանի կոմկուսի առանորդ Գ. Հարությունովի ճառից հետո, ուր նա ասում էր. «Մենք առաջիկա տարիներում Հայաստանի ներկայիս տերիտորիայում կարող ենք ընդունել մաքսիմում 350-400 հազար մարդ: Այնինչ ցանկացողները ավելի շատ են: Մենք ինչպե՞ս պետք է վարվենք մնացածների հետ: Մնացած 500-600 հազար հայերին ընդունելու համար, մենք հարց ենք դնում, որ Սովետական Հայաստանին վերադարձվեն Թուրքիայի կողմից գավթված հայկական մարզերը: Միայն այդ պայմանով մենք կկարողանանք ընդունել բոլոր ցանկացող հայերին»: Ահա այս հույսն էլ ավելի էր արդարացնում հայրենադարձություն անվանել ոչ թե ներգաղթը Խորհրդային Հայաստան, այլ սպասվող վերադառձը 30 տարի առաջ կորցրած հայրենիք, թեկուզ և նրա մի մասը:

Սակայն, ինչպես հայտնի է, Ստալինի ծրագիրը ձախողվեց Թուրքիայի և Հունաստանի տարածքային ամբողջականությունը երաշխավորող Տրումենի 1947թ. հայտնի դոկտրինի պատճառով: Պարտություն կրելով իր ավելի հզոր հակառակորդից՝ Ստալինը անիմաստ և ավելորդ համարեց շարունակել հայերի ներգաղթը. էթե 1946-ին Հայաստան ներգաղթեց մոտ 51 հազ, ապա 1947-ին՝ մոտ մեկ երրորդով պակաս՝ շուրջ 36 հազ, 1948-ին՝ 3092, իսկ 1949-ին՝ ընդամենը 162 մարդ: Նույն այդ տարիներին Խորհրդային Միությունում սկիզբ առած սատր պատերազմի, կոսմոպոլիտիզմի դեմ պայքարի պայմաններում գնալով ուժեղանում էր անվստահությունը հայրենադարձների նկատմամբ: Ինչպես նշում է Վ. Զեմսկովը, «հասարակական գիտակցության մեջ «հայրենադարձներ» («репатрианты») տերմինը ստացավ միանշանակ բացասական իմաստ և գնալով նրանցից ավելի ու ավելի էին խուսափում, ինչպես բոլորտ անձերից»:<sup>1</sup> Հայաստանում խոսակցական հայերենում, ինչպես

<sup>1</sup> Էդ. Մելքոնյան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն: Եր. 2005, էջ 350-358; Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946гг. Под ред. А. Киракосяна. Ер., 2010.

<sup>1</sup> В Земсков. Նշվ. աշխ.: С.530.

հայտնի է, նույն բացասական իմաստը ունեցավ «ախպար» բառը: «Ներգաղթողների համար այս անվանումը, - գրում է Ա. Ստեփանյանը, - վերածվեց ճակատին դրոշմած խարանի, որի հետևանքն էր մերժումն ու մեկուսացումը»:<sup>1</sup>

Այսպիսով, կարելի է ասել, որ 1920-1930- ականների և 1946-1948թթ. սփյուռքահայերի գաղթը Խորհրդային Հայաստան ունեցավ իր առանձնահատուկ դիսկուրսիվ տերմինաբանությունը: Վերը նշվել էր, որ դիսկուրսը անպայմանորեն ունենում է *ինչպիսի* եւ *ու՛մ* սահմանումները: Տվյալ դեպքում, այդ տարիների բոլոր գաղթերի և նրանց մասնակիցների վերաբերյալ Խորհրդային Միությունում և Խորհրդային Հայաստանում, որպես կանոն, օգտագործվեցին *ներգաղթ*, *ներգաղթող* տերմինները, իսկ 1940-ականներին նաև *վերադարձող հայեր* ձևակերպումը: Իր հերթին, սփյուռքի հայությունը, ներառյալ Հայաստան գաղթածները, այդ բոլոր տարիներին հետևողականորեն օգտագործեց *ներգաղթ*, *ներգաղթող* տերմինները: Սակայն, ինչպես նշվեց, այդ նմանության հիմքում ընկած էին սկզբունքորեն տարբեր պատճառներ, որոնք էլ իրենց հերթին պայմանավորեցին հրաժարումը հայրենադարձ, հայրենադարձություն տերմիններից:

Ստալինի մահից (1953) հետո Խորհրդային Միության ներքին և արտաքին քաղաքականությունը կրեց որոշակի փոփոխություններ:<sup>2</sup> Երկրի ղեկավարությունը, ձգտելով էլ ավելի ընդլայնել ԽՍՀՄ ազդեցության ոլորտները, սկսեց դաշնակիցներ ու բարեկամներ ձեռք բերել արդեն ոչ միայն և ոչ այնքան դասակարգային, որքան ընդհանուր քաղաքական շահերի հիման

վրա: Համապատասխանաբար խմբագրվեց և Հայաստանի քաղաքականությունը սփյուռքի հանդեպ: Այս նոր քաղաքականության դրսևորումներից էր նաև սփյուռքահայերի ներգաղթի նոր ալիքը: Արդեն 1955թ. մայիսին Հայաստանի ղեկավարությունը դիմում է այդ հարցով Մոսկվա՝ նշելով մի շարք երկրներից ստացած բացմաթիվ դիմումները, որոնց հեղինակները խնդրում էին թույլատրել իրենց ներգաղթը Հայաստան:<sup>1</sup> Ի վերջո, հարցին լուծում և ընթացք տալու համար 1958թ. ստեղծվեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողով, որը քննարկում էր Հայաստան ներգաղթել ցանկացողներից ստացած դիմումները և անհատական կարգով որոշում նրանց թույլատրելու կամ մերժելու հարցը: Սակայն նման ցանկությունն հայտնած մարդկանց մշտապես աճող թիվը անհրաժեշտ էր դարձնում նաև զանգվածային նոր ներգաղթի կազմակերպումը, և այդ նպատակով 1961թ. Հայաստանի կոմկուսի և կառավարության որոշմամբ ստեղծվում է կառավարությանը առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե: Ինչպես տեսնում ենք, 1940-ական թթ. պետական համապատասխան մարմինների անվանումներում դեռևս պահպանված *ներգաղթող հայեր* բառերը այժմ փոխարինվում են *վերադարձող հայեր* բառերով, որոնց օգտագործումը դառնում է համատարած: Ուշագրավն այն է, որ այդ տարիներին Հայաստանում ռուսերենով կազմած փաստաթղթերում նույն *возвращение армян, возвращающиеся армяне* բառակապակցությունների հետ սկսվում է հաճախակի օգտագործվել նաև *репатриация* տերմինը: Մյուս կողմից՝ վերանվանվում է վերոնշված Комиссия Совета Министров Армянской ССР по репатриации граждан из-за границы, ինչի արդյունքում *репатриация*-ի փոխարեն վերադառնում է *возвращение армян* արտա-

<sup>1</sup> Ա. Ստեփանյան, 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և աղապատացման խնդիրները // 1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախղիբն այսօր: Եր., 2009, էջ 161:

<sup>2</sup> Ա. Վիրաբյան, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը (1945-1957թթ.): Եր., 2001, էջ 198-232:

<sup>1</sup> Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980թթ.): Եր., 1985, էջ 249:



հայտությունը Правительственная комиссия по возвращению армян из-за рубежа:

Այն տպավորությունն է ստեղծվում, որ Հայաստանում տեղի է ունենում նոր դիսկուրսի որոնում՝ երկրում տիրող նոր իրականության համապատասխան: Նախորդ շրջանի համեմատ սփյուռքի հետ կապերի աննախադեպ աշխուժացումը, Հայաստան անհատապես ներգաղթելու հնարավորությունը, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի ստեղծումը (1964) առաջացրին որակապես նոր, հուզականությամբ լի մթնոլորտ, երբ հայ ժողովրդի երկու հատվածները կարծես վերագտնում էին իրար: Այս նոր փոխհարաբերություններում գլխավոր դերը, բնականաբար, վերապահված էր Խորհրդային Հայաստանին: Որպես աշխարհի ամենահզոր պետություններից մեկի՝ Խորհրդային Միության լիիրավ մի մաս, իր ազգային-պետական կառույցներով, ակնհայտ առաջադիմությամբ գրեթե բոլոր ոլորտներում Խորհրդային Հայաստանը սփյուռքահայերի մի սովոր գանգվածի համար դարձել էր իրական հայրենիք: Դա հատկապես նկատելի էր սփյուռքահայերի նոր օտար երկրներում մեծացած սերունդների մոտ:

Որակապես նոր պայմաններում նրանց գաղթը Հայաստան ստանում էր նոր իմաստ և բովանդակություն, որոնք անկարելի էր անվանել, ինչպես նախորդ շրջանում, լոկ որպես ներգաղթ, իսկ նրա մասնակիցներին՝ ներգաղթողներ կամ վերադարձող հայեր: Հարկավոր մեկ այլ անվանում կամ տերմին, որը արտահայտեր թե՛ Խորհրդային Հայաստանի հավակնությունը դառնալ ողջ հայության հայրենիքը և թե՛ սփյուռքահայերի ձգտումը՝ ունենալ ոչ միայն պատմական, այլև իրական Հայաստան: Դա, իհարկե, *հայրենադարձություն* բառն էր: Թեև այլևս վերացել էին նախկինում նրա օգտագործմանը խոչընդոտող վերոնշյալ հանգամանքները, այնուամենայնիվ, այն կարող էր քաղաքացիություն ստանալ, եթե հնչեցվեր ամենաբարձր ամբիոնից: Եւ ևս 1966թ. մարտ ամսին կայացած Հայաստանի

կոմկուսի XXIV համագումարում Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը խոսեց «սփյուռքահայերի հայրենադարձություն» մասին: Այդուհետ «հայրենադարձության» օգտագործումը դառնում է համատարած, այդ թվում նաև գիտական հրապարակումներում: Կարևորը, սակայն, այն է, որ բոլոր նման աշխատանքներում (այդ թվում նաև իմ հեղինակած) «հայրենադարձություն» են որակվում սփյուռքահայերի ոչ միայն 1960-ականներից հետո տեղի ունեցած, այլև նախորդ տարիների գաղթերը Խորհրդային Հայաստան: Ավելին, Հ. Մելիքսեթյանը իր ընդհանուր առմամբ արժեքավոր մենագրությունում նույն այդ էքստրապոլյացիան տարածում է նույնիսկ պետական հիմնարկների անվանումների վրա: Խոսելով վերոնշյալ Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողովի, ապա նաև կոմիտեի ստեղծման մասին, նա երկու դեպքում էլ գրում է. «այսուհետ այն կրճատ կանվանենք հայրենադարձության հանձնաժողով», «...հայրենադարձության կոմիտե»:՝ Ընդհանրապես, էքստրապոլյացիայի տրամաբանությունը նրանում է, որ նա արդեն եղած, ձևավորված պատկերացումները տարածում է նոր, անձանոթ երևույթների վրա՝ դրանով իսկ փոխհատուցելով նոր պատկերացումների բացակայությունը կամ պակասավոր լինելը: Սակայն մեզ հետաքրքրող դեպքում կատարվում է հակառակը. որոշակի ժամանակ ձևավորված պատկերացումները՝ համապատասխան հասկացություններով հանդերձ, փոխարինվում են մեկ այլ ժամանակ ձևավորված պատկերացումներով ու հասկացություններով: Ինչու՞, ենթադրենք՝ պարզ հարմարության համար: Ամեն դեպքում արդյունքը մեկն է. անցյալի վերակառուցումը դառնում է թերի, քանի որ անտեսվում է ուսումնասիրվող օբյեկտի՝ անցյալի մարդկանց գիտակցությունը:

**ԷԴՈՒԱՐԴ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ**

պատմագիտության դոկտոր  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի  
առաջատար գիտաշխատող

<sup>1</sup> Հ. Մելիքսեթյան, նշվ. աշխ., էջ 252, 256:  
15

## ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԸ ԱՄՆ ԵՎ ԿԱՊԸ ԲԵՐՐԱՆԻ ՀԵՏ (ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ 1985Թ.)

### Հայերի պանդխտությունը և գաղթը ԱՄՆ.

Դարերի ընթացքում հայ ժողովուրդը պատմական ճակատագրի բերումով հարկադրված է եղել հեռանալ իր բնօրրանից և գաղթել աշխարհի տարբեր երկրներ՝ հիմնելով մեծ ու փոքր գաղթավայրեր, որոնք ժամանակի ընթացքում կամ ստվարացել ու բարգավաճել են՝ պահպանելով իրենց գոյությունը մինչև օրս, կամ՝ նոսրացել ու ընդհանրապես անհետացել:

Հայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներ են մեկնել անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ հանգամանքներից ելնելով: Սկզբում այն կրթական ու տնտեսական նախապայմաններից դրդված պանդուխտների (գլխավորապես՝ անռուրի երիտասարդներ, ուսանող, առևտրական, արհեստավոր, հողամշակ, գործավոր) ժամանակավոր բնույթ կրող տեղաշարժ էր, որը Օսմանյան կայսրությունում հայության նկատմամբ գործադրված պարբերական ջարդերի (1894-1896թթ., 1909թ.) և Հայոց ցեղասպանության (1915-1923թթ.) հետևանքով վեր է ածվել տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարից զրկված և հասարակական ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառող զանգվածային գաղթի՝ ընդգրկելով կայսրության ողջ հայաբնակ շրջանները:

XIX դ. առաջին կեսից Օսմանյան կայսրությունում Օտար Առաքելությունների Համամիսիոներական Ամերիկյան Խորհուրդի (American Board of Commissioners for Foreign Missions) Կ. Պոլսում հիմնած Հայկական Առաքելության (1831թ.) միջոցով հայերի շրջանում ամերիկյան բողոքական քարոզիչների ծավալած կրթալուսավորչական գործունեությունը սկզբնավորել է արևմտահայերի պանդխտությունը դեպի ԱՄՆ: Նրանց մեծ մասի համար ԱՄՆ-ը «կեանքի հանգրուան մը միայն եղած է, աշակերտութեան շրջան մը»,<sup>1</sup> որից հետո շատերը հիմնականում վերադարձել են հայրենի երկիր:

Սկզբում այն կրթական բնույթ կրող ուսանողների տեղա-

շարժ էր բնօրրանից, որը հետագայում՝ սկսած XIX դ. 50-ական թվականներից, ընդգրկել է նաև տնտեսական բարեկեցության հասնելու հեռանկարով պանդխտող արհեստավորների ու վաճառականների: Նրանց մեծ մասը շուտով վերադարձել է իր ծննդավայրը, իսկ ոմանք, ԱՄՆ-ում հանդիպելով բարենպաստ տնտեսական պայմանների, հաստատվել են այդտեղ և, չխզելով կապը հայրենի երկրի հետ, երբեմն առևտրական հարաբերություններ հաստատել, նյութական ու բարոյական օժանդակություն են ցուցաբերել հայրենակիցներին, ինչպես նաև՝ նպաստել իրենց բնօրրանների եկեղեցական, կրթական ու մշակութային կյանքի բարեկարգմանը: Այնպես որ, եթե 1850-1870թթ. ԱՄՆ-ում կար ավելի քան 55 հայ, ապա 1870-ական թվականների սկզբին նրանց թիվը հասել էր 70-ի:<sup>1</sup>

1876թ. Օսմանյան կայսրությունում սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալությամբ և 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով հայերի նկատմամբ սկսված հալածանքներն ու տնտեսական կյանքի անկումը, ինչպես նաև հայաբնակ խոշոր կենտրոններում ամերիկյան քարոզիչների հոգևոր ու տնտեսական գործունեության ծավալումը խթանել են հայերի հետագա արտահոսքը երկրի գրեթե բոլոր շրջաններից՝ ընդգրկելով ոչ միայն ուսանողների, արհեստավորների ու վաճառականների, այլև՝ ծանր հարկերի տակ կքած գյուղացիների և ունեզրկված գործավորների:<sup>2</sup>

XIX դ. 80-ական թվականներից Օսմանյան կայսրության գրեթե բոլոր խոշոր կենտրոններում ամերիկյան բողոքական քարոզիչների կրթալուսավորական գործունեության (եկեղեցիների, նախնական ու բարձրագույն դպրոցների, կոլեջների և մշակութային այլ օջախների ստեղծում) ծավալման ու

<sup>1</sup> Malcom, Vartan M. The Armenians in America. Boston, Chicago, 1919, p. 59. Tashjian, James H. The Armenians of the United States and Canada. Boston, 1947, p. 15. Մուշեղ Եպիսկոպոս, Աշխ., Ա տարի, 1912, էջ 26, 28, 33: Buxton, Noel, Buxton, Rev. Harold. Travel and Politics in Armenia. London, 1914, p. 220.

<sup>2</sup> Աշճեան Ա. Քինյ., Վիճակացոյց եւ պատմութիւն առաջնորդական թեմին Հայոց Ամերիկայի. 1948, Նիւ Եորք, 1949, էջ 17: Mirak, Robert. Tom Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1983, pp. 36, 40, 41:

<sup>1</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 30:

խորացման հետևանքով աճել է հայ, հիմնականում՝ ամուրի (95%), երիտասարդների արտահոսքը երկրի գրեթե բոլոր շրջաններից, գերազանցապես Խարբերդից (40%), քանի որ Խարբերդի հարթավայրը, որը կայսրությունում «ամենից հարուստ երկիրն էր և ամենից գրավիչ ու խոստումնալից քարոզչական տարածքը», 1852 թվականից սկսած դարձել էր արևելյան Թուրքիայում ամերիկյան քարոզիչների գործունեության կենտրոնատեղի, միաժամանակ այդտեղ էր գտնվում նաև 1878թ. հիմնված հանրահայտ Եփրատ կոլեջը, որը «լուսաւորութեան մեծ հաստատութիւն մը եղաւ տասնեակ տարիներով»:<sup>1</sup> Աշխատանք որոնող այդ նոր պանդուխտների առջև բացված տնտեսական բարենպաստ պայմանները, երբ մեկ օրում վաստակում էին այնքան, որքան օսմանյան կայսրությունում՝ մեկ ամսում կամ մեկ տարում, պատճառ են դարձել, որ նրանցից շատերը նույնպես հաստատվեին ԱՄՆ-ում:

1880-ական թվականների վերջից արդեն 1.500 հայ ունեցող ԱՄՆ-ը դարձել էր նաև քաղաքական ապաստան և գործունեության ազատ դաշտ նաև հայ հեղափոխական կուսակցական (ինչպե՛ս կյան, դաշնակցական) գործիչների համար:

Կրթական, տնտեսական և մասամբ քաղաքական դրդապատճառներով մեկնած վերոհիշյալ հայերի մեծ մասը, հիմնականում չունենալով ԱՄՆ-ում մշտական հաստատվելու մտադրություն, ձգտել են ժամանակավորապես աշխատելով և որոշակի նյութական կարողության տեր դառնալով, վերադառնալ հայրենի բնակավայրեր՝ բարելավելու իրենց ընտանիքների կյանքի պայմանները: Պանդուխտ հայերից շատերը, ԱՄՆ-ում հանդիպելով ազատությունների ու լայն հնարավորությունների, աստիճանաբար հաստատվել են Նոր Երկրում՝ նվազեցնելով հայրենիք վերադարձողների թիվը, ինչպես նաև իրենց հայրենակիցներին ուղարկած ոգևորիչ նամակներով և դրամական օգնությամբ նպաստել դեպի ԱՄՆ նորանոր հայերի տեղաշարժին:<sup>2</sup>

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 40: Մարտիրոսեան Լեւոն, Ամերիկահայութիւնը երէկ եւ այսօր, Պէյրուս, 1973, էջ 8:

<sup>2</sup> Ավագյան Քնարիկ, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924թ.), Երևան, 2000, էջ 17-26:

XIX դ. 90-ական թվականներից Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ գործադրված բռնությունների ու համիդյան կոտորածների (1894-1896թթ.) հետևանքով նախկինում դեպի ԱՄՆ հայերի իրականացրած անհատական արտահոսքը վեր է ածվել զանգվածային գաղթի: Ֆիզիկական բնաջնջման վտանգից խուսափող հայերի այդ տեղաշարժը ներառել է կայսրության ողջ հայաբնակ շրջանները՝ Խարբերդ, Սվազ, Էրզրում, Տրապիզոն, Բիթլիս, Կիլիկիա և այլն: Այնպես որ, եթե 1894թ. ԱՄՆ-ում կար շուրջ 3.000 հայ, ապա արդեն 1900թ. նրանց թիվը հասել է 15.000-20.000-ի:<sup>1</sup>

Նախքան 1908թ. երիտթուրքերի իրականացրած բարեփոխումները, Օսմանյան կայսրությունից հեռանալը լուրջ դժվարությունների հետ էր կապվում, քանի որ մինչև 1896թ. գաղթել հնարավոր էր բացառապես սուլթանի թույլատրությամբ, իսկ 1896թ. հոկտեմբերից՝ թուրքական հպատակությունից հրաժարվելու, երկրի հետ խաղաղ հարաբերություններ պահպանելու ու այլևս երբեք չվերադառնալու երաշխավորագրի ստորագրումից և Հայոց պատրիարքի կողմից այն հաստատվելուց հետո միայն: Արդեն 1899թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ը, չառարկելով գաղթականության դեմ, իր պատրաստակամությունն է հայտնել նույնիսկ վճարել կարիքավոր հայերի ճանապարհածախսը, պայմանով, որ նրանք չպիտի վերադառնային կայսրություն: Պատմական Հայաստանը հայաթափելու քաղաքականության հետ միասին դրանով, միաժամանակ, փորձ էր կատարվում երկիրը զերծ պահել ամերիկյան հպատակություն ստացած, հետևաբար և անձեռնմխելիությամբ օժտված հայ ազգային գործիչների ներթափանցումից:<sup>2</sup>

1908թ. Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի իշխանության գալով և նրանց կողմից «դեմոկրատական ազատությունների» հռչակումով նվազել, սակայն չի դադարել հայերի գաղթն ԱՄՆ: Միաժամանակ, արձագանքելով 1908թ. երիտթուր-

<sup>1</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 65, 66: Antreassian, Jack. The Armenians in America: A Personal Viewpoint (Richard Hovannisian, ed. The Armenian Image in History and Literature. Malibu, 1981, p. 255). Մանկունի Նազարեթ Լ., Ամերիկահայ մարդահամարը (Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 20-րդ տարի, Վենետիկ, 1926, էջ 585):

<sup>2</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 61:

քական Սահմանադրության նկատմամբ հույսեր տածող Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության մի խումբ գործիչների «Դեպի Երկիր» կոչին, հարյուրավոր ամերիկաբնակ հայեր, վաճառելով իրենց ունեցվածքը, վերադարձել են հայրենի բնակավայրեր: Այսպես՝ 1908-1914թթ. ծննդավայր էր վերադարձել 4.500 հայ: Նրանց մեծ մասը որոշակի արհեստ չունեցողներ էին ու մեծահասակներ: Երիտասարդները հիմնականում չեն խրախուսել այդ հետդարձը:<sup>1</sup>

Այդուհանդերձ, քիչ չէին նաև նրանք, ովքեր, չվստահելով այդ ամենին և օգտվելով ընձեռված հնարավորություններից, երբ վերացվել էին ճանապարհորդության արգելքներն ու նվազել անցագրերի («թեսքերե» - թուրք.) բարձր վճարումները, շարունակում էին հեռանալ օտար ափեր՝ այժմ արդեն ամբողջ ընտանիքներով ու գերդաստաններով: Եթե մինչև 1908թ. Օսմանյան կայսրությունից գաղթել են հիմնականում գյուղացիները և ոչ հմուտ աշխատավորները, ապա տվյալ դեպքում, տնտեսական դրդապատճառներից ելնելով, հեռացել են նաև հմուտ արհեստավորները, ուսանողներն ու արհեստավարժները: Մեկնում էին նաև երիտասարդ կանայք՝ հիմնականում ամուսնանալու նպատակով. քչերն էին գնում ընտանիքների հետ վերամիավորվելու:<sup>2</sup>

1909թ. Ադանայում երիտթուրքերի կողմից իրականացված զարհուրելի ջարդերն ի դերև են արել իրենց «դեմոկրատական» հռչակած իշխանությունների նկատմամբ հայության փախկայած հույսերը՝ նրանց մղելով դեպի անծանոթ հորիզոններ: Թեև ջարդերը տեղի էին ունեցել Կիլիկիայում, հայերը հեռանում էին կայսրության հայաբնակ գրեթե բոլոր շրջաններից, քանի որ այդ վայրերում ևս ցանկացած պահին նույնպիսի իրավիճակում հայտնվելու սարսափը չափազանց մեծ էր:

Ընդհանուր առմամբ, 1899-1914թթ. ԱՄՆ գաղթած հայերի թիվը կազմել է 51.950 մարդ, ընդ որում գերակշռել են ընտանիքները հայրենիքում թողածները՝ 50% և ամուրիները՝ 37%,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 140: Ավագյան Բ., նշվ. աշխ., էջ 29-31:

<sup>2</sup> The Armenians in Massachusetts. Boston, 1937, p. 32. Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 79:

իսկ ընտանիքով մեկնածները՝ 13%:<sup>1</sup>

Մինչև 1911թ. հայերն Օսմանյան կայսրությունից ԱՄՆ են մեկնել որոշակի շրջաններից. արևմտահայկական տարածքներից գաղթողները՝ Սև ծովի գլխավոր Սամսուն նավահանգստից, իսկ կիլիկյան տարածքից գաղթողները՝ միջերկրածովյան Ալեքսանդրետ և Բեյրութ նավահանգստային քաղաքներից: Հետագա տարիներին համեմատաբար թույլ ստուգման ենթակա այդ վերջին երկու կայաններով Ամերիկա են մեկնել նաև թուրքական ոստիկաններից փախուստ տվող շատ հայեր: Գաղթական հայերը դեպի այդ նավահանգիստներն են դիմել թե՛ ուղքով և թե՛ քարավանային կառաչարերով:

1911-1912թթ. իտալաթուրքական և 1912-1913թթ. բալկանյան պատերազմների և հատկապես դրանց հաջորդող Առաջին աշխարհամարտի (1914-1918թթ.) տարիներին գաղթականության նկատմամբ Օսմանյան կայսրությունում վերականգնված արգելքի հետևանքով քիչ թվով հայերի է հաջողվել արտագաղթել ԱՄՆ, արդյունքում, մեծացել է փախստական ճանապարհով կամ ամերիկյան հպատակություն ունեցող ազգականների օգնությամբ մեկնողների թիվը: Ընդհանուր առմամբ, եթե միայն 1914թ. ԱՄՆ էր գաղթել 7.785 հայ, ապա հետագա տարիներին նրանց թիվը կտրուկ կերպով նվազել է՝ 1915-1919թթ. կազմելով ընդամենը 3.620 մարդ, որոնք հիմնականում Հայոց ցեղասպանությունից վերապրածներ էին՝ հարազատներին կորցրած, մասնատված ընտանիքներ, որբեր: Արդեն պատերազմի ավարտին ԱՄՆ-ում կար շուրջ 78.000 հայ:<sup>2</sup>

Պատերազմի ավարտից և Մուդրոսի զինադադարից հետո (1918թ.) Օսմանյան կայսրությունում սկսված քեմալական շարժման վերելքը (1919-1921թթ.), որն ուղեկցվում էր թուրքիան քրիստոնյա ազգերից, այդ թվում նաև հայերից վերջնականապես մաքրագործելու նպատակով կազմակերպված շարունա-

<sup>1</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 65: Mirak, Robert. Outside the Homeland. Writing the History of the Armenian Diaspora (Recent Studies in Modern Armenian History. Cambridge, 1972, p. 120) Արշալոյս պատկերազարդ տարեգիրք, պատրաստեց Ա.Մելիքեան, Գ տարի, Ֆրեզնո, 1922, էջ 47:

<sup>2</sup> The Armenians in Massachusetts, էջ 32: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 65: Մանկունի Լ. Լ., նշվ. աշխ., էջ 585:

կական ջարդերով, ինչպես նաև Անդրկովկասում Հայաստանի Առաջին Հանրապետության անկումը (1918-1920թթ.), նոր թափ են հաղորդել դեպի ԱՄՆ իրականացվող հայ գաղթականությանը՝ 1920թ. կազմելով 2.762, իսկ 1921թ.՝ արդեն 10.212 մարդ: Վերջինս ամենից բարձր ցուցանիշն էր նախորդ բոլոր տարիների համեմատությամբ:<sup>1</sup>

Եթե մինչև 1919թ. ԱՄՆ գաղթած հայերի զգալի մասը՝ շուրջ 76%-ը, տղամարդիկ էին և միայն 24%-ը՝ կանայք, ապա 1921 թվականից ընդհակառակը՝ աճել էր կանանց թիվը, որոնք մեծ մասամբ պարբերական ջարդերի հետևանքով այրիացածներ էին, և նվազել՝ տղամարդկանցը: Գաղթողները հիմնականում 16-45 տարեկան էին և մեկնել էին ընտանիքների հետ վերամիավորվելու նպատակով: 45 տարեկանից բարձր տարիք ունեցող գաղթականների թիվը համեմատաբար փոքր տոկոս է կազմել, ինչը գաղթելու հետ կապված դժվարությունների հետևանք էր: Կանայք կազմել են 52%, տղամարդիկ՝ 27%, երեխաները՝ 21%: Նրանց թվում էին նաև հայկական և ամերիկյան բարեգործական կազմակերպությունների, ինչպես նաև արևմտյան քարոզիչների կողմից թուրքական հարեմներից, ոչ քրիստոնյա ընտանիքներից, ճամբարներից ու որբանոցներից հավաքագրված հայերը: 1917-1924թթ. ԱՄՆ էր գաղթել պարբերական ջարդերի հետևանքով այրիացած 1.507 հայ:<sup>2</sup>

1914-1924թթ. ԱՄՆ է գաղթել 32.064 հայ՝ 1924թ. ԱՄՆ-ում բնակվող հայության ընդհանուր թիվը կազմելով ավելի քան 125.000:<sup>3</sup> Արդեն 1923թ. ամերիկահայերի 90%-ը տեղաբաշխված էր հետևյալ 10 նահանգներում՝ Նյու Յորքում, Մասսաչուսեթսում, Ռոդ Այլենդում, Իլինոյսում, Կալիֆոռնիայում, Միչիգանում, Փենսիլվանիայում, Նյու Ջերսիում, Կոնեկտիկուտում, Ուիսկոնսինում: Այս նահանգների առավել հայաշատ քաղաք-

ներն էին՝ Նյու Յորքը, Բոստոնը, Ֆրեզնոն, Դետրոյտը, Փրովիդենսը, Ուստր, Ֆիլադելֆիան, Չիկագոն, Թրոյը:<sup>1</sup>

ԱՄՆ-ը հանգրվան է դարձել նաև ռուսական կայսրությունից եկած բազմաթիվ հայերի համար: XX դարի սկզբին դեպի ԱՄՆ արևելահայ պանդխտության նախակարապետները Շիրակի դաշտավայրից էին: Չգալի թվով հայեր են մեկնել նաև Ալեքսանդրապոլից և հարակից Դուզքենդ, Ղազարաբադ, Սիվանի-րիլ, Աղզուլու և այլ գյուղերից: Այն սկզբում ներառել է 18-35 տարեկան երիտասարդների, ապա նաև՝ բարձր տարիքի հայերի: Թողնելով իրենց ընտանիքները՝ նրանք 2-3 տարով հեռանում էին աշխատելու, որպեսզի որոշակի դրամ վաստակելուց հետո վերադառնային ու բարվոքեին իրենց և հարազատների տնտեսական վիճակը: Մեծ մասամբ չարքաշ աշխատավորներից և աղքատ գյուղացիներից բաղկացած արևելահայ պանդուխտների կողքին որոշ թիվ էին կազմում նաև կրթվածները:<sup>2</sup> XX դ. սկզբին Ռուսական կայսրությունում և Կովկասում տիրող տնտեսական ու քաղաքական ճգնաժամն ընդլայնել է արևելահայերի տեղաշարժը դեպի օտար ափեր՝ ներառելով նաև Իգդիրից, Կողբից, Թիֆլիսից, Ղարաբաղից, Երևանից և այլ վայրերից ելած հայերի: Նրանք բնակություն են հաստատել հիմնականում ԱՄՆ-ի արևմտյան ափին՝ Կալիֆոռնիայի նահանգի Լոս Անջելես քաղաքում: Արևելահայերի հոսքն Ամերիկա առավել մեծ չափերի է հասել հատկապես 1908 թվականից սկսած և նվազել՝ կապված Առաջին աշխարհամարտի սկսվելու հետ:<sup>3</sup>

Արևելահայ պանդուխտներն ԱՄՆ մեկնելու նպատակով շոգեկառքով հասնում էին սևծովյան Բաթում կամ Բալթիկ ծովի Ռիգա և Լիեպայա նավահանգստային քաղաքներ, ուր տեղավորվում էին հատուկ հատկացված պանդուխտներում՝ փոխադրվելու համար սպասելով ԱՄՆ-ի իրենց հարազատների ու բարեկամների օգնությանը:<sup>4</sup>

Ի տարբերություն արևմտահայերի, արևելահայերի հոսքը դեպի ԱՄՆ, մեծ չափերի չի հասել, ինչը բացատրվում էր Ռու-

<sup>1</sup> Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 585:

<sup>2</sup> Նույն տեղում: Minasian, Edward. The Armenian Immigrant Tide. From the Great War to the Great Depression (Recent Studies in Modern Armenian History. Cambridge, 1972, pp. 111, 112). Mirak, Robert. Armenians (Harvard Encyclopedia of American Ethnic Groups. S. Thernstrom, ed., Cambridge. London, 1981, p. 139).

<sup>3</sup> Minasian, Ed., նշվ. աշխ., էջ 107-108: Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 585: Mirak, R., նշվ. աշխ., 1981, էջ 139:

<sup>1</sup> Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 583:

<sup>2</sup> Գալօեան Սիրական, Շիրակի հայերի գաղթը դեպի Ամերիկա, Լոս Անջելես, 1950, էջ 65, 70, 76, 77: «Ասպարեզ», 27.6.1913:

<sup>3</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 58: Գալօեան Ա., նշվ. աշխ., էջ 101:

<sup>4</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 60: Գալօեան Ա., նշվ. աշխ., էջ 78, 79:

սական կայսրությունում առկա ազգային նվազ հալածանքներով ու տնտեսական համեմատաբար բարվոք վիճակով: Այսպես՝ 1900-1905 թթ. ԱՄՆ էր մեկնել 50, 1905-1910թթ.՝ շուրջ 300, 1910-1913թթ.՝ 1.200 արևելահայ՝ մինչև Առաջին աշխարհամարտ ԱՄՆ մուտք գործած ռուսահայերի ամբողջ թիվը կազմելով ոչ ավելի քան 2.500 մարդ: Այդ հոսքը նվազել է պատերազմի տարիներին և չնչին չափով ավելացել ռուսական պետությունում 1917թ. ստեղծված քաղաքական խառնաշփոթ իրավիճակի հետևանքով: Այսպես՝ արդեն 1920-1924թթ. ԱՄՆ գաղթած ամբողջ 20.659 հայերից ընդամենը 168-ն էին եկել Ռուսաստանից:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի գաղթականության գրասենյակի տվյալներով, 1899-1924թթ. Ռուսական կայսրությունից ԱՄՆ էր մեկնել ավելի քան 3.500 հայ:<sup>1</sup>

Առաջին համաշխարհային պատերազմից հետո միջազգային առաքարեզում ստեղծված քաղաքական նոր հարաբերությունների հետևանքով ամերիկյան գաղթականական օրենքները վերսնայվել են. 1924թ. ընդունված Ազգային ծագումների քվոտայի օրենքով (National Origins Quota) խիստ սահմանափակվել է նաև ԱՄՆ մուտք գործելու թույլատրություն ստացող հայերի թիվը:

Առաջին աշխարհամարտի հետևանքով Օսմանյան կայսրությունում և ցարական Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն ու ճգնաժամային իրավիճակը, ինչպես նաև դաշնակից տերությունների նկատմամբ հայերի ունեցած հավատի կորուստը ի չիք են դարձրել ԱՄՆ գաղթած, սակայն հայրենիք վերադառնալու հույսը դեռևս իրենց հոգու խորքում անթեղած բազմահազար հայերի երազանքը՝ նրանց ամրացնելով որդեգրած նոր երկրին:

1920թ. Հայաստանի խորհրդայնացումով երկրում ստեղծված գաղափարաքաղաքական, ինչպես նաև՝ սոցիալ-տնտեսական որակապես նոր հարաբերությունները և դրանց շուրջ Սփյուռքում սկիզբ առած հակաքարոզչությունը առժամանակ առկախել են Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենի

բնակավայրերից բռնագաղթված և օտարության մեջ դեգերող հայության զգալի մասի ազգահավաքումը հայրենի հողում՝ հարկադրելով նրանց շարունակել ապաստան փնտրել օտար ափերում: Բացի այդ, Կիլիկիայի պարպումից հետո (1921թ.) և, ի շարս արևմտաեվրոպական (Ֆրանսիա, Հունաստան) և Հարավային Ամերիկայի (Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ) որոշ երկրների, Ամերիկայի Միացյալ Նահանգները նորից ապաստան է դարձել 1920-1930-ական թվականներին Կիլիկիայից, Հունաստանից, Մերձավոր և Միջին Արևելքից ու այլ վայրերից գաղթող հայության համար:<sup>1</sup>

Ամերիկյան գաղթականական հանձնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, 1925-1933թթ. ԱՄՆ էր մուտք գործել 7.286, իսկ 1925-1943թթ.՝ 7.706 հայ, ընդ որում, նրանց գերակշիռ մասը՝ 6.167-ը, գաղթականի կարգավիճակով: Համաձայն Ամերիկյան մարդահամարի տվյալների, 1930թ. հայերը հիմնականում կենտրոնացած էին Մասսաչուսեթսի, Կալիֆոռնիայի, Ռոդ Այլենդի, Կոնեկտիկուտի նահանգներում, իսկ ժամանակի հայաշատ քաղաքներն էին՝ Դետրոյտը, Լոս Անջելեսը, Փրովիդենսը, Բոստոնը, Ուստորը, Ֆրեզնոն, Սան Ֆրանցիսկոն և այլն: Արդեն երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին ԱՄՆ-ում բնակվում էր շուրջ 200.000 հայ:<sup>2</sup>

Չանգվածային հայրենադարձության տարիներին՝ 1947-1948թթ., Հայաստան է ներգաղթել ընդամենը 151 ամերիկահայ:<sup>3</sup> Խորհրդային հասարակարգում քաղաքական, ընկերային և տնտեսական բնույթի դժվարությունները սահմանափակել են ամերիկահայերի հետագա հայրենադարձությունը:

Չանգվածային հայրենադարձությանն ի հակակշիռ՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դեպի Միացյալ Նահանգներ հայերի գաղթի նոր ալիք է սկսվել ի հետևանս

<sup>1</sup> Փիրումյան Ռուբինա, Ավագյան Քնարիկ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ), «Հայ Սփյուռք Հանրագիտարան», Երևան, 2003, էջ 36-37:

<sup>2</sup> Mahakian, Charles. History of Armenians in California. A Thesis. California, 1935. pp. 7-8, 10. Harvard Encyclopedia of American Ethnic Groups. S. Thernstrom, ed., Cambridge, London, 1981, p. 1037. Փիրումյան Ռ., Ավագյան Ք., նշվ. աշխ., էջ 36-37:

<sup>3</sup> Atamian, Sarkis. The Armenian Community. New York, 1955, p. 411.

<sup>1</sup> «Ասպարեզ», 27.6.1913: Mirak, R., նշվ. աշխ., 1981, էջ 139: Minasian, Ed., նշվ. աշխ., էջ 111. Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., էջ 586:

1948թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից հաստատված «Տեղահանված մարդկանց մասին» (Displaced Persons' Act) օրենքի: Հայերի շրջանում այդ օրենքը գործադրելու նպատակով ստեղծվել է «Հայրենագուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտեն» - ԱՆՉԱ (American National Committee to Aid Homeless Armenians - ANCHA, նախագահ՝ Ջորջ Մարտիկյան, փոխնախագահ՝ Սուրեն Սարոյան, Հայկ Շեքերջյան), որը պաշտոնապես մինչև 1952թ. (սակայն հետագա տասնամյակներում ևս) իրականացրել է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում հայտնված ավելի քան 4.500 ռազմագերի-տարագրյալ հայերի փոխադրումն ու բնակեցումը ԱՄՆ-ում (Նյու Յորքի Նյու Ջերսիի, Փենսիլվանիայի, Մասսաչուսեթսի, Ռոդ Այլենդի, Կոնեկտիկուտի, Միչիգանի, Իլինոյսի, Օհայոյի, Ուիսկոնսինի, Կալիֆոռնիայի և այլ նահանգներում): 1944-1952թթ. ԱՄՆ է մուտք գործել 4.379 հայ, մինչ դեռ՝ 1947թ. տվյալներով ԱՄՆ-ում բնակվում էր 215.000 հայ:<sup>1</sup>

Հետպատերազմյան տարիներին շարունակվել է հայերի արտահոսքը ԱՄՆ ինչպես արևմտյան (Ֆրանսիա), այնպես էլ՝ արևելյան (Բուլղարիա) ու հարավային Եվրոպայից:

Հայերի հոսքը ԱՄՆ նոր թափ է ստացել 1950-ական թթ. և որոշ ընդհատումներով շարունակվում է ցայսօր: 1952թ.-ից՝ Եգիպտոսից, 1958-1961թթ.՝ Սիրիայից, 1960թ.-ից՝ Խորհրդային Հայաստանից, 1960-ական թթ. կեսից՝ Թուրքիայից, Հունաստանից, 1960-ական թթ. վերջից՝ Լիբանանից, 1979թ.-ից՝ Իրանից, ապա՝ Հորդանանից և Իրաքից դեպի ԱՄՆ տեղ գտած արտագաղթերը հետևանք էին վերոհիշյալ երկրներում սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայուն գործընթացների: 1965թ. ԱՄՆ-ում բնակվում էր 300.000 հայ: Նույն թվականին ԱՄՆ-ում ընդունված Գաղթականական օրենքով (Immigration Act) վերացվել են ներգաղթի նկատմամբ նախկինում գործող և 1952թ. Գաղթականական և ազգության օրենքով (Immigration

and Nationality Act) խստացված սահմանափակումները՝ խթանելով աշխարհի տարբեր կողմերից (հատկապես՝ Մերձավոր և Միջին Արևելքից, Խորհրդային Հայաստանից) շուրջ 2.000 հայերի ներհոսքը ԱՄՆ:<sup>1</sup>

Արդեն 1970-1972թթ. ԱՄՆ-ում բնակվում էր շուրջ 450.000-500.000 հայ: Նրանք հիմնականում տեղաբաշխված էին Միջին-Ատլանտյան (Նյու Յորք, Նյու Ջերսի, Փենսիլվանիա, Կոլումբիայի տարածաշրջան, Վիրջինիա), Նոր Անգլիայի (Մասսաչուսեթս, Ռոդ Այլենդ, Քոնեքթիքուտ, Նյու Հեմփշիր), Միջին-արևմտյան (Ուիսկոնսին), Արևմտյան (Կալիֆոռնիա), Հարավ-արևելյան (Ֆլորիդա) շրջանների նահանգներում:<sup>2</sup> Հայաշատ քաղաքներից էին՝ Նյու Յորքը, Լոս Անջելեսը, Դետրոյտը, Բոստոնը, Չիկագոն, Ֆիլադելֆիան, Ֆրեզնոն, Սան Ֆրանցիսկոն, Փրովիդենսը, որոնցում կենտրոնացած էր հայության գրեթե կեսը:

ԱՄՆ-ի գաղթականական օրենքների ազատականացման և 1975թ. ԽՍՀՄ-ի կողմից Հելսինկիում ստորագրված Եվրոպայի անվտանգության և համագործակցության պայմանագրով «Ընտանիքների վերամիավորման նպատակով» նաև Սովետական Հայաստանից արտագաղթի նկատմամբ արգելքների մեղմացման պայմաններում զգալի չափով ստվարացել է հայերի արտահոսքը Միացյալ Նահանգներ:

Արդեն 1960-1970-ական թթ. նորից ԱՆՉԱ-ի միջոցով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից (հատկապես՝ 1956թ. Սուեզի միջադեպի և 1975-1976 թթ. լիբանանյան քաղաքացիական պատերազմի ժամանակ), ինչպես նաև՝ Խորհրդային Հայաստանից 18.500 հայ է արտագաղթել ԱՄՆ, ընդ որում՝ 512 ընտանիք տեղավորվել է Կալիֆոռնիայի նահանգի Լոս Անջելես քաղաքում: Ժամանակի ընթացքում Կալիֆոռնիայի նահանգը և մասնավորապես Լոս Անջելես քաղաքը վերածվել են ԱՄՆ արտագաղթող հայության կենտրոնատեղիի: Միայն 1979թ.

<sup>1</sup> Wertsman, Vladimir. The Armenians in America. 1618-1976. A Chronology & Fact Book. New York, 1978, p. 15. Mirak, R. Armenians (Harvard Encyclopedia of American Ethnic Groups. S. Thernstrom, ed., Cambridge, London, 1981, p. 140). Avakian, Ara S. The Armenians in America. Minneapolis, 1977, p. 47. Խաթանասեան Երուանդ, Հայոց թիւը, Պոսթոն, 1965, էջ 28: US Immigration Policy. Durham, 1984, pp. 45-46.

<sup>2</sup> Avakian, A. S., նշվ. աշխ., էջ 49:

<sup>1</sup> Mahakian, Ch., նշվ. աշխ., էջ 7-8: Barsumian, N. Stowaway to Heaven. Ohio, 1961, p. 151. Մարտիկեան ճորճ, Երզն Ամերիկայի, Պէյրուք, 1957, էջ 351, 352: Harvard Encyclopedia of American Ethnic Groups. S. Thernstrom, ed. Cambridge, London, 1981, p. 1037. Tashjian, J. H. The Armenians of the United States and Canada. Boston, 1947, pp. 20-25.



խորհրդային Հայաստանից ԱՄՆ մեկնելու այցագրեր (վիզա) են հանձնվել շուրջ 7.000 հայերի, որից 3.200-ը արտագաղթել է Լոս Անջելես (1980թ. տեղի հայ բնակչության աճը կազմել է 50%): 1985թ. ԱՄՆ-ում բնակվում էր 600.000-800.000 հայ: Նրանք հիմնականում տեղաբաշխված էին Կալիֆոռնիայի, Մասսաչուսեթսի, Նյու Յորքի, Նյու Ջերսիի, Ռոդ Այլենդի, Իլլինոյսի, Միչիգանի նահանգներում:<sup>1</sup>

1985թ. ԽՍՀՄ-ում սկսված արմատական գործընթացները, 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը, ապա՝ 1991թ. Հայաստանի անկախացմանը հաջորդած սոցիալ-տնտեսական կյանքի անկումն ու քաղաքական անկայուն վիճակը աննախադեպ մեծ չափերի են հասցրել հետագա տարիներին երկրից հայերի արտագաղթը ԱՄՆ:

Ներկայումս Հայաստանից արտագաղթածները ներթնիկ որակական նոր շերտ են ստեղծել նախկինում մեծ մասամբ օտար երկրներից ԱՄՆ-ում հաստատված և ավելի քան հարյուր տարվա ընթացքում կազմակերպված բնույթ ստացած ամերիկահայության ներհամայնքային կյանքի դասական նկարագրի կողքին:

### ***Ամերիկահայերի կապը բնօրրանի հետ.***

Ամերիկահայերի կապը բնօրրանի հետ մշտապես եղել է անկապտելի: Առաջին աշխարհամարտի հենց սկզբից ամերիկահայ ազգային գործիչների ջանքերով հնարավոր է դարձել հայրենի երկրի ու ժողովրդի համար ճակատագրական պահին առանձին միավորումներով համախմբել ընդհանուր առմամբ միասնական գործելու պատրաստակամություն դրսևորած տեղի ազգային, հասարակական, քաղաքական կազմակերպությունների գործունեությունը՝ մասնակցելով ինչպես բնօրրանում ծավալված կամավորական շարժումներին, բազմափուլ կարողությամբ հայրենակիցներին ու գաղթականներին սատարելուն, այնպես էլ Եվրոպայում և ԱՄՆ-ում Հայ Դատի պաշտպանությունը հետամտող քաղաքական, դիվանագիտական, ռազմական և այլ բնույթի ծեռնարկներին: Այդ նպատակով կազմակերպված ամերիկահայ միջկուսակցական և ազգային մարմին-

ներից էին՝ Միջկուսակցական խորհրդատուները (1914թ., նույն-բեր, Բոստոն), որը շուտով վերանվանվել է Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախմբի (ԱՊԱՀ), Ազգային շահերի պաշտպանության միությունը (ԱՇՊՄ) (1915թ., Նյու Յորք), և այդ երկուսի միավորումից կազմավորված Ազգային պաշտպանության Ամերիկայի միությունը (ԱՊԱՄ) (1915թ.), ԱՄՆ-ում Փարիզի Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցչական մարմինը՝ Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ) (1917թ., մարտ, Բոստոն, ատենապետ՝ Միհրան Սվազլյան), որը հիմնել է ինչպես Հայ ազգային միության Հանրակա-նության գրասենյակը (1918թ., Նյու Յորք, հետագայում վերանվանվել է Մամլո գրասենյակ), նույնպես և ավելի ուշ՝ Հանրականության կոմիտեն, որոնք նույնպես գործում էին Փարիզի ազգային պատվիրակության հետ համատեղ:<sup>1</sup>

Ամերիկահայերը զինվորական, զինական, ռազմամթերային և նյութական զգալի կարողությամբ իրենց անմնացորդ մասնակցությունն են ունեցել թե՛ Կովկասում և թե՛ Սիրիայում ու Կիլիկիայում հայկական կամավորական զորամիավորումների ծավալած ռազմական գործողություններին: Այսպես, ամերիկահայությունը ռուսական ռազմական հրամանատարության ներքո գործող կովկասյան կամավորական շարժումը 1915-1917թթ. տրամադրել էր շուրջ 342.000 դոլար, ԱՄՆ-ի ՀՅԴ կուսակցու-թյունը միայն երկու ամիսների ընթացքում Կովկաս էր առաքել 800 կամավորներ, ֆրանսիական ռազմական հրամանատարու-թյան ներքո կազմված «Արևելյան Լեգեոնում» մարտնչելու հա-մար 1917թ. կամավորագրված 5.000 ամերիկահայերից անդա-մակցելու հնարավորություն էր ընձեռվել ընդամենը 1.172-ին:<sup>2</sup>

<sup>1</sup> Ավագյան Զ., նշվ. աշխ., 2000, էջ 110-111: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917-1921թթ., Պոստոն, 1922, էջ 8, 9, 10, 11, 12: Հայկ Վահե, Խարբերդ եւ անոր ոսկեդէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 994: The Armenians in Massachusetts, էջ 52: Թեոդիկ, Ամնուն տարե-ցոյցը, ԺՁ տարի, Կ. Պօլիս, 1922, էջ 283, 286: Երզնէճեան Մանուկ Գ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրեզնօ, 1930, էջ 202: Սահմանադրութիւն եւ կանոնադրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, Պօսթօն, 1917, էջ 2, 19, 20:

<sup>2</sup> Համառօտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունեութեան. 1915-1917թթ., Թիֆլիս, ա.Ճ., էջ 7: Լազեան Գաբրիէլ, Հայաստան եւ 29

<sup>1</sup> Փիրումյան Ռ., Ավագյան Զ., նշվ. աշխ., էջ 61: Wertsman, V., նշվ. աշխ., էջ 27: Antreassian, J., նշվ. աշխ., էջ 255:



Ամերիկահայության գործուն ջանքերի շնորհիվ 1916թ. հոկտեմբերի 21-22-ը ԱՄՆ-ի նախագահի ու Կոնգրեսի որոշմամբ երկրով մեկ հայտարարվել է «Հայոց օր», և, ի պաշտպանություն Հայ դատի, շուրջ 400 քաղաքներում կազմակերպվել են Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները դատապարտող հավաքներ, բողոքի ելույթներ ու ցույցեր, ինչպես նաև հայօգուտ բազմաթիվ միջոցառումներ, հանգանակություններ և այլն: Ամերիկյան ժողովուրդն իր սրտակցությունն ու համերաշխությունն է արտահայտել թուրքական բռնապետությունում հետապնդվող ու հալածվող քրիստոնյա ազգություններին և նրանց ի նպաստ նվիրաբերել ավելի քան 30 մլն դոլար: Շուտով կազմակերպվել է Հայաստանի ամերիկացի բարեկամների Հայաստան-Ամերիկա ընկերությունը (նախագահ՝ Ֆիլադելֆիայի հայտնի իրավաբան, հայասեր Ուոլթեր Ջորջ Սմիթ), որը հայկական հանձնախմբի խորհրդատվությամբ, մինչև Լոզանի վեհաժողովը, ամերիկյան հասարակության և կառավարության շրջանում իրականացրել է Հայ Դատին ի նպաստ ձեռնարկներ:<sup>1</sup>

Ամերիկայի հայ ազգային միությունը ԱՄՆ-ում գործող իր 187 մասնաճյուղերով երկրի ողջ հայության հետ միասին իր գործուն մասնակցությունն է ունեցել Կիլիկիայի ազատագրման նպատակով կազմակերպված կամավորական շարժմանն ու դրան հաջորդող խնդիրների իրականացմանը, 1918թ. մարտին ձեռնակված 1 մլն դոլարի հանգանակությանը, իսկ 1919թ. փետրվարի 1-ին գաղութի պատմության մեջ առաջին անգամ իրականացրել ազգային նակարդակի ընտրություններ՝ պատերազմի ավարտից հետո Փարիզում գումարվելիք Համազգային ժողովին ներկայացնելով չորս պատգամավորների, ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի հետ օգնել եղեռնից վերապրած հայ որբերին ու կարոտյալներին, աջակցել ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Բաջազյանին կողմից ի նպաստ հայոց բանակի ԱՄՆ-ում կազմակերպված հանգանակիչ առաքելությանը, ինչպես նաև՝ Փարիզի Ազգային խորհրդի

նախագահ Պողոս Լուբարի հանձնարարությամբ 1919թ. նոյեմբերի վերջին Ջորավար Անդրանիկի և հրամանատար Հակոբ Բոնապարտյանի կողմից ԱՄՆ-ում կազմակերպված Ազգային փրկության հանգանակությանը:<sup>1</sup>

Ամերիկայի հայ ազգային միությունը ԱՄՆ-ի, ինչպես նաև եվրոպական երկրների անտեղյակ հասարակայնությանը Հայաստանն ու հայերին ներկայացնելու նպատակով հրատարակել ու տարածել է քաղաքական, պատմական ու գեղարվեստական բնույթի մի շարք աշխատություններ:

ԱՄՆ-ի ղեկավարության ու կոնգրեսականների շրջանում Ամերիկայի հայ ազգային միության ծավալած հայանպաստ գործունեությունը շուտով տվել է իր շոշափելի արդյունքները: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Ուիլսոնը Հայաստանի Հանրապետությունն է առաքել գեներալ Ջեյմս Հարբորդի ղեկավարությամբ քննիչ հանձնախումբ՝ տեղում ուսումնասիրելու հայերի տեղահանումներն ու կոտորածները, ինչպես նաև Հայաստանի նորահաստատյալ պետությանը տնտեսական օգնություն ցույց տալու առաջնահերթ հարցերը, իսկ Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովը (նախագահ՝ Ուորդեն Հարդինգ) 1918թ. սեպտեմբերի 29-ին և հոկտեմբերի 2-ին ու 10-ին ունկնդրության էր դրել հայ ներկայացուցիչների և հայասեր ամերիկացիների Հայոց հարցին առնչվող հաղորդումները:<sup>2</sup>

Ամերիկահայ գաղութի և Հայ ազգային միության կազմակերպված ջանքերի շնորհիվ 1919թ. հունվարին 60 հայասեր ամերիկացիների համախմբումով ստեղծվել է Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն (նախագահ՝ Ջեյմս Ջերարդ) երկրի հասարակական ու քաղաքական ոլորտներում հայերի նկատմամբ համակրանք ձևավորելու և ԱՄՆ-ին ճանաչել տալու Հայաստանի լիակատար անկախության իրավունքը:<sup>3</sup> Եվ կամ՝ 1919թ. մարտին ամերիկյան առաջավոր հասարակայնության 15.300 ներկայացուցիչներ (հոգևորականներ, նահանգների կառավարիչներ, կոլեջների ու համալսարանների նախագահ-

Հայ Դատը (վաերագրեր), Գահիրե, 1946, էջ 188: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 27:  
<sup>1</sup> Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 994: Թեոդիկ, նշվ. աշխ., 1922, էջ 284: Ծիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 372:

<sup>1</sup> Ծիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 360, 366-367, 368, 417-419:  
<sup>2</sup> Ծիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 372, 373:  
<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության Ազգային Արխիվ (ՀՀ ԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 8ա-8բ:

ներ) խնդրագիր են ներկայացրել ԱՄՆ-ի նախագահին՝ փութացնելու Ազատ Հայաստան ստեղծելու ուղղությամբ Փարիզի խաղաղության ժողովում վերջինիս ձեռնարկելիք ջանքերը և դրանք վերածելու գործուն քայլերի:<sup>1</sup>

Միությունը քաջալերել ու նյութապես օգնել է նաև 1919թ. նոյեմբերին կազմավորված Ամերիկահայ տիկնանց միությանը, որը ամերիկացի քվեատու կանանց և բարձրաստիճան պաշտոնյաներին լուսաբանել է Հայ դատը՝ փորձելով նրանց միջոցով ազդել Կոնգրեսի վրա՝ վավերացնելու հայանպաստ որոշումները:<sup>2</sup>

Առաջին աշխարհամարտից հետո Ամերիկայի հայ ազգային միությունն ԱՄՆ-ի և եվրոպական պաշտոնատարների կողմից ճանաչում ստացած անցագիր-վկայականներ է տրամադրել դեպի հայրենիք մեկնող իր հայրենակիցներին: Իր գոյության հինգ տարիների ընթացքում միության դրամազուլիսը կազմել է շուրջ 930.000 դոլար: Հեռատես քաղաքական գործիչ և հմուտ դիվանագետ Միհրան Սվազյանի կողմից ղեկավարվող Ամերիկայի հայ ազգային միությունն իր հետամտած հայանպաստ լուրջ խնդիրների իրականացումը համազգային, մինչև անգամ միջազգային ու հատկապես ամերիկյան կառավարական ու հասարակական մակարդակներով կազմակերպելու կարողությունների համար ԱՄՆ-ի պաշտոնական խավերի կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում:<sup>3</sup>

Ամերիկահայ բազմաթիվ ու բազմաբնույթ ընկերությունների, միությունների ու կազմակերպությունների կողքին իրենց ու-

րոյն ու կարևոր դերն են կատարել ԱՄՆ-ում հաստատված հայկական ու հայաբնակ տարբեր տեղավայրերի հայրենակիցների կողմից հիմնված համախմբումները՝ հայրենակցական միությունները: Ամերիկյան հողի վրա դրանք սկսել են ի հայտ գալ այդտեղ հայության թվի սովորացմանը զուգընթաց, այսինքն՝ XIX դ. 80-ական թվականների վերջից, երբ մեծացել էր նաև Նոր երկրում ծնված հայրենակիցների թիվը: Այնպես որ, ժամանակի ընթացքում ստեղծված հայրենակցական համախմբումներն աստիճանաբար ներառել են հայրենի գրեթե բոլոր քաղաքները, գյուղերն ու ավանները (Հուսեյնիկ, Քեսրիկ, Մորենիկ, Հողե, Դատեն, Փերչեն, Բազմաշեն, Հոկիի, Խոյլու-Թլկատին, Բալու Պաղին, Վարդաթիլ, Եղեգի, Շենթիլ, Բաշաղակ, Քորբե, Չարսանձակ Բերի, Իջմե, Աղնցիգ, Քղի, Չմշկածագ, Ծովք, Ակն, Օձ, Հապուսի, Խարբերդ, Սեբաստիա, Արաբկիր, Հազարի, Մալաթիա, Կեսարիա, Աղանա, Տիգրանակերտ, Եղեգի, Բալու Սաքրաթ, Մարաշ, Էվերեկ, Չոմախլու, Ներխի, Կարին, Ֆենեսե, Թոմարգա, Չոր, Մուռի, Տարոն-Տուրուբերան, Շապին Գարահիսար, Հեֆթարե, Թոքատ, Ջերմուկ, Ուրֆա, Հաճըն, Այնթապ, Յոզղատ, Իզմիր և այլն): Միաժամանակ, ամերիկաբնակ հայրենակիցների զգալի մասն անդամակցել կամ հարել է հիշյալ միություններին, որոնք, ի դեպ, գերծ էին կուսակցական որևէ երանգավորումից:

Սկզբնապես ամերիկահայ հայրենակցական միությունները ստեղծվել են հայրենի բնակավայրերում ուսումնական ու կրթական գործն առաջ մղելու, հայ երեխաներին նախնական ու բարձրագույն նորանոր գիտելիքներ հաղորդելու, տեղի հայկական դպրոցների տեխնիկական, ուսումնական, դասավանդման և ուսուցչական մակարդակները բարձրացնելու նպատակով: Հետևաբար, այդ հայրենակցականները կրել են Կրթասիրաց, Ուսումնասիրաց, Դպրոցասիրաց անուններ:<sup>1</sup>

XIX դ. 90-ական թվականների ջարդերը ժամանակավորապես խոչընդոտել, իսկ 1914թ. սկսված Առաջին աշխարհամարտն ընդհանրապես արգելակել են հայրենակցական Կրթասիրաց, Ուսումնասիրաց, Դպրոցասիրաց ընկերությունների ծրագրերի հետագա իրականացմանը հայրենի բնօրրանում՝ ստիպելով նրանց կամ դադարեցնել, կամ՝ վերակազմել իրենց

<sup>1</sup> Երկրամասերի Մ. Գ., նշվ. աշխ., էջ 376:

<sup>2</sup> Նույն տեղում: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 39:

<sup>3</sup> Երկրամասերի Մ. Գ., նշվ. աշխ., էջ 376: Ավագյան Բ., նշվ. աշխ., 2000, էջ 116-120: Ամերիկայի հայ ազգային միության գործունեության մասին ավելի մանրամասն տես նաև՝ Ավագյան Բնարիկ, Հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում, «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2003, թիվ 4, էջ 98-104: Նույնի, Մեծն Բրիտանիայում եւ Միացեալ Նահանգներում Հայ առաջին լոբբիստական կազմակերպությունների հիմնադիր Միհրան Սվազյանը եւ Նախագահ Վուոո Ուիլսոնը, «Ազգակ» Բացառիկ, Պէյրուս, 2009, էջ 96-102:

<sup>1</sup> Ավագյան Բ., նշվ. աշխ., 2000, էջ 94-95:

գործունեությունը՝ այն ծառայեցնելով ռազմական պահանջներին: Երբեմն հայրենակցական ընկերությունները նույնիսկ վեր են ածվել երիտասարդների հեղափոխական, ինքնապաշտպանական ջոկատները համախմբող կենտրոնների, որոնց խնդիրն էր օգնել երիտօրբական վայրագություններին զոհ գնացող իրենց հայրենակիցներին:

XIX դարի 90-ական թվականներին, ապա՝ XX դ. սկզբին և վերջապես Առաջին աշխարհամարտի տարիներին ու դրան հաջորդող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ տարածքներում հայ բնակչության նկատմամբ իրականացված պարբերական ջարդերը, կոտորածներն ու ցեղասպանությունը, և որպես հետևանք առաջ եկած թշվառությունը, որբությունը, սովը, համաճարակներն ու զրկանքները չէին կարող անարձագանք թողնել օվկիանոսից այն կողմ գտնվող իրենց հայրենակիցներին, որոնցից ամեն մեկը մի «հոգու հատոր» ուներ հայրենի երկրում թողած: Ահա թե կը մի «հոգու հատոր» ուներ հայրենի երկրում թողած: Ահա թե ինչու, ԱՄՆ-ում գործող Կրթասիրաց, Ուսումնասիրաց ու Դպրոցասիրաց ընկերությունների կողքին, հատկապես 1900-ական թվականներից սկսած, աստիճանաբար ի հայտ են եկել հայրենի հուսալքված բնակչությանն ամեն կերպ սատարելու, ավերված բնակավայրերն ու կրթօջախները վերականգնելու, ինչպես նաև անհամար որբերին սատարելու կոչված բազմաթիվ հայրենակցական ընկերություններ ու միություններ, որոնք, սերվելով վերոհիշյալ ուսումնասիրացներից և ժամանակի ընթացքում ու պատմական հանգամանքների բերումով վերակառուցելով դրանց նախկին գործունեությունը, արդեն 1914 թվականից, իրենց առջև դրված նոր խնդիրներին համապատասխան, կրել են Այրիախնամ, Որբախնամ, Որբասիրաց, Աղքատախնամ ու Նպաստամատույց անուններ: Ընդ որում, սկզբնական շրջանում, մինչև Առաջին աշխարհամարտը, դրանց մի մասը գործել է նախորդ՝ Կրթասիրաց կամ Ուսումնասիրաց ընկերությունների հետ զուգակցված կամ՝ նրանց անվան տակ, և միայն 1915թ. Մեծ եղեռնից հետո է, որ վերջիններիցս մեծ մասը, դադարեցնելով իր կրթասիրական գործունեությունը և վերականգնվելով, լիովին ձեռնամուխ է եղել թշվառության մեջ հայտնված հայրենակիցներին նյութապես ու բարոյապես սատարելուն, մինչդեռ մյուսները, կազմակերպչական ու ֆինանս-

սական առումով ի վիճակի չլինելով իրենց գործունեությունը վերակառուցել և ծառայեցնել նոր, արտակարգ պայմաններին, ինքնալուծարվել են կամ՝ դադարեցրել իրենց գործունեությունը: Իրենց հայրենակիցներին սատարելու կոչված վերոհիշյալ նոր ընկերությունների կողքին, դրանց հետ համագործակցված, գործել են նաև մի շարք հայրենակցականների Տիկնանց որբախնամ և Հիվանդանոցային օժանդակ ընկերություններ: Թվարկված բոլոր ընկերություններն էլ զգալի նյութական միջոցներ են հատկացրել տարագրված և հատկապես Դեր Չոր ու արաբական անապատի այլ տարածքներ քշված հայրենակիցներին հայտնաբերելու ու նրանց բազմակողմանի օգնություն ցույց տալու համար: Հայրենակցական հիշյալ ընկերությունները զգալի ներդրում են ունեցել նաև 1916թ. կովկասյան, ապա՝ կիլիկյան կամավորական շարժումներին նյութապես ու բարոյապես, զինվորական ու ռազմական առումներով խթանելու ուղղությամբ, Սբ. Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսարանների միջոցով դրամական օժանդակություն առաքել՝ ի նպաստ կարոտյալ հայրենակիցների, բոլոր միջոցներով աջակցել Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի, ՀԲԸՄ և այլ կազմակերպությունների ազգօգուտ ջանքերին: Իրենց գործունեությունը նոր ժամանակների ստիպողական հանգամանքների համապատասխան վերակառուցելու նախկին կրթասիրաց միությունների հայրենանվեր գործերն արժանացել են համայն հայության հիացմունքին ու բարձր գնահատանքին:<sup>1</sup>

Հայրենի ավերված բնակավայրերը վերականգնելու և նախկին խաղաղ ու ստեղծագործ կյանքը վերադարձնելու դժվարին գործն ԱՄՆ-ում ստանձնել էին այդ նպատակով կազմակերպված Վերաշինաց, ինչպես նաև Հայրենակցական անունները կրող միությունները, որոնք խնդիր էին դրել օգնել տարագիր հայրենակիցներին հետ վերադառնալ հարազատ բնակավայրերը, այնտեղ կառուցել հիվանդանոցներ, որբանոցներ, աշխատանքային արհեստանոցներ, վերաշինել դպրոցներն ու եկեղեցիները, նյութական ու բարոյական օգնություն ցույց տալ որբացածներին ու այրիացածներին, թշվառներին, կարիքավորներին ու անաշխատներին և այլն: Հիշյալ միությունները բազմիցս կազմակերպել են հանգանակիչ հավաքներ, ժողով-

<sup>1</sup> Ավագյան Զ., նշվ. աշխ., էջ 96-98:

ներ, հանդիսություններ ու բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնց ընթացքում հավաքված հասույթը տրամադրվել է ի նպաստ Բեյրութում, Հալեպում, Բաղդատում, Շամուն (այժմ՝ Դամասկոս), Աթենքում, Սալոնիկում, Մարսելում, Վլադիվոստոկում և այլ վայրերում գտնվող տարագիր հայրենակիցներին՝ միաժամանակ այդ վայրերում ևս հիմնելով բժշկական, կրթական ու աշխատանքային կենտրոններ, որբանոցներ և այլն: Վերաշինաց ու Հայրենակցական միությունները հայրենակցական մակարդակի խնդիրներից բացի, ամենագործուն մասնակցությունն են ունեցել նաև համազգային կարևոր ձեռնարկների, այդ թվում նաև հանգանակությունների իրականացմանը (օրինակ՝ 1918թ. Ամերիկահայ ազգային միության կողմից կազմակերպված «1 մլն. դոլարի» հանգանակությանը, 1920թ. Չորավար Անդրանիկի կազմակերպած հանգանակությանը և այլն), ամեն կերպ աջակցել ՀԲԸՄ, Մերձավոր Արևելքի նպաստամատույցի և հայանպաստ այլ ընկերությունների ու կազմակերպությունների աշխատանքներին և այլն: Ամփստելի է ամերիկահայ հայրենակցական միությունների ծավալած գործունեության նշանակությունը նաև ԱՄՆ-ի հայ գաղթականների նկատմամբ:<sup>1</sup>

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով (1920թ.) հայրենակցական միությունները, որոնց թիվը Սփյուռքում մոտավոր հաշվարկներով հասնում էր 300-ի, լծվել են ոչ միայն օտար երկրներում ցրված Հայոց ցեղասպանությունից մազապուրծ իրենց հայրենակիցներին աջակցելու գործին, այլ նաև՝ դեպի Մայր Հայրենիք նրանց պարբերական հայրենադարձությունը (1920-1930-ական թվականներ, 1946-1948թթ., 1962-1965թթ.) կազմակերպելու ջանքերին: Այդ նպատակով և օժանդակություն հատկացնելու պատրաստակամությամբ հայրենակցական միությունները դիմել են խորհրդային Հայաստանի կառավարությանը հայրենի կորցրած երկրի բնակավայրերը հավերժացնող տեղանուններով ավաններ հիմնելու խնդրանքով, որտեղ կհաստատվեին տարագիր հայրենակիցները և կնպաստեին հայրենիքի վերաշինությանը: Այսպես, սփյուռքահայ հայրենակցականների, անհատ նվիրատվությունների, կտակների և մասնավորապես Հայաստանի Օգնության Կոմիտեի

(ՀՕԿ) միացյալ գործակցությամբ ծնունդ են առել Նոր Արաբկիրը (1925թ.), Նոր Եվդոկիան (1925թ.), Նոր Բուքանիան (1925թ.), Նոր Մալաթիան (1927թ.), Նոր Սեբաստիան (1928թ.), Նոր Խարբերդը (1930թ.), Նուբարաշենը (այժմ՝ Սովետաշեն) (1930թ.), Նոր Թոնարզան (1931թ.), Նոր Կեսարիան (1934թ.), Նոր Տիգրանակերտը (1934թ.), Նոր Կիլիկիան, Նոր Մարաշը, Նոր Ձեյթուն, Նոր Հաճընը, Նոր Կեսարիան, Նոր Յոզղատը, Նոր Եղեսիան, Նոր Տարոնը, Նոր Երզնկան, Նոր Ամասիան, Բալահովիտը, Այնթապը, Սուսա լեռը և այլ ավաններ:<sup>1</sup>

Հայրենակցական միությունները, որոնց կենտրոնատեղիները հիմնականում գտնվում են ԱՄՆ-ում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Մերձավոր ու Միջին Արևելքի և Եվրոպայի հայաշատ տարբեր երկրներում գործող համապատասխան մասնաճյուղերով, բոլորեքյան օժանդակել և շարունակում են օժանդակել ոչ միայն Հայրենիքի վերաշինության գործին, այլև մշտապես արձագանքել են ինչպես իրենց որդեգրած երկրներին (Երկրորդ աշխարհամարտ (1939-1945թթ.) և այլն), նույնպես և՛ Մայր Հայաստանին բաժին ընկած դժվարությունների ժամանակ (Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.) դեղորայք, պարեն, հագուստ առաքել սովետական բանակի մարտիկներին, նպաստել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հանգանակություններին (1943-1944թթ.), մասնակցել Լենինականի (1928թ.) ավերիչ երկրաշարժից տուժած բնակչությանն աջակցելուն և այլն):

Ֆաշիզմի դեմ պայքարի ճակատագրական տարիներին ամերիկահայ տարբեր կուսակցություններ, բազմաթիվ կազմակերպություններ, հայրենակցական միություններ, ինչպես նաև՝ անհատներ, միասնականություն են դրսևորել ոչ միայն իրենց քաղաքացիական պարտքի կատարման, այլև՝ հեռավոր հայրենիքին (առանձին բացառությամբ՝ ՀՅԴ-ից) նյութապես և բարոյապես սատարելու գործում: Այդ մասին է վկայել 1941թ. օգոստոսին Նյու Յորքում տեղի ունեցած զանգվածային հանրահավաքի ժամանակ ԽՍՀՄ կառավարությանն ուղղված ամերիկահայության հետևյալ դիմումը. «Մենք, ամերիկահայերս, որոնց բնիկ երկիրը կը պաշտպանէ Կարմիր Բանակը, կզգանք.

<sup>1</sup> Մելիքսեթյան Հովիկ, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 110-115:

<sup>1</sup> Ավագյան Զ., նշվ. աշխ., էջ 98-99:

որ պարտաւոր ենք օգնելու Սովետ Միութեան, պայքարելու մինչեւ այն ատեն, երբ ամբողջ աշխարհի երեսէն կոչնչացուի ֆաշիզմը»:<sup>1</sup>

Պատերազմի ամենավճռական տարիներին աշխարհով մեկ սփռված հայությունը միավորվել է Ազգային ճակատներում, որոնց գործուն կազմակերպություններից էր նաև 1944թ. մարտի 19-ին Նյու Յորքում վերջնականապես ձևավորված Ամերիկահայ Ազգային խորհուրդը՝ ամերիկահայ տարբեր կազմակերպությունների միասնական ճակատը (բաղկացած ՌԱԿ, ՍԴԳ, Ամերիկահայ Առաջադիմական Միության, ԶԲԸՄ, հարանվանական եկեղեցիների, տարբեր հայրենակցական և այլ միությունների ներկայացուցիչներից), որը, երկրով մեկ տարածված իր բազմաթիվ մասնաճյուղերով, միջոցառումներ, հանգանակություններ ու նվիրատվություններ է կազմակերպել՝ ի նպաստ ամերիկյան և խորհրդային բանակների, Կարմիր խաչի և Մայր Զայրենիքի, իսկ պատերազմի ավարտից հետո (մինչև 1950թ.) ձեռնամուխ է եղել նաև նորակազմ ՄԱԿ-ի շրջանակներում Զայրատին արդարացի լուծում տալու խնդրին:<sup>2</sup> Ամերիկահայ Ազգային խորհրդի հայրենամկեր ջանքերի շնորհիվ 1944թ. գարնանը ֆաշիզմին հերոսաբար դիմագրաված ԽՍՀՄ ազատագրված տարածքների բնակչության համար ուղարկվել է 75 հազար դոլար արժողության 25 հազար նվեր-ծանրոց, Զայաստանի համար՝ մեկ նավ հագուստեղեն: Բացի այդ, Ռուսաստանի Օգնության կոմիտեի միջոցով Կարմիր Բանակի համար առաքվել է 50 հազար դոլար, ինչպես նաև՝ 87 հազար դոլար արժողության դեղորայք: Խորհրդային Միության պատերազմական ջանքերին աջակցող Ամերիկա-հայկական կոմիտեն մինչև 1943թ. հանգանակել է Կարմիր Բանակի համար՝ շուրջ 56 հազար դոլար, կարիքավորների համար՝ 29 հազար դոլար, Զայաստանի համար՝ 11 հազար դոլար, ինչպես նաև՝ 9 հազար

դոլար արժողության 2.700 կտոր բրդյա գործվածքեղեն և այլն:<sup>1</sup>

Ամերիկահայությունը, անմնացորդ օժանդակելով պատերազմից ուժասպառ խորհրդային Միությանը և հեռավոր Մայր Զայաստանին, իր զգալի ներդրումն է ունեցել նաև Սփյուռքի առաջադեմ ուժերի կողմից «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման գործին: Ամերիկահայության արագ և կազմակերպված ջանքերի շնորհիվ 1943թ. մարտից մինչև 1944թ. մարտ ընկած ժամանակահատվածում այդ նպատակով ԱՄՆ-ում հանգանակվել է առնվազն 115 հազար դոլար՝ «Սասունցի Դավիթ» տանկային առաջին (նաև 173 հազար դոլար՝ Կարմիր խաչի հիմնադրամին), ապա՝ 40 հազար դոլար երկրորդ շարասյունների կառուցման համար, որոնք, շատ կարճ ժամանակում շարք մտնելով, մասնակցել են խորհրդային երկրի ազատագրական հաղթարշավին: Իսկ 1945թ. «Ձորավար Բաղրամյան» տանկային նոր շարասյան կառուցման համար սկսված հանգանակությունը դադարել է Զայրենական մեծ պատերազմի ավարտի հետ:<sup>2</sup> Ամերիկահայոց հոգևոր առաջնորդ Ս. Գարեգին Արքեպիսկոպոս Դովսեփյանի ջանքերով կազմակերպված Զայկական Զանձնախումբը մեկ տարվա ընթացքում ի նպաստ Կարմիր բանակի, Մայր Զայրենիքի և Սփյուռքի հայրենակիցների հանգանակել է 120 հազար դոլար, իսկ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար՝ 85 հազար դոլար:<sup>3</sup>

Հետպատերազմյան ժամանակաշրջանում ամերիկահայերը մասնակցել են հայրենադարձության կազմակերպմանը, Զայաստանի հետ մշակութային կապերի ամրապնդմանը, ինչպես նաև՝ Ամերիկահայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ Նյու Յորքում հրավիրված Զայկական համաաշխարհային կոնգրեսի (1947թ.) աշխատանքներին: Վերջինիս նպատակն էր երկրորդ համաաշխարհային պատերազմից հետո ստեղծված պայմաններում վերըստին արժարծել թուրքիայի բռնագրաված հայկական տարածքների վերադարձման հարցը՝ կապված հայերի

<sup>1</sup> Ինչու համար կը կուխնք մենք հայերս, Նիւ Եորք, 1942, էջ 74:

<sup>2</sup> Զայ ժողովրդի պատմություն, հ. VIII, Երևան, 1970, էջ 154: Անդրեասեան Անդրանիկ, Պատմութիւն Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ամերիկայի Արեւմտեան շրջանակի, Լոս Անճելըս, 1981, էջ 11-12, 119-120:

<sup>1</sup> Զայ ժողովրդի պատմություն, էջ 154: Աբրահամյան Աշոտ Գ., Զանառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Բ, Երևան, 1967, էջ 402: Ամերիկեան Սովետ բարեկամութիւն, Նիւ Եորք, 1943, էջ 48:

<sup>2</sup> Զայ ժողովրդի պատմություն, էջ 158: Աբրահամյան Ա. Գ., նշվ. աշխ., էջ 403:

<sup>3</sup> Աշճեան Ա. Քինյ., նշվ. աշխ., էջ 45:

ներգաղթի կազմակերպման հետ, ինչպես նաև՝ զարկ տալ Սփյուռք-Հայրենիք կապերի ընդլայնմանը: Կոնգրեսին մասնակցել է 715 պատգամավոր՝ 22 երկրներից, որոնք ներկայացրել են սփյուռքահայ 70 կենտրոնական կազմակերպություններ, 275 մասնաճյուղ, 31 եկեղեցի: Թեև Կոնգրեսը որոշում էր կայացրել խնդրել ամերիկյան կառավարությանը ՄԱԿ-ի օրակարգի մեջ մտցնել հայկական հողային պահանջների հարցը, սակայն այն մնացել է թղթի վրա, քանի որ սկսված «սառը պատերազմի» պայմաններում Թուրքիայից ամեն մի հողային պահանջ դիտվել է որպես «կոմունիզմի ծավալում»:<sup>1</sup>

Այնպես որ, տարբեր դրդապատճառներով, պատմական տարբեր ժամանակաշրջաններում ԱՄՆ մեկնած հայերը, իրենց ժողովրդի համար ճակատագրական հանգրվաններում, համախմբել են ամերիկահայության ներգաղութային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական և այլ կարողությունները, դիվանագիտական, քաղաքական, ռազմական, մարդկային և հնարավոր բոլոր միջոցներով սատարել հայրենի երկրին ու գորավիզ կանգնել ժողովրդի պաշտպանության, ազատագրության ու վերականգնման նվիրական գործին, ինչը օրինակելի և գործադրելի պետք է լինի նաև այսօր, երբ Հայրենիքի վերաշինությունն անսակարկ աջակցության կարիք ունի:

### **ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ**

պատմական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի  
ավագ գիտաշխատող

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍՓՅՈՒՂՔՈՒՄ «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՍՏԵՂԾՈՒՄԸ (ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)**

**Հայկական գաղթօջախները մինչև 1921թ.<sup>1</sup>:** Դեռևս վաղ միջնադարում առաջացած հայկական գաղթօջախները հետագա դարերում համալրվում էին Հայաստանից հարկադրաբար հեռացող հայության հաշվին: VIII-Վերջ. Հայաստանից հայերի արտագաղթերի հետևանքով տարբեր երկրներում հայության տուկոսն այնքան էր աճել, որ հնարավորություններ էին ստեղծվել Հայաստանից դուրս հայկական իշխանությունների հիմնադրման համար: Այդպիսիք էին Համշենի, Մարաշի, Եդեսիայի, Քեսունի իշխանությունները, իսկ այնուհետև՝ Կիլիկիայի հայկական թագավորությունը: Վերոհիշյալ իրողությունները ցույց են տալիս, որ հայրենիքից հեռացած հայության մեջ մշտապես արթուն էր մնում սեփական իշխանություն, պետություն ունենալու գաղափարը, որ հաճախ հնարավոր էր լինում նյութականացնել՝ նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ գաղթօջախներում ուշ միջնադարում գրեթե չէին մնացել հայ ազնվականության ներկայացուցիչներ, հայությունը չունեի քաղաքական ղեկավարություն, որը նրան կառաջնորդեր՝ նյութականացնելու սեփական պետություն ունենալու գաղափարը: Այդ ժամանակ հայությունն իրենից ներկայացնում էր սոսկ հոգևոր համայնք, քանի որ պետականության բացակայության պայմաններում վերջինիս որոշ գործառույթներ իրականացվում էին Հայ Առաքելական եկեղեցու կողմից: Այն հայության համար միակ ղեկավարությունն էր և, քանի որ այն հոգևոր բնույթի էր, հայությունն ուներ փաստորեն միայն հոգևոր իշխանություն, այդպիսով, որպես հավաքականություն, հանդիսանալով հոգևոր համայնք:

Հայկական քաղաքական կուսակցությունների ստեղծումը Հայոց պատմության մեջ ունեցավ դարակազմիկ նշանակու-

<sup>1</sup> Փիրումյան Ռ., Ավագյան Ք., նշվ. աշխ., էջ 61:

<sup>1</sup> ժամանակագրական սույն սահմանագիծը մենք անցկացնում ենք այն պատճառով, որ Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարությունը Սփյուռքում հաստատվել է 1921թ.:

թյուն: Դա հայոց համար քաղաքական ղեկավարության ի հայտ գալու գործընթացն էր: Հենց կուսակցությունների գործունեությունն էր, որ հայությանը, բացի հոգևոր համայնքին բնորոշ հատկանիշներից, սկսեց հաղորդել նաև քաղաքական հասարակությանը հատուկ բնորոշիչներ: Այդ ամենի հետևանքով հայության մեջ սկիզբ առավ ազգային-ազատագրական շարժում, որն ի վերջո պսակվեց Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումով, այսինքն՝ կրկին հաջողվեց նյութականացնել սեփական պետություն ունենալու հարատև գաղափարը: Գարեգին Նժդեհը նշում է, որ «շնորհիվ Քրիստափորի (իմա՝ Քրիստափոր Միքայելյան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության (այսուհետև՝ ՀԶԴ) հիմնադիրներից) օտար լծերի տակ ստրկորեն հոգեվարող հոգևոր հոտի փոխարեն այսօր կա անկախ և ստեղծագործ քաղաքական ժողովուրդը»<sup>1</sup>:

Հայոց Ցեղասպանության հետևանքով սկսվում է Հայկական Սփյուռքի (այսուհետև՝ Սփյուռք) վերջնական ձևավորման գործընթացը: Ինչպես ընդհանուր առմամբ Հայոց պատմությունը կարելի է բաժանել երկու խոշոր ժամանակաշրջանների՝ նախքան Ցեղասպանությունը և Ցեղասպանությունից հետո, այնպես էլ նույն բաժանումը միանգամայն կիրառական է Սփյուռքի պատմության համար:

Հայկական քաղաքական կուսակցությունները Ցեղասպանությունից առաջ և, հատկապես, դրանից հետո, բացի Հայաստանից, իրենց կազմակերպությունները ստեղծում էին նաև Սփյուռքի տարբեր գաղթօջախներում, այդպիսով՝ որոշակի քաղաքական նրբերանգներ հաղորդելով նաև նրանց: Սփյուռքը սկսում են աջակցություն ցուցաբերել հայ ազատագրական շարժմանը, իսկ այնուհետև՝ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո, նաև Հայաստանի առաջին հանրապետությանը: Սփյուռքում գործում էին նաև բազմաթիվ հայրենակցական միություններ, որոնք ընդգրկումով թեև ավելի փոքր, սակայն նույն գործունեությունն էին իրականացնում:

Ինչ վերաբերում է Սփյուռքի ձևավորմանը, ապա այդ գործընթացը մինչև 1921թ., երբ այնտեղ հաստատվեցին Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարները, դեռևս չէր

ավարտվել, և միայն այդ թվականից հետո, ինչպես կտեսնենք, այն սկսեց ընդունել կազմակերպակառուցվածքային այն դիմագիծը, որը, ոչ էական փոփոխություններով, գոյություն ունի նաև այսօր:

**Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարության հաստատումը Սփյուռքում:** 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացվեց: Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական ղեկավարությունն այդ իրադարձությունից հետո մնաց երկրում: 1921թ., երբ նրանց մեծամասնությունը հայ բոլշևիկների կողմից ձերբակալվեց, իսկ այնուհետև հրաշքով փրկվեց Երևանի բանտում տեղի ունեցած սպանդից փետրվարյան համաժողովրդական ապստամբության շնորհիվ, վերջինիս պարտությունից հետո սկզբում տեղափոխվեց Սյունիքում ստեղծված Լեռնահայաստանի Հանրապետություն, իսկ այնուհետև՝ հեռացավ հայրենիքից՝ հաստատվելով Սփյուռքում:

Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության ստեղծումով, այսպիսով, տեղի ունեցավ լուրջ փոփոխություն Սփյուռքում: Հայրենիքից հեռացան և այնտեղ հաստատվեցին Հայոց արդեն նախկին անկախ պետության ղեկավար այրերը: Նրանք գրեթե բոլորը ՀԶԴ անդամներ էին, իսկ ՀԶԴ-ն մինչև այդ էլ սեփական կառույցներն ուներ Սփյուռքի տարբեր գաղթօջախներում: Սակայն այժմ գաղթօջախներ եկան քաղաքական գործիչներ, պետության նախկին ղեկավարներ, անձինք, որ կանգնած էին եղել 1890-ական թթ. սկիզբ առած հայ ազատագրական շարժման ակունքներում, անցել էին այդ շարժման ողջ ընթացքը, կազմակերպել հայության տարբեր հատվածների ինքնապաշտպանությունը Ցեղասպանության ժամանակ, պայքարել անկախ պետականության ստեղծման համար, հիմնադրել Հայաստանի առաջին հանրապետությունը, անցել իշխանության, կազմավորել պետական կառույցներ, իսկ այնուհետև՝ կորցրել իշխանությունը:

Հասկանալի է, որ նրանց հաստատվելը Սփյուռքում չէր կարող լուրջ հետևանքներ չունենալ և, մասնավորապես, այն համայնքներում, որտեղ լուրջ դերակատարություն ուներ ՀԶԴ-ն: Վերջինս՝ մինչև այդ հանդիսանալով Հայաստանի առաջին հանրապետության ղեկավար կուսակցություն, Սփյուռքում ձգտելու

<sup>1</sup> Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 1, Եր., 2002, էջ 312:



էր նույն դերակատարությանը: Նշենք, որ ՀՀ-ն Սփյուռքում այդ ժամանակ արդեն ամենատարածված և ամենահեղինակավոր քաղաքական կազմակերպությունն էր, որի արդյունքում Հայաստանի առաջին հանրապետության նախկին ղեկավարությունը կարևոր դերակատարություն ստացավ ՀՀ համասփյուռքյան կառույցում՝ մասնավորապես և Սփյուռքում՝ ընդհանրապես:

**«Հոգևոր Հայաստան»-ի ստեղծումը:** Հայաստանի առաջին հանրապետության նախկին ղեկավարությունը՝ հաստատվելով Սփյուռքում, ակտիվորեն շարունակեց իր գործունեությունը: Այս կապակցությամբ Ս. Վրացյանը գրում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին. «Մենք տարագրության մեջ էլ այն ենք, ինչ որ էինք Հայաստանում: Մենք սիրում ենք մեր հայրենիքը և ոչ ոքի չենք ների նրա վերաբերմամբ գործված որևէ անիրավություն: Փառք և պատիվ չենք փնտրում, ոչ էլ բարեկեցիկ կյանք մեզ համար, բայց հայ ժողովրդի պատվին և բարեկեցությանը վնասողների դեմ պայքարում ենք և պիտի շարունակենք: Մեր գոյության նպատակը և կյանքի իմաստը՝ Հայաստանի և հայ ժողովրդի ազատությունն է և անկաշկանդ բարգավաճումը»<sup>1</sup>:

Այդ նպատակների իրականացումը, հայրենիքից կտրված ապրելու սլայմաններում, հասկանալի է, իրականացվելու էր այլ հարթության վրա և այլ մեթոդներով:

Եվ հենց այլ հարթության վրա և այլ մեթոդներով 1920-ական թթ. Սփյուռքում սկսվեց «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի ստեղծման գործընթացը: «Հոգևոր Հայաստան» գաղափարական հասկացությունն օգտագործվում էր հենց Սփյուռքում հաստատված Հայաստանի առաջին հանրապետության պետական այրերի (Ս. Վրացյան, Գ. Նժդեհ և այլք) կողմից:

Իր ելույթները այն նշանակում էր վիրտուալ (երևակայական) հայրենիք, պետություն՝ աշխարհում ցրված ազգի վիրտուալ հավաքականություն: Այդ մասին Ս. Վրացյանը գրում է. «Կազմակերպելով և բարեշինելով հանդերձ իր ներքին կյանքը, Հայ Սփյուռքը չնոռացավ ու չկտրվեց Մայր Հայրենիքից, իրեն միշտ զգաց Հայրենիքի մեկ մասը՝ մի տեսակ «Հոգևոր Հայաստան»: ՀՈԳԵՎՈՐ Հայաստանը չփորձեց իրեն հակադրելու ՍՈՎԵՏԱ-

<sup>1</sup> Ս. Վրացյան, Խոսք ընդ ուսուցչի, Տ.Տ. Գևորգ Ձ սրբ. կաթողիկոսին, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք» 2009, էջ 207:

ԿԱՆ Հայաստանին, թեև վերջինս ուրացավ և դավադրեց նրա դեմ»<sup>1</sup>:

Գ. Նժդեհը՝ անդրադառնալով ամերիկահայության իրավիճակին, գրում է. «Կա՛ հայությունը հոգեբանորեն կենտրոնացնելու, նրան իբրև հասարակություն կերպավորելու մի գործոն - ՀԱՅ ՀԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ... Ամերիկահայությունը, ուրեմն, բաժանվում է երկու մասի-հայ հասարակություն դառնալու իդեալով առաջնորդվող ազգայնական հոսանք և ցեղորեն դիմազուրկ, ապագայնացած ու տարրալուծվելու հակամետ ցրվածություն»<sup>2</sup>:

Այսինքն՝ ըստ Ս. Վրացյանի և Գ. Նժդեհի, ՀՀ-ն աշխարհում ցրված հայությանը որպես մեկ հավաքականություն ձևավորելու փորձ էր կատարում, որը իրականացվում էր ինչպես առանձին գաղթօջախներում՝ դրանք վերածելով կազմակերպված համայնքների, այնպես էլ համասփյուռքյան սահմաններում: Ի տարբերություն միջնադարի, երբ հայությունը կարողանում էր սեփական իշխանությունները ստեղծել հայրենիքից դուրս, այժմ՝ XX դ. սկզբին, հայության վիրտուալ հավաքականությունը չէր ունենալու գծված սահմաններ: Վերջիններս ունենալու էին համասփյուռքյան ընդգրկում:

Կար Հայաստանի Խորհրդային Հանրապետություն, որն անկախ չէր: Այն քաղաքական դրդապատճառներով աստիճանաբար կտրում էր կապերը սեփական Սփյուռքի հետ: Միևնույն ժամանակ, կար աշխարհում սփռված հայություն, կար, ի դեմս հայկական կուսակցությունների ղեկավարությունների, նաև հայության քաղաքական ղեկավարություն: Ստիպված լինելով կտրվել մայր հայրենիքից, ապրել առանց նրա, այն օտար հողում փորձ էր կատարում ստեղծելու հոգևոր հայրենիք, մի իրականություն, երբ աշխարհասփյուռ հայությունը ղեկավարվում, ուղղորդվում է, երբ ստեղծվում են նրա ներքին կյանքի տարբեր բնագավառները կարգավորող կառույցներ ու կազմակերպություններ, երբ հայությունը սկսում է զբաղվել իր խնդիրներով: Գ. Նժդեհը գրում է. «Կտրված մայր հողից և հայրենի

<sup>1</sup> Ս. Վրացյան, Խոսք ընդ ուսուցչի, Տ.Տ. Գևորգ Ձ սրբ. կաթողիկոսին, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք» 2009, էջ 205:

<sup>2</sup> Գ. Նժդեհ, նշվ. աշխ., էջ 172:



ժողովրդի կենցաղից՝ նա (իմա՝ սփյուռքահայությունը - Ա.Ե.) դարձել է հոգեպես անհող և անհայրենիք... Հայաստանից դուրս, օտարության մեջ, միայն Ցեղի գաղափարն ու պաշտամունքը կարող են փոխարինել հայրենի հողն ու ժողովուրդը... Այսօր, միխթարության ու հպարտանքի երկու առարկա ունենք-Ցեղային Շարժումը և մեր մարտական ուժը: Ապրեցեք ք երկուսն էլ, որ ապրեք իբրև Ազգ և Հայրենիք»<sup>1</sup>: Ընդհանրապես, Գ. Նժդեհը կարգախոս էր մշակել. «Երբեք և ոչ մի տեղ՝ առանց հոգևոր Հայրենիքի»<sup>2</sup>:

Դատելով ՀՀԴ գաղափարախոսների խոսքերից՝ «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծման համար նախևառաջ նրանք հիմք էին ընդունում ՀՀԴ կազմակերպական կառույցը: Առաջին հերթին շեշտը դրվում էր ՀՀԴ տարածքային, տեղական կառույցների վրա, որոնք տարբեր համայնքներում ձեռք էին բերում նաև համայնքային ղեկավարության գործառնությունը՝ երբեմն համայնքային կառույցի իմաստով վերածվելով համայնքի: Ա. Սահակյանը, նկարագրելով 1920-ական թթ. Մերձավոր Արևելքի գաղթօջախներում ՀՀԴ իրականացրած գործունեությունը, մասնավորապես ընդգծում է. «...ընկերները թափով մվիրվեցան աշխատանքի: Որքան արագ գլուխ գար մեր կոմիտեներու կազմությունը, եւ որքան ուժեղ ըլլային անոնք, այնքան դյուրին պիտի ըլլար ընդհանուր համակարգություն մտցնել ժողովուրդին մեջ»<sup>3</sup>: Ասվածից պետք է եզրակացնել, որ հայ գաղթականության ներքին կյանքի կարգավորման նպատակի իրականացման գործում ՀՀԴ գործիչները շեշտը նախևառաջ դնում էին սեփական կառույցի ամրապնդման վրա:

«Հոգևոր Հայաստան»-ի (Ս. Վրացյան, Գ. Նժդեհ, Ն. Աղբալյան, Լ. Շանթ և այլք) գաղափարախոսների ջանքերով Սփյուռքում աստիճանաբար ի հայտ են գալիս մշակութային, կրթական, կանանց, երիտասարդական, բարեգործական և այլ բնույթի կազմակերպություններ, միություններ և հաստատություններ, իսկ արդեն իսկ գոյություն ունեցող նմանատիպ

կազմակերպություններն ու միությունները ավելի են ընդարձակում իրենց գործունեությունը: Նմանատիպ կառույցների գործունեությունը ուներ մի քանի տարածական շրջանակ: Այն երբեմն ընդգրկում էր որևէ առանձին վերցրած համայնք, երբեմն ունենում տարածաշրջանային, իսկ երբեմն էլ՝ համասփյուռքյան տարածքում<sup>1</sup>:

ՀՀԴ-ն երիտասարդ սերնդի շրջանում սկսում է տարածել նաև ազգայնական դաստիարակություն: Սփյուռքի երիտասարդության համար ստեղծվում են «Ցեղակրոն ուխտեր»<sup>2</sup>: Տարբեր համայնքներում ՀՀԴ կառույցները հայության շրջանում իրականացնում են նաև դատական գործառնություններ:

ՀՀԴ գաղափարախոսների դերակատարությամբ պայմանավորված էր «Հոգևոր Հայաստան»-ի ձևավորման գործընթացում այնպիսի մի կարևոր ձեռնարկ, ինչպիսին էր քաղաքական երանգի հաղորդումը Սփյուռքին: Այդ ճանապարհով հայությունը կրկին հոգևոր համայնքին բնորոշ հատկանիշներից բացի սկսում է ստանալ քաղաքական համայնքին հատուկ բնորոշիչներ: Դրանք Սփյուռքին հաղորդվեցին համապատասխան կառույցի ստեղծմամբ, որը սկզբում կոչվում էր «Հայաստանի Հանրապետության պատվիրակություն», որը շարունակում էր 1920-ական թթ. սկզբին գոյություն ունեցող Հայաստանի առաջին հանրապետության պատվիրակության գործունեությունը, իսկ այնուհետև՝ վերանվանվեց «ՀՀԴ հայ դատի հանձնախմբի»՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ<sup>3</sup>: Հանձնախմբի գործունեությունը նպատակաուղղված էր հայկական պահանջատիրության արծարծմանը տարբեր երկրներում և կազմակերպություններում: Դրանով իսկ՝ աշխարհասփյուռ հայությունն իրականացնում էր սեփական քաղաքականությունը, որը ճիշտ է՝ ուներ սահմանափակ (գրեթե միայն պահանջատիրության) բնույթ, սակայն, միևնույն ժամանակ, համահայկական շահի ընդգրկում: Այդ պատճառով, «Հայ Դատ» հասկացությունը

<sup>1</sup> Գ. Նժդեհ, նշվ. աշխ., էջ 480:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 82:

<sup>3</sup> «Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության», քառու հատոր շարք, հ. Դ, Ե., 2003, էջ 323:

<sup>1</sup> «Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության», քառու հատոր շարք, հ. Դ, Ե., 2003, էջ 305-340:

<sup>2</sup> Ա. Բարսեղյան, Ցեղակրոն շարժումը, հրատ. «Հայրենիք» ակումբ, Ե., 2009:

<sup>3</sup> «Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության», հ. Դ, էջ 308:

շուտով ձեռք բերեց համասփյուռքյան, իսկ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից (1991թ.) հետո նաև՝ համահայկական տարածում:

Այսպիսով՝ ձևավորվում էր «Հոգևոր Հայաստան»-ը: Վերջինս սկզբնապես իրականություն էր դառնում ՀՅԴ համասփյուռքյան կառույցի շրջանակներում, սակայն, գործունեության համահայկական դաշտի պայմաններում, «Հոգևոր Հայաստան»-ի սահմաններն անընդհատ ընդարձակվում էին:

Այս շրջանում «Հոգևոր Հայաստան»-ն ընդգրկում էր երկու տարածական շրջանակ կամ հավաքականություն՝

1. Սփյուռքի առանձին համայնքի շրջանակ-այս «Հոգևոր Հայաստան»-ը ընդգրկում էր առանձին վերցրած մեկ հայկական համայնք, որտեղ հայությունը կարգավորում է իր ներքին կյանքը, ստեղծում կրթական, մշակութային և այլ բնույթի հաստատություններ: Սփյուռքի համայնքն իրենից ներկայացնում էր Սփյուռքի բջիջը, որին, ընդհանուր առմամբ, հատուկ էին նույն խնդիրներն ու նպատակները, ինչ մյուս համայնքներին:

2. ՀՅԴ կառույցի շրջանակ-այս «Հոգևոր Հայաստան»-ը նույնպես ուներ սահմանափակ ընդգրկում, այն զուտ կուսակցական կամ կառույցային կյանքին և գաղափարախոսությանն էր վերաբերում: Թեև ՀՅԴ-ն և նրա որոշ դուստր կազմակերպություններ ունեին համասփյուռքյան այս կամ այն մասշտաբի տարածում, այնուամենայնիվ, համասփյուռքյան սահմաններում նրանց գործունեությունը սահմանափակվում էր սեփական անդամներով և համակիրներով: Միևնույն ժամանակ, ապակուսակցական սկզբունքով ստեղծվող դուստր կազմակերպությունների միջոցով «Հոգևոր Հայաստան»-ի սահմաններում սկսում են ընդգրկվել հայության նորանոր հատվածներ:

Պետք է նշել, որ «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծման գործընթացը պատմական անհրաժեշտություն էր և անխուսափելիորեն ստեղծվելու էր սեփական հայրենիքից հարկադրաբար կտրված ապրելու պայմաններում: Սակայն յուրաքանչյուր, թեկուզ անխուսափելի, գործընթաց ունենում է առաջնորդներ: Հայաստանի առաջին հանրապետության նախկին ղեկավարներն էին այն առաջնորդները, որոնք ներմուծեցին «Հոգևոր Հայաստան»-ի գաղափարը և իրենց գործունեությամբ իրականություն դարձրեցին այն: Որպես հայ ազատագրական շարժման և հայ

կական պետության ղեկավարներ, նրանք վաղուց արդեն թրծվել էին համահայկական շահերի բովում: Նրանց ջանքերով և անմիջական աշխատանքով է, որ ստեղծվեց «Հոգևոր Հայաստան»-ը՝ աշխարհասփյուռ հայության վիրտուալ հայրենիքը Հայաստանի սահմաններից դուրս:

Ներկայացվածն ամբողջական չի լինի, եթե անդրադարձ չկատարվի նաև Սփյուռքի մյուս քաղաքական կազմակերպությունների և տարաբնույթ կառույցների գործունեությանը: «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծմանը զուգընթաց հայության առանձին խմբերի կյանքի տարբեր բնագավառները կարգավորող կառույցներ են ստեղծվում նաև Սփյուռքի այնպիսի ազդեցիկ կազմակերպությունների կողմից, ինչպիսիք էին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան և Ռամկավար Ազատական կուսակցությունները: Նրանց ջանքերով ստեղծվում են մշակութային, կրթական, բարեգործական և այլ բնույթի կազմակերպություններ և հաստատություններ, որոնցում ընդգրկվում են հայության այն հատվածների ներկայացուցիչները, որոնք «Հոգևոր Հայաստան»-ի մեջ ընդգրկված չէին: Ավելի է ծավալվում հայրենակցական միությունների աշխատանքը, իսկ սփյուռքահայության մի զգալի մասի հոգևոր ղեկավարությունը ստանձնում է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսությունը: «Հոգևոր Հայաստան» հասկացությունը, որը իրենից, ընդհանուր առմամբ, ներկայացնում էր աշխարհասփյուռ ազգի վիրտուալ հավաքականություն, անկասկած, ամբողջացվեց մյուս կուսակցությունների և կազմակերպությունների՝ համանման նպատակներ հետապնդող գործունեությամբ:

Ուստի՝ ընդգծենք, որ բացի ՀՅԴ-ից, «Հոգևոր Հայաստան»-ի ձևավորման գործին, թեև անուղղակի, մասնակցում էին նաև մյուս հայկական խոշոր կազմակերպությունները: Միմյանցից առանձին՝ նրանք ավարտին էին հասցնում աշխարհասփյուռ ազգի վիրտուալ հավաքականության ձևավորման գործընթացը: Ուստի՝ «Հոգևոր Հայաստան»-ի գաղափարը, բխելով մեկ կուսակցությունից, հետագայում սկսեց ընդգրկել Սփյուռքի ողջ կազմակերպական շրջանակը, թեև վերջինիս համար այն երբևէ չի գործածվել:

Գոյություն ունեւ նաև սփյուռքահայ հոգևոր շրջանակը, որն

ընդգրկումով համասփյուռքյան էր՝ իրենից ներկայացնելով Սփյուռքի մեծ մասի հատվածի հոգևոր իշխանությունը (Հայ առաքելական եկեղեցի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսություն, Հայ ավետարանչական եկեղեցի, Հայ կաթողիկե եկեղեցի):

Ինչ վերաբերում է Հայ Դատի լուծմանն ուղղված քաղաքականությանը, ապա ընդգծենք, որ այդ ձևով հայությունն իրականացնում էր սեփական քաղաքականությունը, որը, սկզբնապես բխելով առանձին կուսակցությունից, այնուհետև նույնպես ստացավ համասփյուռքյան ընդունում: Շուտով սփյուռքահայության գործունեության այդ ասպարեզում ևս սկսեցին գործունեություն ծավալել Սփյուռքի մյուս ազդեցիկ կազմակերպությունները: Սփյուռքահայության վիրտուալ հավաքականությունը՝ համասփյուռքյան «Հոգևոր Հայաստան»-ը, դարձավ իրականություն:

Խոսելով «Հոգևոր Հայաստան»-ի մասին, նշենք, որ ընդհանրության մեջ այն տարանջատված էր տարբեր կազմակերպությունների գործունեության շրջանների և շրջանակների: Կար, սակայն, մի բաղադրիչ, որը միավորում էր բոլոր այդ շրջաններն ու շրջանակները: Դա համահայկական էր, համահայկական շահը:

Հենց համահայկական շահն էր, որ տարաբնույթ, երբեմն՝ նույնիսկ միմյանց դեմ պայքար մղող հայկական կուսակցությունների և կազմակերպությունների գործունեությանը հաղորդում էր համասփյուռքյան ընդգրկում, արդյունքում՝ նրանց ընձեռնելով «Հոգևոր Հայաստան»-ի ամրապնդման, այնտեղ սեփական դերակատարության ապահովման հնարավորություն: Համահայկական շահի գիտակցումն էր, որ Սփյուռքի կուսակցություններին մղում էր ստեղծելու վերոհիշյալ տարաբնույթ դուստր կազմակերպությունները հիմնականում ապակուսակցական սկզբունքով: Այդ պատճառով այս կամ այն կուսակցության և կազմակերպության կողմից ստեղծված կառույցներն ու միությունները հայության կողմից սկսում էին ընկալվել որպես գուտ հայկական կառույցներ՝ կուսակցական կամ կազմակերպական հիմքը մղելով երկրորդ պլան: Վերջինս էլ հնարավորություն էր տալիս նրանց՝ գործունեության սահմաններն ընդարձակելու, այդ սահմաններում հայության նորանոր խմբեր ընդգրկելու: Համահայկական շահն էր, որ Հայ Դա-

տի լուծման պայքարի շուրջ հաճախ միավորում և համատեղ գործունեության էր մղում Սփյուռքի ազդեցիկ կազմակերպություններին: Թեև հաճախ էին առաջ գալիս տարածայնություններ և այն էլ՝ երբեմն ծայրահեղության հասնող, «Հոգևոր Հայաստան»-ը այլևս գոյություն ունեցող իրողություն էր: Հենց սա էր իրական «Հոգևոր Հայաստան»-ը, որի սահմաններն ընդգրկում էին ողջ սփյուռքահայությունը:

Ընդհանուր առմամբ՝ «Հոգևոր Հայաստան»-ը, որպես վիրտուալ հավաքականություն, հայրենիք կամ պետություն բնութագրելիս, պետք է արձանագրել, որ այն՝ իր տարբեր տարածական և մարդկային ընդգրկումներով, կազմում էր մեկ ամբողջություն: Այն ուներ սեփական ժողովուրդը, քաղաքական համակարգը (կուսակցություններ և տարաբնույթ կազմակերպություններ, կառույցներ ու հաստատություններ), գաղափարախոսությունն ու շահերը, ներքին կյանքը, ինչպես նաև վարում էր սեփական քաղաքականությունը՝ պաշտպան կանգնելով համազգային դատին:

Հետագա տասնամյակներում Սփյուռքի քաղաքական կառույցների նորանոր ղեկավարները փոխարինում էին միմյանց, առաջ էին գալիս Սփյուռքին հուզող նոր խնդիրներ, տարբեր կազմակերպությունների միջև առաջանում էին նոր տարածայնություններ, սակայն ապրում էր «Հոգևոր Հայաստան»-ը, որն արդեն դարձել էր կենսունակ: Բացի այդ, նոր տասնամյակները հայությանը նոր խնդիրներ էին առաջադրում, որոնց լուծումը շատ հաճախ պահանջում էր համահայկական ջանքեր:

**«Հոգևոր Հայաստան»-ը Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո:** 1988թ. սկսած «Հոգևոր Հայաստան»-ը զգալի մասնակցություն ունեցավ Արցախյան պայքարին, իսկ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո՝ մեծապես ինտեգրվեց «նյութական հայրենիքի»՝ Հայաստանի Հանրապետության կյանքին: Սփյուռքի կուսակցություններն ու կազմակերպությունները սկսեցին գործունեություն իրականացնել նաև Հայաստանում: Սակայն այդ կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեության մեջ շարունակում է մեծ տեղ զբաղեցնել Սփյուռքը:

Ներկայումս, Հայաստանի Հանրապետության առկայությամբ, «Հոգևոր Հայաստան»-ի գաղափարը կարծես որոշ չա-

փող կորցնում է իր արդիականությունը, քանի որ հայկական անկախ պետականության գոյության պայմաններում Սփյուռքի կուսակցություններն ու կազմակերպություններն անհրաժեշտաբար այն պետք է դարձնեն իրենց գործունեության կենտրոն: Սակայն, շուտով լրանում է Հայաստանի Հանրապետության 20-ամյակը, իսկ Սփյուռքի կուսակցություններից ու կառույցներից միայն ՀՅԴ-ն է, որ իր ղեկավար մարմինը տեղափոխվել է հայրենիք՝ այդ կերպ սեփական գործունեությունը ծավալելով հայրենիքում և հայրենիքից: Այդ իրողությունը ցույց է տալիս, որ «Հոգևոր Հայաստան»-ը դեռևս կենդանի է:

**ԱՐՄԱՆ ԵՂԻԱՋԱՐՅԱՆ**  
պատմական գիտությունների  
թեկնածու

**ՊԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԲԱՂՉՈՒԹՅԱՆ  
ՊԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

«Գաղթ» կամ «գաղթականություն» բառը ընդամենը բառ է, սակայն հայ ժողովրդի համար այն բազմիմաստ շերտեր է պարունակում իր մեջ: Նախ՝ անձնական, զգայական, հոգեբանական, գիտակցական, ընտանեկան, սոցիալ-տնտեսական, ապա՝ հասարակական, քաղաքական, տարածքային, պահանջատիրական և այլն: Քանի որ Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքում արևմտահայության բռնագաղթի անասելի տառապանքները ժողովուրդն ինքն է կրել, հետևաբար ժողովուրդն ինքն է այդ զանգվածային քաղաքական հանցագործության առարկան (object): Եվ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նույնպես և այս պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, որոնցից յուրաքանչյուրը, ապացուցողական նշանակություն ունենալով, հանգամանորեն բացահայտում է երիտթուրքերի, ապա՝ քեմալականների կողմից իրականացված այդ դաժան գործընթացը. նախ՝ պատմական Հայաստանի տարբեր բնակավայրերից (1915-1918թթ.), ապա՝ Կիլիկիայից (1921թ.) և ի վերջո՝ Չմյուռնիայից (1922թ.):

Սասունցի ականատես-վկա **Եղիազար Կարապետյանը** (ծնվ. 1886թ.), վերհիշելով անցյալի պատմական իրողությունները, նկարագրել է 1915թ. Տարոնի դաշտի հայության բռնագաղթը. «*Հունիսի 28-ի օրը ոչ բարով Կարդավառի կիրակին էր. հայ ժողովրդի ուրախության տոնը, ավա՛ղ, դարձավ «մարդավառի» կիրակի՝ Տարոնի դաշտի հայության համար: Կիրակին և հաջորդ գիշերը տեղի ունեցավ Մշո դաշտի գյուղերում անմեղ ու անզեն կանանց և երեխաների բնաջնջումը... Լույս երկուշաբթի առավոտ դաշտի բոլոր մասերում այլևս ոչ մի կենդանի հայ չէր շարժվում: Միայն հրկիզված գյուղերի վրա թանձր ծուխ էր նստել, ճենճահոտը տարածվել էր մթնոլորտի մեջ, որը գալիս, հասնում էր մինչև մեր [Սասնա] լեռները: Այսպես, դարերի ընթացքում հողին ու մաճին կառչած հայաշատ այդ գավառը մի ցրեկվա և մի գիշերվա մեջ դարձավ ամայի՝ անմարդաբնակ, իսկ նրա սեփական տերերը՝ անողոք թուրքերի ու քրդերի*

ծեռքով հրեշային գործողությամբ սրով մորթվեցին, կրակով այրվեցին, ջրով խեղդամահ եղան՝ հարյուր հինգ գյուղերի յոթանասուն-ութուն հազար երկու սեռի պատկանող հայ բնակիչները: Թալանի տրվեց միլիոնների հասնող նրանց հարստությունը»:<sup>1</sup>

Այսպիսով, հազարամյա բնօրրանից, հողից, տնից, տեղից, ունեցվածքից զրկված արևմտահայ վերապրողն իր հուշն ավարտում է հետևյալ խոսքերով. «...Թույլ տվեք ... վերջին անգամ «Մնա՞ք բարով» ասել որբացած հայրենիքին, նրա սրբավայր տաճարներին, հուշարձաններին, ծաղկաբույր լեռներին, արգավանդ դաշտերին, գետերին ու աղբյուրներին և որպես գաղթական մարդ՝ իմ սակավաթիվ հայրենակիցների հետ հյուրընկալվել ու ապրել դեռ սովի, գաղթի ու արյունահեղության մատնված Արևելյան Հայաստանում»:<sup>2</sup>

Գաղթի ճամփաներին զուգահեռաբար հյուսվել է նաև ժողովրդի ցավագին եղերերգը՝ մշեցի **Շողեր Տոնոյանի** (ծնվ. 1901թ.) կողմից.

*«Անտեր թողինք Մշո անուշ դաշտ, դուրան,  
Սուրբ օթևան, տուն ու տանիք ու վաթան,  
Մատուռ ու վանք, գիրք ու կանոն, Ավետարան,  
Մնաց անտեր, մնաց՝ ընկավ շան բերան»»:<sup>3</sup>*

Եվ շարունակում է նշել կորուստները.

*«... Գիշեր ու գօր լաց ու ողբ եմ ես լսում,  
Չունիմ հանգիստ, չունիմ դադար, չունիմ քուն,  
Աչքս փակում՝ մեռելներ եմ միշտ տեսնում,  
Կորցրեցի ազգ, բարեկամ, հող ու տուն»»:<sup>4</sup>*

«... Գաղթը ահավոր իրադարձություն է մի ժողովրդի համար, որը դարեր շարունակ ապրել է իր հարազատ երկրում, - ասել է վանեցի ականատես վկա **Աղասի Քանքանյանը** (ծնվ. 1904թ.) և

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 45:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 453:

<sup>4</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 414:

շարունակել: - Մեր ընտանիքն էլ պատրաստվեց: Մայրիկիս դեկավարությամբ որոշվեց, թե ի՞նչ վերցնենք մեզ հետ, որ դիմանանք տասը օրվա հետիոտն ճամփորդությանը: ... Սկսեցինք շարժվել դեպի գլխավոր փողոցը՝ Խաչփողան: Տներից նորանոր ընտանիքներ էին դուրս գալիս և միանում իրար: Թափորը մեծանում էր ու շարժվում դեպի առաջ: Մենք մինչև Իգդիր հասնելը տասը օր ճանապարհ անցանք, անձրևի տակ, արևի տակ, ցեխերի մեջ՝ կիսաքաղց ու ծարավ: Ծանապարհին քրդերը հաճախ վրա էին տալիս, մարդկանց կոտորում, թալանում: Դա հատկապես տեղի ունեցավ Բանդիմահու կամուրջի մոտ, որտեղ կուտակում էր տեղի ունենում: Այդ կամուրջից ինչքան մայրեր երեխաներին գրկած՝ ջուրն են նետվել, որ թուրվում էին, ովքեր մահանում էին, թողնում էին ճանապարհի եզրին, շատ դեպքերում ծածկում էին հողով, շատ դեպքերում՝ ոչ: Անթաղ դիակներ տեսնելով՝ ես այնպես եմ ազդվել, որ ստացել եմ տխրացավ, և մինչև հիմա այդ շարունակվում է: Ես լիաթոք չեմ կարող ուրախանալ: Չնայած ես մեր թաղի ամենաառողջ երեխան էի, ծյան վրա բոբիկ վազում էի և չէի հիվանդանում, բայց գաղթից հետո այդ կարմրաթուշիկ, առողջ երեխան գունատվեց, խամրեց, տխրեց, դարձավ չխոսկան: Մայրս հայրիկիս ստիպեց ինձ տանել բժշկի: Արդեն մենք երևանում էինք: Հայրս երկու ամսում երկու ոսկի հավաքեց, որ բժշկին տա: Եվ հայրս ինձ տարավ բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանի մոտ, որը գավազանով և ֆայտոնով էր ման գալիս: Բժիշկը քննեց ինձ ու ասաց. - Տղան ոչ մի հիվանդություն չունի:

- Բա ինչի՞ չի խոսում, նիհարել է, գույնը գցել է:

- Որտեղացի՞ եք:

- Վանեցի գաղթական ենք:

- Տղան գաղթի ճամփին այնքան տխուր դեպքեր է տեսել, որ տխրացավ է ստացել, դա հետևանք է գաղթի: Տխուր դեպքերը ազդել են նրա վրա»:<sup>1</sup>

Սա դեռ մեկ երեխայի հոգեբանական-տրավմատիկ վիճակն է եղել: Կարելի է պատկերացնել, թե ինչ են զգացել և ինչպես են

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 98-99:

գոյատևել հարյուր հազարավոր բռնագաղթվածները, որոնք Արաքսն անցնելով, եկել-ծվարել են Արևելյան Հայաստանում:

Բավական է ծանոթանալ նրանց հուշ-վկայություններին, որոնք ընդգրկում են արևմտահայերի ոչ միայն *գաղթը*, այլև՝ նրանց բաժին ընկած *«տեղահանությունը»*, որը ոչ այլ ինչ էր, քան *բռնագաղթ* դեպի սիրիական անապատներ՝ Դեր էլ Ջոր, Սուրում, Ռաս ուլ Այն, Ռաքքա, Մեսքենե, Շեդդադիե և այլ կենդանի գերեզմանոցներ, և այդ բռնագաղթի ընթացքում, պատմության մեջ չլսված ու չտեսնված դաժան ձևերով նրանց ոչնչացրել (ատամները և եղունգները քաշել, ոտքերը պայտել, ծառից գլխիվայր կախել, ողջ-ողջ մաշկահան անել, հղի կանանց փորերը ճեղքել՝ պտուղը ցցի վրա հանել, աղջիկներին խաչել կամ ցցերի վրա նստեցնել, մանուկներին ոտքերից բռնած՝ երկու կես անել, թուրք բարձրաստիճան հեծյալի ոտքերի առաջ հայ պատանիներին խոյի կամ նոխազի փոխարեն գոհ մատուցել և այլ աներևակայելի դաժանություններ):

*Տեղահանության-բռնագաղթի* ընթացքում հայ ժողովուրդն այդ բոլորը տեսել է իր աչքերով, զգացել իր զգայարաններով և իր հետագա կյանքի ընթացքում ևս անընդհատ վերհիշել է մղ-ձավանջային այդ տեսարանները՝ կրկին ու կրկին վերապրելով: Այդ է պատճառը, որ ականատես վկաները վերհիշել են հենց Դեր Ջորի անապատում հորինված թուրքալեզու երգերի ավելի քան 150 քառյակների տարբերակներ.<sup>1</sup>

*«Ձատիկ-կիրակի» չաղըր ստօքթիլեր, Բիթլին էրմենիլերի չտլէ դեօքթիլեր, Բէջի գիբի էրմենիլերի քեսթիլեր, Դինիմին ուղրունա տլէն էրմենի»:*

*«Ձատիկ-կիրակի» վրանները քանդեցին, Բոլոր հայերին անապատը լցրեցին, Այծերի պես հայերին մորթեցին, Հայերն են մեռնում հանում հավատքի»:<sup>2</sup>*

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 418-426:

\* Թուրքալեզու երգի մեջ օգտագործված են հայերեն «Ձատիկ-կիրակի» բառերը:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 421:

*Եվ կամ՝ «Դեր Ջոր դեղիքլերի բիսիւք քասարա, Բէսիլէն էրմենի գէլմեգ հեսափա, Օսմանլը էֆրաթը դեօնմիւշ դասափա, Դինիմին ուղրունա տլէն էրմենի»:*

*«Դեր Ջոր կոչվածն էր մի մեծ տեղավայր, Սորթված հայերին էլ հաշիվ չկար, Օսմանցի պետերը մսագործ դարձան, Հայերն են մեռնում հավատքի համար»:<sup>1</sup>*

Թեպետ անգն ու անդեկ մնացած արևմտահայությունն ինքնապաշտպանական-դիմադրողական հերոսամարտեր է մղել Վանում, Շատախում, Սասունում, Շապի-Գարահիսարում, նաև Կիլիկիայում՝ Մուսա Լեռում, Ուրֆայում, ավելի ուշ՝ Մարաշում, Այնթապում, Հաճընում և այլուր: Սակայն, «Վրեժ» գոռալով, ընկնում է ութ ամիս դյուցազնաբար պայքարած Հաճընը, ընդհատումներով 314 օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, քաջարի «արծվաբույն» Չեյթունը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առևտրի կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր: Ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները, 1921թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայում կնքված պայմանագրով, Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը, որոնք ստիպված բռնում են *գաղթի* ճամփան:

1921թ. Կիլիկիայի հայության պարպումից հետո հերթը հասել էր Անատոլիայի հայերին, որոնց մեծ մասն արդեն եղեռնի ժամանակ անխնա կոտորվել էր, իսկ հրաշքով փրկվածներն իրենց գոյությունը շարունակում էին հունական գերիշխանության տակ գտնվող որոշ հայաբնակ վայրերում և հատկապես նավահանգիստ Ջմյուռնիայում (Իզմիր):

1922թ. քեմալականները հրո ճարակ են դարձնում նաև Ջմյուռնիայի հայկական և հունական թաղամասերը՝ քրիստոնյաներին քշելով ծովափ: Այդ ահասարսուռ իրադարձությունը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Իզմիրի աղետ»:

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 419:

Հուզումով վերհիշելով այդ ահավոր տեսարանները, աֆ-  
իոնգարահիսարցի վերապրող Արփինե Բարթիկյանը (ծնվ.  
1903թ.) վկայել է իր տեսածն ու զգացածը. «...Մեյ մըն ալ  
սկսավ միլիական (ազգայնական - թուրք.) շարժումը: Իզմիրը  
կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ս. Ստեփանոս  
եկեղեցին այրեցին: Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին  
մտած էին, որ պաշտպանվեն: Վերջը հայերս փախանք, գնա-  
ցինք ծովեզերք: Ծովին վրա լի՞քը նավակներ էին, բայց թուր-  
քերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուրը լցվի ու  
հայերը չկրնան ազատվիլ: Նավակ էին նստում խեղճ հայերը,  
քիչ մը կլողար նավակը, վերջը՝ լը՛կ-լը՛կ, ջուրը կլեցվեր մեջը,  
բոլորը ծովի մեջ շուռ կուզային: Ծովի վրա լի՞քը ուռած  
մարմիններ էին»:<sup>1</sup>

Եվ ժողովրդի տառապանքի հետ դարձյալ հյուսվել է գաղթի  
տխրաթախիժ եղերերգը.

*«Աֆիոնեն՝ դուրս էկանք,  
Իզմիր քաղաքը մտանք,  
Ազիզ մորս չգտա.  
Հոնկու ի-հոնկու ի լաց եղա:*

*Ա՛խ, մամա՛ ջան, խաբեցին,  
Ինձի քեզնից բաժնեցին,  
Քեզ ալ կրակը նետեցին.  
Չըթը ի-չըթը ի այրեցին...»*<sup>2</sup>

Գրությունն օրհասական էր ու անել. ետևը՝ հուր, առաջը՝  
ջուր: Թոհ ու բոհի այդ գեհեմից ազատվում էին միայն նրանք,  
ովքեր իրենց մնացած վերջին ոսկեդրամներն ու զարդերը տա-  
լիս էին թուրքերին՝ իրենց կյանքը փրկելու համար, իսկ նրանք,  
ովքեր ոչ մի միջոց չուներին, արհամարհելով մահը, նետվում էին  
ծովի հուժկու ալիքների մեջ՝ լողալով հասնելու հեռվում խա-  
րիսխ գցած եվրոպական դրոշներ կրող շոգեմավերին, որոնք  
հայ անտունիներին տանելու էին ուր որ պատահեր.

<sup>1</sup> Ավազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 334:

<sup>\*</sup> Աֆիոն-Գարահիսար քաղաքը:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 433:

*«...էլանք Պոլիս գնացինք,  
Ժամուն դուռը մնացինք,  
Հաց ու գեյթուն տվեցին,  
Երեք օր մեզ պահեցին:*

*Անկե փախանք Հունաստան,  
Շատ շատերն ալ՝ Ֆրանսա,  
Մեկալները՝ Եգիպտոս.  
Սապես ցրվանք ամեն կողմ»*<sup>1</sup>

Եվ ստեղծվեց Հայ Սփյուռքը որպես պատմական իրողու-  
թյուն:

Պապենական հողից արմատախիլ եղած հայ գաղթական-  
ներն անձանոթ երկրներում, անտեղյակ օտար լեզուներին ու  
օրենքներին, միայն էժան աշխատուժ էին, ինչքան էլ որ օտար-  
ների հիացմունքին արժանանային հայկական տոհմիկ արիես-  
տավորների վարպետությունը և կամ՝ բազմաշնորհ հայ կա-  
նանց նրբագեղ ձեռագործներն ու գորգերը: Այնինչ ծուլունի,  
այլասերունի և մանավանդ գործազրկության սարսափը հան-  
գիստ չէր տալիս աստանդական հայերին.

*«...Օտարության մեջ ինկեր ենք,  
Կուլամ կարոտո՛վ-կարոտո՛վ,  
Հայ խնդիրը լուծվեր շուտով.  
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛:*

*Ուրախացիր, մի՛ լար տխուր,  
Ոտքիդ վրա կայնի՛ր ամուր,  
Շուտով կլսես Ներգաղթի լուր.  
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛»*<sup>2</sup>

Ու ներգաղթի իրարահաջորդ քարավաններով սկսվում է  
անտուն ու անհայրենիք մնացած արևմտահայերի Հայրենա-  
դարձությունը դեպի Արևելյան Հայաստան. նախ՝ 1920-1930-  
ական թթ. Կոստանդնուպոլսից, Ֆրանսիայից և Հունաստանից:  
Ապա՝ 1946-1948թթ. զանգվածային հայրենադարձությունը

<sup>1</sup> Ավազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 334:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 456:

Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրաքից, Ֆրանսիայից, Յունաստանից, բալկանյան երկրներից և հեռավոր Ամերիկայից...

Եվ նոր ժամանակների հետ զուգընթաց հյուսվել է նաև ժողովրդական հայրենաբաղձ երգը.

*«Կարոտցեր եմ քեզի, շքեղ Երևան,  
Շատ ծովերեն բարձր ոսկե լիճ Սևան,  
Չկներ ունիս խորքումդ՝ կողակ ու իշխան,  
Յոգիս վկա լինի, կյանքս քեզ կուտամ:*

*Յե՛յ ջան, Երևա՛ն, դու իմ Յայաստան,  
Յե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան:*

*Երևա՛ն, սիրելիս, դու միշտ անսասան,  
Շրջապատված ունիս այգի, բուրաստան,  
Օդդ, ջուրդ՝ անուշ, տեսքդ՝ աննման,  
Ով չի սիրում քեզի՝ հայ չէ իսկական:*

*Յե՛յ ջան, Երևա՛ն, դու իմ Յայաստան,  
Յե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան...»<sup>1</sup>*

Եվ կամ՝

*«...Լուսնակ գիշեր քեզ կկանչեն ու դուն չես լսեր,  
Կարոտցեր եմ ազիզ եղբորս. քունս չի տանիր:*

*Անապատի փշերից դեն քշի՛ր քո ծամփան,  
Կարոտցեր եմ Մասիս լեռան. քունս չի տանիր:*

*Յայաստանեն նավը եկավ դեպի Լիբանան,  
Լիբանանեն հայեր տարավ դեպի Յայաստան...  
Ա՛յ քարավան, ջա՛ն քարավան, քշի՛ր Յայաստան,  
Կարոտցեր եմ Յայրենիքիս. քունս չի տանիր»<sup>2</sup>*

Յայրենադարձները խորհրդային Յայաստան էին գալիս լի հույսերով ու հավատով: Գալիս էին հայրենադարձների խու-

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Յայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 456:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 457:

ոներամ քարավանները՝ ոգեշնչված Երկրորդ Աշխարհամարտում խորհրդային Միության նվաճած հաղթանակով և մանավանդ նրա 1945թ. նոյեմբերի 1-ին թուրքիային առաջադրած հայկական ու վրացական հողերի պաշտոնական պահանջով... Ու մեծ հույսերի հետ բերնից բերան հյուսվում էր նաև ժողովրդական երգը.

*«Յայաստան երթալ կուզեմ,  
Երևան տեսնալ կուզեմ,  
Արարատի գագաթին  
Դրոշակ պարզել կուզեմ»<sup>1</sup>*

Այդ օրերին է հյուսվել նաև պահանջատիրական շեշտադրությամբ հետևյալ երգը.

*«Քշի՛ր, հե՛յ ջան քարավան,  
Մեզ կսպասե Յայաստան.  
Թող ողջ աշխարհն իմանա՝  
Մերն է Կարսն ու Արդահան:*

*... Կուզենք զայն, կուզենք զայն.  
Մերն է Կարսն ու Արդահան,  
Թե չիտան՝ զեն-գորքով  
Պիտի առնե Բաղրամյան:*

*... Կարս-Արդահանը մեզի  
Պիտի շուտով դարձվի,  
Որ այդ հողերն ամայի  
Փոխակերպենք դրախտի»<sup>2</sup>*

Թեպետ հայրենագրկված ու անտուն մնացած արևմտահայ հայրենադարձները, Յայրենիքում հաստատվելով, իրենց կորցրած պատմական Յայաստանից 10 անգամ փոքր հողատարածքի վրա, ստեղծում են բնօրրանի հիշատակները խորհրդանշող ավաններ ու թաղամասեր (Նոր Կիլիկիա, Նոր Ջեյթուն, Նոր Մարաշ, Նոր Յաճըն, Նոր Այնթապ, Նոր Մուսա Լեռ և այլն),

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Յայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 456:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 457:



սակայն երբեմնի ավերակված տան, հանգած օջախի մրմուռը շարունակում է մխալ նրանց հիշողության մեջ, ու, բռնազավթված Երկրի երազանքը հոգու կանչ դարձած, ավանդվում է սերնդից սերունդ.

*«Երբ որ բացվին դռներն հույսի,  
Եվ մենք Երկիր դառնանք կրկին,  
Չքնաղ երկիր մեր Հայրենյաց,  
Որ բռնությամբ առին մեզնից:*

*Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.  
Օղը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ,  
Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.  
Վանքեր, բերդեր հոնտեղ շա՛տ կան:*

*Երբ որ լուծվի Հայոց Հարցը,  
Եվ մեզ տրվի նախնյաց հողը,  
Մենք կվարենք մեր արտերը,  
Կշենացնենք մեր գյուղերը:*

*Ցանկամ տեսնել Սասուն ու Վան,  
Ջեթուն, Հաճըն և Մուսա Դաղ,  
Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,  
Կծաղկացնենք մենք անպայման»<sup>1</sup>*

Այնպես որ, արևմտահայ հայրենադարձներն Արևելյան (Խորհրդային) Հայաստան էին գալիս նաև իրենց բռնազավթված Երկրի արդարահատույցի մեծ հույսերով: Սակայն այլ էին պատմական հանգամանքները...

Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղորդած բանահյուսական նյութերի մեջ արժարժվել է նաև ժողովրդական հստակ մտածելակերպն արդի միջազգային քաղաքական հարաբերությունների և Արցախյան հիմնահարցի վերաբերյալ.

*«Ղարաբաղը մեր փոքրիկ*

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 454:

*Մասն է Հայոց աշխարհի,  
Ինչու՞ թողնենք օտարին,  
Երբ հայերն են հոն բնիկ»<sup>1</sup>*

Եվ ժողովրդական երգը հնչում է որպես միասնական պայքարի համազգային պատգամ.

*«Մեր հայ եղբայրներ, մենք շա՛տ լռեցինք,  
Բավական է մեզ ասչափ համբերենք.  
Մեր Ղարաբաղը մեզնից խլեցին,  
Հիմա ուժ ունենք՝ ետ առնենք նորից»<sup>2</sup>*

Արցախահայության պատմական այդ մեծ խիզախունը ևս դարձել է այսօրվա Սփյուռքում ապրող արևմտահայերի ստեղծագործական ներշնչանքի աղբյուր, քանզի այն խորհրդանշում է նաև բռնազավթված Հայրենի Երկրի ազատագրման նվիրական երազը...

**ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ**  
բանասիրական գիտությունների դոկտոր  
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի առաջատար գիտաշխատող

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 457:

<sup>2</sup> Նույն տեղում:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ  
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ  
ԲԱԺԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ**

1917թ. դեկտեմբերին Խորհրդային Ռուսաստանի Ժողովուրդի որոշմամբ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծվեց Հայկական գործերի կոմիսարիատ\*, որի հիմնական նպատակն էր՝ հայաբնակ վայրերում Խորհրդային քարոզչության (Կոմիսարիատը տարբեր քաղաքներում հրատարակում էր թերթեր՝ «Կարմիր դրոշակ», «Կարմիր օրեր», «Կարմիր բանվոր», «Կայծ», «Բանվորի կռիվ» և այլն) իրականացումը և դրանով իսկ՝ այդ վայրերում Խորհրդային իշխանության հստատման գործընթացի հեշտացումը: Հայկական գործերի կոմիսար նշանակվեց Վառլամ Ավանեսովը, իսկ նրա տեղակալն էր բանաստեղծ Վահան Տերյանը, որը, միաժամանակ, զբաղեցնում էր նաև կոմիսարիատի քարտուղարի պաշտոնը: Հայկական գործերի կոմիսարիատը ուներ յոթ բաժին. դրանք էին՝ տեղեկատվության և կապի, կուլտուր-լուսավորչական, հրատարակչական, գաղթականական և սոցիալական ապահովության (երբեմն օգտագործվել է նաև՝ օգնության), ռազմական, ագիտացիայի և վիճակագրության<sup>1</sup> բաժինները: Կոմիսարիատի պաշտոնաթերթն էր «Կոմունիստ» շաբաթաթերթը:

Գործունեության ընթացքում Հայկական գործերի կոմիսարիատը իր ներկայացուցչությունները հիմնեց Ռուսաստանի հայաշատ քաղաքներում, ինչպես նաև այն վայրերում, որտեղ Հայոց ցեղասպանությունից և, հատկապես, 1918թ. թուրքական ներխուժումից հետո կենտրոնացել էին հայ գաղթականների մեծ խմբեր, մասնավորապես՝ Աստրախանում, Սարատովում,

\* Նշենք, որ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատում գոյություն են ունեցել վեց կոմիսարիատներ՝ բելոռուսական, լատիշական, լեհական, հրեական, հայկական ու մահմեդական և տասերկու բաժիններ՝ գերմանական, զիրյանական, էստոնական, կալմիկական, կիրգիզական, Կովկասի լեռնցիների, հարավային սլավոնների, չեխոսլովակների, մարիական ժողովուրդների, չեխոսլովակների, չուվաշական, վուտկինյան և ուկրաինական:

<sup>1</sup> Ալիխանյան Ս.Տ., Հայկական Գործերի Կոմիսարիատի գործունեությունը, Երևան, 1958, էջ 28-32:

Դոնի Ռոստովում, Արմավիրում, Կիևում, Խարկովում, Օդեսայում, Բաքվում և այլն:

Կոմիսարիատի ջանքերի շնորհիվ, կարճ ժամանակաշրջանում, Աստրախանում և Հյուսիսային Կովկասի այլ քաղաքներում գաղթականների համար բացվեցին որբանոցներ և հիվանդանոցներ, նրանց մեծ մասին, թեկուզ և ժամանակավոր, ապահովեցին բնակարաններով կամ տեղավորվեցին հանրակացարաններում, գաղթականությանը հատկացրեցին մեծաքանակ բազմապիսի օգնություն:

Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո, կարճ ժամանակ անց, 1921թ. մարտի 5-ին, Հայկական հորձերի կոմիսարիատը լուծարվեց. վերջինիս ողջ ունեցվածքը հանձնվեց Մոսկվայում Խորհրդային Հայաստանի նորաստեղծ ներկայացուցչությանը:

Ստորև հրապարակվող փաստաթուղթը Հայկական գործերի կոմիսարիատի տեղակալ Վահան Տերյանի կազմած հաշվետվության այն հատվածն է, որը ներկայացնում է Կոմիսարիատի գաղթականության և սոցիալական ապահովության բաժնի գործունեությունը: Փաստաթղթի լուսապատճեն պահվում է Հայաստանի ազգային արխիվում, իսկ բնօրինակը՝ Ռուսաստանի պետական պատմական արխիվում: Փաստաթուղթը հրապարակական որոշ շտկումներով: Փաստաթղթի վերնագիրը բնագրին է:

**ԷՂԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
պատմական գիտությունների  
թեկնածու

**N 1**  
**ОТЧЕТ О ДЕЯТЕЛЬНОСТИ КОМИССАРИАТА ПО**  
**АРМЯНСКИМ ДЕЛАМ ПРИ НАРОДНОМ КОМИССАРИАТЕ**  
**ПО ДЕЛАМ НАЦИОНАЛЬНОСТЕЙ**

25.11.1918  
Москва

...Беженский отдел<sup>1</sup> Комиссариата возник в конце мая текущего года. Не имея никаких средств Отдел естест-

венно, в первую очередь, поставил себе задачей добыть средства для открывающейся перед ним широкой деятельности. С этой целью Отдел вошел с ходатайством перед Комиссариатом Внутренних Дел, который и ассигновал шесть с лишним миллионов рублей для оказания помощи беженцам-армянам.

Имея в своем распоряжении такую сумму, Отдел приступил к организации медико-санитарного отряда для отправки в город Поволожья и на Северный Кавказ.

Первый отряд выехал 29-го июля в Астрахань во главе с тов. Теруаном, взяв с собой нужную сумму денег<sup>2</sup> и два вагона с медикаментами и другими товарами, для нужд беженцев Астрахани и Северного Кавказа. Организовав в Астрахани дело помощи беженцам, широкой волной хлынувших туда, отряд назначил уполномоченного и направился на Северный Кавказ, где им был учрежден Беженский Отдел при Пятигорском Отделении Комиссариата. Вслед за этим отрядом была отправлена в Астрахань новая партия товара (два вагона). В то же время в гор. Саратов по адресу беженской комиссии при местном совдепе отправлено два тюка мануфактуры.

После отправки отряда на Северный Кавказ намеренно было приступлено к организации отряда для отправки в Закавказье на помощь беженцам армянам, но, ввиду конфискации Грузинским Правительством<sup>3</sup> имущества и денег Всероссийского Красного Креста, предназначенны для оказания помощи беженцам в Закавказье. Отдел пока оставил новое намерение отправить специальную миссию и в контакте с международным обществом Красного Креста старается организовать беженское село в Закавказьи на интернациональных началах.

Ввиду поступления сведений о колоооссальном наплыве беженцев армян в города Поволожья после падения Баку, очередной задачей Отдела была организация и отправка отряда на помощь беженцам в вышеназванный край. Поволожский отряд для оказания помощи беженцам в Закавказьи выехала 1-го октября во главе с особо-уполномоченным

тов. Джараяном<sup>5</sup>. Для вспомоществования беженцам отряду ассигновано два миллиона рублей. Вместе с отрядом отправлено два вагона мануфактуры, белья, обуви. Работа отряда будет вестись по следующей инструкции: а) Врачебно-санитарная помощь, б) Питательная (питательные пункты, чайные, столовые), в) Трудовая (организация рабочих дружин, мастерских, швейных, столярных, сапожных, кузнечных, слесарных и т.д., г) Помощь детям (выделение детей из общей массы, приюты для детей и сирот, детские сады, начальные школы).

Отряд с целью организовать массы, создает беженские Комитеты из неимущих беженцев и в своей деятельности вообще придерживается нитрализации, стремится вложить в свою работу трудовой принцип.

Беженский Отдел в первых числах октября отправил одного своего представителя в Киев, другого в Ростов, третьего в Крым для оказания помощи и содействия правильному передвижению военно-пленных и беженцев армян. на первое время для этой цели ассигновано 150 000 р.

Деятельность же Беженского Отдела в центре, кроме организации отрядов для отправки в провинцию, состоит в оказании помощи беженцам и военно-пленным выдачей пособия на путевые расходы для отправки на Родину.

Отделом оказывается также помощь и разным лицам, очутившимся на положении беженцев, в числе их студентам и курсисткам. Отдел предполагает открыть в Москве общежитие для нуждающихся учащихся Высших Учебных заведений, на что Комиссариатом Социального Обеспечения ассигновано 10 000 рублей.

Кроме того, в самой Москве открыты два убежища: одно при так называемом Касперовском приюте, другое на Ваганковском кладбище. Первое предназначено для беженцев, едующих через Москву в другие города. Второе для беженцев длительно пребывающих в Москве.

Согласно последним сведениям поступившим из Астрахани, Поволожский отряд помощи беженцам в срочном порядке создал в Астрахани приют для детей беженцев. Приня-

ты меры к организации и второго приюта.

Ввиду большого процента больных среди беженцев также приняты меры к расширению существующей больницы для беженцев.

Сформирован врачебно-санитарный отряд снабженный госпитальным имуществом, который уже выехал на Северный Кавказ. Подготавливается второй врачебно-санитарный отряд для отправки на Северный Кавказ. Наказом для всех отрядов служит прежде всего помощь детям...

Зам. Комиссар В.Терян

ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 978ա, ք. 5-7: Լուսապատճեն: Մեքենագիր:

### Ծանոթագրություններ

1. Վահան Տերյանի կողմից ներկայացվող Հայկական գործերի կոմիսարիատի սույն հաշվետվության մեջ գաղթականության և սոցիալական ապահովության բաժնի գործունեությունից բացի ներկայացվում է նաև գրական-հրատարակչական, կուլտուր-լուսավորչական, ռազմա-քարոզչական բաժինների գործունեությունը:

2. Գումարի չափը կազմել է 2 մլն ռուբլի, որից միայն 1.5 մլն ռուբլին է նախատեսված եղել Աստրախանում գտնվող հայ գաղթականների համար:

3. Խոսքը վրաստանի մենշևիկյան կառավարության մասին է:

4. Հ.Ջառայանը եղել է Հայկական գործերի կոմիսարիատի ռազմա-քարոզչական բաժնի վարիչը և կոմիսարիատի կոլեգիայի անդամ:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌ ԿԱԴԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Հայաստանը, զբաղեցնելով աշխարհաքաղաքական կարևոր դիրք. իր ողջ պատմության ընթացքում հանդիսացել է ժամանակի հզոր պետությունների բախման կիզակետ, որի հետևանքով Հայաստանից մշտապես կատարվել է արտագաղթ: Որպես արդյունք, բազմաթիվ երկրներում առաջացան հայկական համայնքներ, որոնց անդամների թիվն էլ ավելի ստվարացավ, երբ 1915թ. Օսմանյան Թուրքիան իրականացրեց հայերի ցեղասպանությունը: Հայերը, զրկվելով հայրենիքում ապրելու հնարավորությունից, սփռվեցին աշխարհի տարբեր երկրներում: Այսպիսով, առաջացավ գաղթաշխարհի նոր տեսակի անվանում՝ սփյուռք:

Ցեղասպանությունից կարճ ժամանակ անց իր ծնունդն ավետեց և 2 տարի անց իր «մահկանացուն» կնքեց Հայաստանի առաջին Հանրապետությունը, որին հաջորդեց Խորհրդային Հայաստանը:

Այսպիսին էր իրավիճակը, երբ սկսեց ձևավորվել Հայաստան-սփյուռք կապերը:

Խորհրդային Հայաստան-սփյուռք կապերի պատմությունը կարելի է բաժանել երկու փուլի:

1. Հայաստան-սփյուռք կապերի պատմության առաջին փուլը ընդգրկում է 1921-1937թթ.:

Հայաստան-սփյուռք կապերն առավել արդյունավետ դարձնելու համար Խորհրդային Հայաստանի ղեկավարությունն ընտրեց այդ աշխատանքների (կապերի ստեղծման) կազմակերպման հետևյալ սկզբունքը (համակարգված մոտեցումը).

1. վերլուծել հանրապետությունում առկա իրավիճակը և տալ (նշել) հայ հասարակության զարգացման ուղղությունները

2. ելնելով առկա իրավիճակից՝ ընտրել կոնկրետ նպատակ

3. նպատակին հասնելու համար մշակել ծրագրային համապատասխան կետեր

4. այդ կետերի իրականացման համար ստեղծել համապատասխան մարմին:

Անդրադառնալով 1-ին կետին նշենք, որ այդ ժամանակ Խոր-

հրդային Հայաստանը գտնվում էր շատ ծանր իրավիճակում. ծայրահեղ վատ պայմաններում ապրող տեղաբնակներին միացել էին Արևմտյան Հայաստանից գաղթած անօթևան և սովյալ գաղթականները: Միաժամանակ, անդրադառնալով հասարակության զարգացման ուղղությանը նշենք, որ Խորհրդային Հայաստանում այդ ժամանակ «տիրում» էր բոլշևիկյան միակուսակցական համակարգ (բացառվում էր այլ քաղաքական ուժի, այդ թվում և սփյուռքահայ, ներկայությունը) և կառուցվում էր սոցիալիզմ (բացառվում էր մասնավոր, այդ թվում և սփյուռքի, տնտեսական կապիտալի առկայությունը ՀՍԽՂ-ում):

Այսպիսով, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը վերլուծելով հանրապետությունում առկա իրավիճակը և գիտակցելով հայ հասարակության զարգացման ուղղությունը, ընտրեց Հայաստան-սփյուռք կապերի զարգացման՝ իր համար գերադասելի (ճիշտ) նպատակը՝ սփյուռքի տնտեսական (հումանիտար) օգնությունը Հայաստանին:

Երբ հստակեցվեց նպատակը, ՀՍԽՂ ղեկավարությունն ընտրեց այն ոլորտները, որոնք առավել արդյունավետ կդարձնեին այդ օգնությունը.

1. բնակարանաշինություն (անհրաժեշտ էր անօթևաններին ապահովել բնակարաններով)
2. գյուղատնտեսություն (անհրաժեշտ էր սովյալներին ապահովել պարենամթերքով)
3. կրթամշակութային (զարգացած հասարակություն ունենալու համար անհրաժեշտ են կրթված մասնագետներ)
4. առողջապահություն (զարգացած հասարակություն ունենալու համար անհրաժեշտ է նաև առողջ սերունդ),
5. ներգաղթի կազմակերպում (վերջինիս ընտրությունը բացատրվում էր Խորհրդային Հայաստանի ժողովրդագրական բացասական պատկերի առկայությամբ):

Միայն վերլուծական այդ աշխատանքներից հետո Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը հիմնեց այն մարմինը, որը իրականացնելու էր Հայաստան-սփյուռք կապերի վերոնշյալ կետերը: Այդ մարմինն էր Հայաստանի օգնության կոմիտեն, որի առաջին նախագահ ընտրվեց Հովհաննես Թումանյանը, մարդ, ով, իր էությամբ, մեծ վստահություն էր ներշնչում թե ՀՍԽՂ և թե սփյուռքահայ հասարակության մոտ: Նախագահի

անձի ընտրությունը պատահական չէր: Այդ քայլով Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը ընդգծեց այն կարևոր դերը, որ ուներ Հայաստան-սփյուռք կապերն իր համար: ՀՕԿ-ի հիմնադիր անդամներ դարձան Խորհրդային Հայաստանի հա-նրա-ճանաչ և հեղինակավոր գործիչները, մասնավորապես՝ Պողոս Մակինցյանը, Ալեքսանդր Բեկզադյանը, Արտաշես Կարինյանը, Սաքո Համբարձումյանը, Մանուկ Աբեղյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Մալխասյանը, Ռոմանոս Մելիքյանը, Մարտիրոս Սարյանը, և այլոք:

Համառոտակի անդրադառնալով սփյուռքի իրականացրած օգնությանը:

**Բնակարանաշինություն:** Սփյուռքի օգնությամբ Հայաստանում կառուցվեցին Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա, Նոր Արաբկիր, Նոր Բութանիա, Նոր Խարբերդ և այլ ավաններ ու առանձին շենքեր: Հատկապես զգալի էր սփյուռքի օգնությունը Լենինականի 1926թ. աղետալի երկրաշարժի ժամանակ:

**Գյուղատնտեսություն:** Սփյուռքի ֆինանսական աջակցությամբ Հայաստանում, մասնավորապես Արարատյան դաշտավայրում, կատարվեցին ճահիճների չորացման աշխատանքներ: Սփյուռքահայերի օգնությամբ գնվեցին բազմաթիվ և բազմապիսի գյուղատնտեսական մեքենասարքավորումներ և այլն:

**Կրթամշակութային ծրագրեր:** 1920-ական թթ. սկզբներին բավականին ծանր իրավիճակում էր գտնվում նաև այս բնագավառը, մասնավորապես դպրոցները զուրկ էին գրեթե ամեն ինչից: Այդ իսկ պատճառով, 1922թ. Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը պատրաստեց «Հայաստանում դպրոցների վիճակը և դրանց կարիքները» վերնագրով ժողովածու և այն ուղարկեց սփյուռք: Նախաձեռնությունը զուր չանցավ: Ընդհուպ մինչև 1930-ական թթ. կեսերը, Հայաստանի կրթական հաստատությունները՝ դպրոցները, համալսարանը և այլն, սփյուռքից ստացան ինչպես գույք, այնպես էլ գրքային հարուստ ֆոնդ:

Չերկարացնելու համար նշենք, որ օգնություն ստացավ նաև **առողջապահության** բնագավառը:

Ցանկանում ենք հատուկ շեշտել այն հանգամանքը, որ սփյուռքից ստացված օգնության բաշխման հարցը գտնվում էր Խորհրդային Հայաստանի ղեկավարության և ՀՕԿ-ի խիստ վե-

րահսկողության ներքո: ԴՕԿ-ի համագումարների ժամանակ համապատասխան զեկուցումներով հանդես էին գալիս վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ովքեր ներկայացնում էին ինչպես ստացված, այնպես էլ բաշխված օգնության պատկերը: Իսկ այդպիսի համագումարներ անցկացվում էին բավականին հաճախ: Մասնավորապես Հայաստան-սփյուռք առաջին համագումարը տեղի է ունեցել ոչ թե 1999թ. սեպտեմբերին, ինչպես շատերն են նշում, այլ 1922թ. ամռանը: Համագումարին մասնակցել է 68 պատվիրակ: Ավելին, որպեսզի ստացված օգնության պատկերը միայն փաստաթղթային «չոր» տեսք չունենար, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման (ըստ կոմունիստների՝ հայկական պետականության վերականգման) տարեդարձների տոնակատարություններին հրավիրում էր սփյուռքահայերի, ովքեր իրենց աչքով էին տեսնում այդ օգնությունը: Տվյալ տոնակատարություններն իրենցից ներկայացնում էին հայկական պետականության պրոպագանդա, որն էլ ավելի էր ոգևորում սփյուռքին և ամրապնդում Հայաստան-սփյուռք կապերը:

Ցանկանում ենք ավելացնել, որ Հայաստան-սփյուռք՝ 1921-1937թթ. կապերի կարևորագույն կետերից էր նաև ներգաղթի հարցը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը ցեղասպանության և դրան հաջորդած տարիներին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ունեցել էր մարդկային զգալի կորուստներ, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը կազմակերպեց սփյուռքահայերի ներգաղթ, որի արդյունքում 1921-1937թթ. Հայաստան ներգաղթեց մի քանի 10-յակ հազար մարդ:

Սակայն, Հայաստան-սփյուռք կապերի վերելքը կատցվեց 1937թ.-ին, երբ Խորհրդային Միությունում, այդ թվում նաև Խորհրդային Հայաստանում, ծայր առան ստալինյան բռնությունները, որոնց զոհ գնացին ինչպես ԴՕԿ-ի զգալի թվով անդամներ, այնպես էլ բազմաթիվ ներգաղթած սփյուռքահայեր: Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ լուծարվեց ԴՕԿ-ը: Հայաստան-Սփյուռք կապերը ամբողջովին խզվեցին:

1941թ. սկսված Հայրենական մեծ պատերազմը ստիպեց ԽՍՀՄ ղեկավար Ստալինին մեղմացնելու ազգային-կրոնական

հարցերի նկատմամբ ունեցած իր կարծի տեսակետները: Այդ մեղմացումը նպաստեց Հայաստան-սփյուռք կապերի վերականգնմանը:

II. Հայաստան-սփյուռք կապերի պատմության երկրորդ փուլ՝ 1945-1990թթ.:

Այս փուլում ևս Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը Հայաստան-սփյուռք կապերն առավել արդյունավետ դարձնելու համար կրկին ընտրեց այդ աշխատանքների (կապերի ստեղծման) կազմակերպման նույն՝ I փուլի սկզբունքը.

Անդրադառնալով այդ 4 կետերից յուրաքանչյուրին՝ նշենք.

1. ա) Խորհրդային Հայաստանի տնտեսական դրությունը 1920-ական թթ. սկզբների հետ համեմատած այդ ժամանակ բավականին բարվոք էր:

բ) Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո գաղափարախոսական երկու ճամբարների (կապիտալիզմ և սոցիալիզմ) միջև սկսվել էր սառը պատերազմ և հակառակորդի՝ կապիտալիզմի (իսկ սփյուռքահայերը հինմականում բնակվում էին այդ ճամբարում՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Հունաստան և այլն) ճամբարից օգնություն ստանալը հակասում էր ԽՍՀՄ գաղափարախոսությանը: Վերոնշյալի ապացույցն է հանդիսանում նաև այն փաստը, որ պատերազմի ավարտից հետո Խորհրդային Միությունը հրաժարվեց Մարշալի հանրահայտ ծրագրից:

2. Վերոնշյալ պատճառով ՀԽՍՀ ղեկավարությունը չէր կարող Հայաստան-սփյուռք կապերի հիմքում դնել օգնության խնդիրը, չնայած, օգնության կարիք զգում էր:

Աշխարհաքաղաքական այդ իրավիճակում երկու ճամբարների միջև սկսվեց մրցակցություն: Կապիտալիզմի ճամբարի գերիշխող ԱՄՆ-ը ձգտում էր իր ազդեցությունը տարածել սոցիալիզմի ճամբարի երկրների վրա, իսկ սոցիալիզմի ճամբարի գերիշխող ԽՍՀՄ-ը, իր հերթին, ձգտում էր իր ազդեցությունը տարածել հակառակորդ ճամբարի երկրների, այդ թվում նաև սփյուռքահայերի վրա: Բնականաբար, տվյալ պայմաններում Հայաստան-սփյուռք կապերի նպատակը կարող էր լինել Խորհրդային Միության մաս կազմող Խորհրդային Հայաստանի ազդեցության տարածումը սփյուռքի վրա: Դա իրականացնելու համար պետք է պրոպագանդվեր Խորհրդային Հայաստանի նվաճումները: Այդ պրոպագանդան անուղղակիորեն պետք է

գովերգեր սոցիալիզմը, քանզի Խորհրդային Հայաստանի նվաճումները իրականացվել և իրականացվում էին սոցիալիզմի ժամանակ: Ազդեցության տարածման այդ գործընթացը, ինքնին, մեծապես նպաստելու էր սփյուռքի հայապահպանությանը, քանզի ԽՍՀՄ-ը շահագրգռված էր, որպեսզի հնարավորինս թվով շատ հայեր լինեին Խորհրդային Հայաստանի, այսինքն՝ Խորհրդային Միության «ջերմ բարեկամներ»: Այսպիսով, Հայաստան-սփյուռք կապերի այս փուլի նպատակը դարձավ սփյուռքի հայապահպանությունը և Խորհրդային Հայաստանի պրոպագանդան:

Նպատակի ընտրությունից հետո անհրաժեշտություն ծագեց ավելի լայն և հստակ պատկերացում կազմել սփյուռքի մասին: 1945թ. հուլիսի 10-ին ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ և արտգործօժոկոմ Սահակ Կարապետյանը հաստատեց արտասահմանյան երկրներում բնակվող հայկական համայնքների ուսումնասիրման հրահանգը: Նշենք այդ հրահանգի մի քանի կետերը.

1) հայկական համայնքի առաջացման պատմությունը, - այսինքն՝ երբ է այդ երկրում առաջացել հայկական համայնքը, որ երկրից և ինչու են եկել, ինչպես են վերաբերվում տեղական իշխանությունները և բնակչությունը հայ համայնքի վերաբերյալ,

2) հայ համայնքի քանակը այդ երկրներում, - այսինքն՝ հայ բնակչության թվաքանակի փոփոխության դինամիկան, նրանց տեղաբաշխվածությունը այդ երկրում (որքան են բնակվում քաղաքներում և շրջաններում), համայնքի սոցիալական կազմը,

3) տնտեսական վիճակը,

4) ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև հայ համայնքի քաղաքական և իրավական վիճակը,

5) հայկական մամուլը և այլն:

Արդեն 1945թ. հոկտեմբերին ՀԽՍՀ արտգործօժոկոմատը կազմեց տեղեկանք հայկական 29 համայնքի վերաբերյալ: Տարիների ընթացքում հարստացվում էին Սփյուռքի վերաբերյալ եղած տեղեկությունները:

3. Ստեղծված իրավիճակում հայապահպանությունն ապահովելու համար առաջացել էր կարիք՝ իրականացնելու բազմաթիվ և բազմապիսի աշխատանքներ, մասնավորապես, ծրագրվում էր սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում, սփ-

յուռքահայ դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումը Հայաստանի պիոներական ճամբարներում, Հայաստանի տարբեր բուհերում սփյուռքահայ ուսանողների ուսման կազմակերպում, թերթերի, ամսագրերի, գրքերի, ֆիլմերի առաքում սփյուռք, Հայաստանում և սփյուռքում ցուցահանդեսների կազմակերպում, ստեղծագործական միությունների համագումարներին սփյուռքահայ ներկայացուցիչների հրավիրում, սփյուռքահայ և հայաստանցի երիտասարդների ամառային հանգստի համատեղ կազմակերպում, Համահայկական օլիմպիադիայի աշխատանքների կազմակերպման նախաձեռնում և այլն:

4. Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով էլ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը 1944թ. սեպտեմբերի 12-ին հիմնեց Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերությունը (ԱՕԿՍ), իսկ 1964թ. մայիսի 26-ին՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե (ԱՕԿՍ-ը Հայաստան-սփյուռք կապերից բացի զբաղվում էր նաև այլ գործառույթներով):

Հայաստան-սփյուռք կապերի 2-րդ փուլի վերելքի բարձրակետը հանդիսացավ 1980թ. նոյեմբերի վերջին երևանում անցկացված Հայաստան-սփյուռք համաժողովը: Դրան մասնակցում էին 10-նյակ պատվիրակներ բազմաթիվ երկրներից, ինչպես նաև Վազգեն I կաթողիկոսը, մարշալ Բաղրամյանը և այլք:

Այդ օրերին ՀԽՍՀ իշխանությունների որոշմամբ սփյուռքահայ գործիչների համար սահմանվեցին մրցանակներ, մասնավորապես՝ «Խաղաղության և Մայր Հայրենիքի հետ կապերի ամրապնդման օգտին ակտիվ գործունեության համար» (Ետնահու տրվեց Վ.Սարոյանին), գրողների և ժուռնալիստների միության մրցանակ հանձնվեց լիբանանահայ բանաստեղծ Գառնիկ Աղդարյանին, լուսավորության նախարարության Մ.Մաշտոցի անվան մրցանակ ստացավ Վահե Վահյանը, Գիտությունների ակադեմիայի Անանիա Շիրակացու մրցանակ ստացավ Սիրարփի Տեր-Ներսիսյանը, Կոմպոզիտորների միության Կոմիտասի անվան մրցանակ ստացավ Համբարձում Բերբերյանը, նկարիչների միության Մ.Սարյանի անվան մրցանակ՝ ֆրանսահայ գեղանկարիչ Գառնիկ Զուլումյանը (Գառզու), մշակույթի

Նախարարության Պետրոս Ադամյանի անվան մրցանակ ստացավ Նյու Յուրքի Մետրոպոլիտենի օպերայի աստղերից մեկը՝ Լիլի Չուքասզյանը:

Հաջորդ՝ 1981թ. սեպտեմբերի 21-ից մինչև հոկտեմբերի 3-ը երևանում առաջին անգամ գումարվեց Հայաստան-սփյուռք մամուլի ներկայացուցիչների սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցեցին 7 երկրից ժամանած 15 ներկայացուցիչ (թերթերից և ամսագրերից):

1985թ. նախատեսված էր երևանում անցկացնել սփյուռքի գեղարվեստա-թատերական խմբերի (համույթների) փառատոն (ներկայիս «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի նախակարապետը):

Հայաստան-սփյուռք կապերի 2-րդ փուլի լավագույն դրսևորումը հանդիսացավ արցախյան շարժմանը և Սպիտակի երկրաշարժին հաջորդած տարիներին սփյուռքի, որպես մեկ մարդու, ցուցաբերած օգնությունը:

Այսպիսով, նաև խորհրդային Միության (նաև խորհրդային Հայաստանի) համառ ջանքերի շնորհիվ սփյուռքն ավելի քան 40 տարի «հայ մնաց»:

**ԱՐՄԵՆ ԲԱՂԱՅԱՆ**  
պատմական գիտությունների  
թեկնածու

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ  
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՊԵՏԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ  
(1920-1921ԹԹ.)**

Դեռևս միջնադարում Եվրոպայի և Ասիայի տարբեր պետություններում ստեղծվել էին հայկական գաղթավայրեր: 1890-ական թթ. արդուլիամիդյան ջարդերի, 1909թ. Կիլիկիայի հայկական բնակչության կոտորածի և առանձնապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կողմից իրագործված ցեղասպանության հետևանքով հարյուրիակարավոր հայեր հարկադրված եղան թողնել իրենց բնօրրանը և համալրել տարբեր գաղթավայրերում բնակվող հայության շարքերը, կամ ստեղծել նոր գաղթավայրեր:

Հայաստանի առաջին հանրապետության օրոք պետությունը կարևոր ուշադրություն էր հատկացնում երկրում կուտակված գաղթականության հիմնախնդրին, ինչպես նաև մուտիկ և հեռավոր պետությունների հայ գաղթավայրերի հետ անհրաժեշտ կապերի հաստատմանը: Այս քաղաքականության արդյունքում արդեն 1920թ. օգոստոսի 27-ին ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց արտաքին գործերի նախարարության կազմում գաղութային բաժին հիմնելու մասին: Որոշման մեջ շեշտվում է, որ բաժինը ստեղծվում էր հայկական գաղութների վիճակն ուսումնասիրելու, նրանց Մայր հայրենիքին կապելու և գաղութահայերի նյութական ու բարոյական ուժերն ի շահ Հայաստանի օգտագործելու նպատակով<sup>1</sup>: Այս կարևոր ստորաբաժանման ղեկավարը (բաժնի վարիչը) Ներսես Բաբայանն էր, որն իր պաշտոնը ստանձնել էր սեպտեմբերի 10-ին<sup>2</sup>:

Արտաքին միջամտությամբ պայմանավորված և ՀՀ կառավարության հրաժարման արդյունքում 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում հաստատվեց խորհրդային կարգեր: Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող օրերին Հայաստանի Սո-

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 118, մաս 2, թ. 196:

<sup>2</sup> Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 30, թ. 2:



ցիալիստական խորհրդային Հանրապետության (ՀՍԽՉ) գերագույն իշխանությունը կրող մարմինը՝ Հայաստանի հեղափոխական կոմիտեն (հեղկոմ) ձեռնամուխ եղավ նախկին պետական կառավարման մարմինների վերակառուցման գործին: 1920թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ արտգործնախարարության կառույցի հիման վրա կազմավորված ՀՍԽՉ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը: Վերջինն ամբողջությամբ չպահեց գոյություն ունեցող կառույցը և անձնակազմը: Լուծարման ենթարկվեց գաղութային բաժինը, իսկ Ն. Բաբայանն այլ աշխատանքի ուղարկվեց<sup>1</sup>: Ն. Բաբայանի անձի առնչությամբ նշենք, որ նա 1921թ. փետրվարյան ապստամբության նախօրեին բուլղարիկների կողմից բանտարկվեց՝ ազատություն ստանալով փետրվարի 18-ի իշխանափոխության արդյունքում:

Ներկայացվող նյութի հիմքը խորհրդային Հայաստանի դեկավարության համար Սովսես Պետրոսյանի հեղինակած 3 ընդարձակ վավերագրեր են, որոնցից երկուսն առաջին անգամ մեր կողմից են գիտական շրջանառության մեջ դրվում:

Սովսես Պետրոսյանը մասնագիտությամբ իրավաբան էր, իսկ կուսակցական պատկանելությամբ՝ դաշնակցական՝ ներկայացնում էր ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեն: 1919թ. նա ժամանեց Հայաստան՝ մասնակցելու ՀՅԴ 9-րդ համագումարին, իսկ 1920թ. սեպտեմբերի 1-ին աշխատանքի անցավ ՀՀ արտգործնախարարությունում՝ որպես արտաքին գործերի նախարար Համազասպ Օհանջանյանի օգնական (տեղակալ): Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող օրերին՝ 1920թ. դեկտեմբերի 3-10-ին, Ս. Պետրոսյանը կատարում էր ՀՍԽՉ արտաքին գործերի նախարարության ժամանակավոր վարիչի պարտականությունները<sup>2</sup>: 1920թ. դեկտեմբերի 10-ին ՀՍԽՉ արտաքին գործերի ժողկոմատի կազմավորումից և Ալեքսանդր Բեկզադյանի՝ ժողկոմ նշանակվելուց հետո Ս. Պետ-

<sup>1</sup> Սուքիասյան Հ., ՀՀ արտգործնախարարության և ՀՍԽՉ արտգործ-  
ժողկոմատի ժառանգության հարցի շուրջ, «Երևանի պետական հա-  
մալսարանի պատմության ֆակուլտետ: Տարեգիրք Բ (պատմագիտա-  
կան հանդես)», Երևան, 2010, էջ 223:

<sup>2</sup> ՀԱԱ. ֆ. 199, ց. 1, գ. 122, ք. 95: «Ռանջբար Իրանի» (Թեհրան), 15  
հոկտեմբերի 1921թ., N 11:

րոսյանն առժամանակ փաստացի ժողկոմի օգնականի գործա-  
ռույթներ էր իրականացնում<sup>1</sup>:

Չնայած ՀՀ արտգործնախարարության գաղութային բաժնի լուծարմանը՝ խորհրդային Հայաստանի իշխանությունները կարևորում էին հայկական գաղթավայրերի հանգամանքը: Աս-  
վածի վկայությունն է խորհրդայնացումից օրեր անց՝ 1920թ. դեկտեմբերի 13-ին, «Արտասահմանյան գաղութներ» խորագ-  
րով զեկուցագրի ի հայտ գալը<sup>2</sup>:

Ս. Պետրոսյանի հեղինակած նշյալ զեկուցագրում մանրա-  
մասն անդրադարձ էր կատարվում հայկական գաղթավայրերի դրությանը, Հայկական հարցի առնչությամբ գաղթավայրերում տիրող մտայնությանը և գաղութահայ կազմակերպություններին:

Ձեկուցագրի «Գաղութներու քաղաքական մտայնութիւնը հայկական հարցի վերաբերմամբ» բաժնում ներկայացվում էր Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին հաջորդող շրջանում հայկական գաղթավայրերում տիրող բուռն ոգևորու-  
թյանը, ինչը հեղինակը պայմանավորում է «ծովից ծով Հայաս-  
տան» ունենալու ակնկալիքով: Ս. Պետրոսյանը սուր կերպով քննադատում է Անգլիայի՝ Հայկական հարցն իր շահերին ծա-  
ռայեցնելուն ուղղված ջանքերը, Հայ ազգային պատվիրակու-  
թյան ղեկավար Պողոս Նուբար փաշայի գործունեությունը, արև-  
մտահայության շահերը ներկայացնելու հարցում մենաշնորհ  
ունենալու նրա ձգտումը, 1920թ. օգոստոսին Կիլիկիայում ան-  
կախ հայկական պետություն հռչակվելը<sup>3</sup>:

Բաժնի վերջին մասում Ս. Պետրոսյանը համոզմունք էր հայտնում, թե «եթէ խորհրդային Հայաստանը յաջողի թրքահայ դատը, որ խղճի հարց մըն է, գէթ մասամբ լուծել, միացնելով Տաճկահայաստանի մէկ մասը և տեղաւորելով Ռուսաստանի, Հիւս. Կովկասի, Վրաստանի և Ատրպէյճանի մէջ ցան ու ցրիւ եկած բազմաթիւ անտուն անտեր թշուառ տաճկահայերը, ոչ

<sup>1</sup> Սուքիասյան Հ., ՀՍԽՉ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կազմավորման պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», Երևան, 2010, N 130.6, էջ 54-60:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 14, ք. 1-3 շրջ.:

<sup>3</sup> Նույն տեղում, ք. 1 և շրջ.:

միայն կը շահի նաև համակրութիւնը անբողջ արտասահմանի հայ ժողովրդին, խանդավառութիւն յառաջ բերելով անոր մէջ, աւելի լայնօրէն կը շահի նաև Եւրոպայի և Ամերիկայի բովանդակ աշխատաւոր մասսաների համակրութիւնը»<sup>1</sup>:

Ձեկուցագրի «Գաղութային կազմակերպութիւններ և անոնց գործունեութիւնը» բաժնում Մ. Պետրոսյանը նշում էր, որ եթէ Հայաստանի Հանրապետության ստեղծումից առաջ պետության սահմաններից դուրս գործող հեղափոխական կազմակերպությունների գոյությունը հասկանալի էր, ապա հայկական պետության ստեղծումից հետո դրանք ավելորդ են դարձել: Այս առումով քննադատվում էր ռամկավարների, վերակազմյալ և հին հնչակյանների, դաշնակցականների միջկուսակցական պայքարը: Այնուհետև նշվում էր հայրենիքի օգտին համայնքներում կատարվող դրամահավաքների մասին: Այս տեսակետից որպէս օրինակելի համայնք մատնանշվում էր բուլղարահայ գաղթավայրի պարագան: Բանն այն է, որ բուլղարահայերն ունեին իրենց ազգային խորհուրդը, որն ընտրվել էր բուլղարահայերի համագումարի կողմից: Համագումարը յուրաքանչյուր հայի վրա ազգային տուրք էր սահմանել, որից ստացված գումարները բաշխվում էր հետևյալ կերպ. 50 %-ը հայկական բանակին, 20 %-ը որբերին և գաղթականներին, 15 %-ը ինքնապաշտպանությանը, 10 %-ը ներգաղթին և 5 %-ը հայկական կարմիր խաչին:

Մ. Պետրոսյանը տեղեկացնում էր, որ մյուս գաղթավայրերում ևս (Կ. Պոլիս, ԱՄՆ, Ռումինիա, Եգիպտոս և այլն) նմանատիպ կառույցներ են գործում, որոնց մոտ ի նպաստ հայրենիքի հավաքված զգալի գումարներ են կուտակվել: Նա առաջարկում էր միջոցներ ձեռք առնել այդ գումարները խորհրդային Հայաստանի կարիքների համար օգտագործելու նպատակով: Այս տեսակետից կարևոր խնդիր էր համարվում արտասահմանի հայությանը ներկայացնել խորհրդայնացման օգտակարությունը Հայաստանի հետագա զարգացման տեսակետից<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Մ. Պետրոսյանը ՀՍԽՖ ղեկավարությանն առաջարկում էր գաղթավայրերն օգտագործել քա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 14, ք. 2:

<sup>2</sup> Նույն տեղում, ք. 3 և շրջ.:

ղաքական և ֆինանսատնտեսական առումներով օգուտներ ստանալու համար:

Արդեն մեկ տասնօրյակ անց՝ 1920թ. դեկտեմբերի 23-ին, նույն Մովսես Պետրոսյանի պատրաստած «խորհրդային Հայաստանի Արևելքի քաղաքականության մասին» վերնագրված գեկուցագրում առաջարկներ էր կատարվում խորհրդային հանրապետությունների արևելյան քաղաքականության մեջ խորհրդային Հայաստանի ունենալիք դերակատարության վերաբերյալ և հիմնավորվում ՀՍԽՖ արտգործժողկոմատի կազմում արևելքի բաժին ստեղծելու անհրաժեշտությունը<sup>1</sup>: Ձեկուցագրի վերջին մասում անդրադարձ էր կատարվում հայկական գաղթավայրերին և նրանց հետ կապ պահելու խնդրին:

Ձարգացնելով նախորդ գեկուցագրի դրույթները՝ Մ. Պետրոսյանն առաջարկում էր տարբեր գաղթավայրերում ունենալ գաղտնի գործող ներկայացուցիչներ (գործակալներ), որոնց պետք է հանձնարարվեր տվյալ պետության և մասնավորապես հայ համայնքի մասին տեղեկություններ ուղարկել Հայաստան, Հայաստանի մասին իրենց փոխանցված տեղեկատվությունը տեղերում ներկայացնել, այսինքն՝ քարոզչական աշխատանք կատարել, ինչպես նաև արտասահմանյան նպաստատու հաստատություններին հորդորել շարունակելու իրենց օգնությունը Հայաստանի որբերին ու գաղթականներին: Ձեկուցագրի հավելվածում կարևոր հարց էր համարվում ՀՍԽՖ-ում բնակվող արևմտահայերին խորհրդային համակարգի հետ կապելու խնդիրը: Այս նպատակով առաջարկվում էր հատուկ բաժին ստեղծել, որը պետք է գործեր ՀՍԽՖ արտգործժողկոմատի հսկողության տակ, քանի որ այն պետք է քաղաքական նպատակներով օգտագործվեր<sup>2</sup>:

Հետաքրքրական է, որ 1921թ. հունվարին Մոսկվայում կայանալիք կոնֆերանսին մեկնող հայկական պատվիրակությունը (արտգործժողկոմ Ա. Բեկզադյանի գլխավորությամբ) իր հետ

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, ք. 3-5 շրջ.: Խաչատրյան Կ. Հ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., Երևան, 2007, էջ 112-113:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 16, ք. 6:

վերցրեց նաև այս զեկուցագիրը<sup>1</sup>: Ամենայն հավանականությամբ, զեկուցագիրը Մոսկվա տանելու պատճառ է հանդիսացել 1921թ. հունվարի 15-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմին ուղղված Մոսկվայում ՀՍԽՅ լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի նամակում տեղ գտած այն դրույթը, թե «Խորհրդային Հայաստանը և Արևելքի շարժման մեջ նրա դերը, չնայած ոչ այնքան բավարար, սակայն, այնուամենայնիվ, այստեղ ընդունվում է»<sup>2</sup>: Մ. Պետրոսյանի պատրաստած զեկուցագիրը Մոսկվա տանելով՝ ՀՍԽՅ պատվիրակությունը հավանաբար հույսեր էր փայփայում թուրքիայի հետ խորհրդային կողմի հարաբերություններում Հայաստանի դերի բարձրացման վերաբերյալ: Սակայն Մոսկվա ժամանելու հաջորդ օրերին հայ պատվիրակները հանդգնեցին իրենց հույսերի անհեռանկար լինելու մեջ:

Այս զեկուցագրի ի հայտ գալուց շատ չանցած՝ արդեն 1921թ. հունվարի 5-ին, նրա հեղինակ Մ. Պետրոսյանին տեսնում ենք ՀՍԽՅ արտգործոլկոմատի նորաստեղծ արևելյան բաժնի վարիչի պաշտոնում<sup>3</sup>: Մեր ուսումնասիրած փաստաթղթերից միայն այդ մեկում է տեղեկություն հանդիպում արտգործոլկոմատի արևելյան բաժնի մասին: Ամենայն հավանականությամբ, դրա պատճառն այն է, որ շատ շուտ բաժինը վերանվանվել է տեղեկատու և արևելյան, իսկ այնուհետև՝ տեղեկատու բաժնի:

Հայկական գաղթավայրերի հանդեպ Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից գործնական քաղաքականություն վարելուն էր ուղղված Մ. Պետրոսյանի հեղինակած հաջորդ վավերագիրը: Այն ՀՍԽՅ արտգործոլկոմատի տեղեկատու (ինֆորմացիոն) բաժնի կանոնադրության նախագիծ էր, որի համաձայն նախատեսվող բաժինն ունենալու էր 3 ենթաբաժին՝ ընդհանուր ինֆորմացիայի, արևելյան երկրների, արտասահմանյան հայ գաղութների: Արտասահմանյան հայ գաղութների ենթաբաժինը (խորքի մեջ այն ՀՀ սփյուռքի նախարարության նախատիպը կարող էր լինել) պետք է հարաբե-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 11, ք. 59-61 շրջ.: Փաստաթղթի 1921թ. փետրվարի 18-ով թվագրվող ռուսերեն թարգմանությունը վավերացված է ՀՍԽՅ պատվիրակության քարտուղար Վ. Մուրադյանի կողմից:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1444, ց. 1, գ. 7, ք. 3:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 40, ք. 5:

րություններ հաստատել հայկական գաղթավայրերի հետ, նրանց տեղեկություններ փոխանցել Խորհրդային Հայաստանի մասին, վերլուծություններ պատրաստել գաղթավայրերի մասին, զբաղվել ներգաղթին առնչվող խնդիրների կանոնակարգմամբ, ջանքեր գործադրել արտասահմանյան նպաստատու կազմակերպությունների կողմից Հայաստանին տրամադրվող օգնության շարունակման ուղղությամբ: Այս տեսակետից անհրաժեշտ էր համարվում որոշ պարբերականների ու գրքերի ձեռքբերումը, Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի հայաշատ բնակավայրերում հյուպատոսներ նշանակելը, որոնց վրա պետք է դրվեր նաև քաղաքական թղթակցության և գաղութային գործերի պարտականությունները:

Մ. Պետրոսյանն առաջարկում էր քաղաքական թղթակիցներ նշանակել Կ. Պոլիս, Անկարա, Ադանա, Էրզրում, Տրապիզոն, Աթենք, Իզմիր, Թեհրան, Թավրիզ քաղաքներում և այլ գաղթավայրերում: Հատկապես կարևորվում էր Կ. Պոլսի քաղաքական թղթակցի պարագան: Վերջինս պետք է կապ պահպաներ մյուս քաղաքական թղթակիցների հետ (բացի Թեհրանի և Թավրիզի, ուր այդ պարտականությունները նախատեսվում էր դնել հյուպատոսների վրա), զեկուցումներ պատրաստել մասնավորապես թուրքիայում տիրող դրության, հայկական գաղթավայրերի մասին: Նա պետք է Խորհրդային Հայաստանին համակիր թերթերում կեղծ ստորագրությամբ գրած հոդվածներով հակազդեր եղած քննադատություններին<sup>1</sup>:

Սակայն ներկայացված նախագիծն ամբողջությամբ կյանքի չկոչվեց: Մ. Պետրոսյանի ղեկավարությամբ գործող տեղեկատու բաժինը 1921թ. հունվար-փետրվարին հիմնականում զբաղվում էր իշխանությունների համար տեղեկատվություններ, մամուլի տեսություններ պատրաստելով: Փետրվարյան ապստամբության նախօրեին՝ 1921թ. փետրվարի 15-ի գիշերը, ՀՍԽՅ արտակարգ հանձնաժողովի (չեկա) կողմից ձերբակալվում է Մ. Պետրոսյանը և բանտից ազատվում փետրվարի 18-ին տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում: Այնուհետև նա պաշտոնավարում է Հայրենիքի փրկության կոմիտեի արտգործնախարարությունում՝ որպես տեղեկատու բաժնի վարիչ, իսկ

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 40, ք. 51-52 շրջ., 55, ֆ. 1022, ց. 3, գ. 317, ք. 1-2 շրջ.:

ապրիլին մեկնում Պարսկաստան: Գ. Յ. Դաշնակցության վարած քաղաքական գծին համաձայն չլինելու պատճառաբանությամբ՝ 1921թ. ամռանը հեռանում է կուսակցությունից<sup>1</sup>:

Փետրվարյան ապստամբության հետևանքով ինչպես ԶՍԽԳ իշխանությունների շատ ծրագրեր, այնպես էլ գաղթավայրերի հանդեպ որդեգրվելիք քաղաքականության հարցը մնաց զուտ թղթի վրա: Կյանքի չկոչվեցին այս առաջարկ-նախագծերը: Սակայն հետո էլ մոռացության չմատնվեցին: 1921թ. փետրվարյան ապստամբության ավարտից հետո կրկին մեջտեղ եկավ Ս. Պետրոսյանի կողմից պատրաստված տեղեկատու բաժնի նախագիծը: Այն որոշակի լրացումներից ու խմբագրումից հետո 1922թ. օգոստոսի 2-ին ԶՍԽԳ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Սարգիս Լուկաշինի կողմից հաստատվեց իբրև ժողկոմխորհի տեղեկատու բաժնի կանոնադրություն:

Ինչ վերաբերվում է գաղթավայրերի հանդեպ բոլշևիկյան քաղաքականության ձևավորմանը, ապա այն կապվում է Լո-զանի կոնֆերանսի ավարտին հաջորդող շրջանի հետ: Ինչպես իրավացիորեն նկատում է պրոֆ. Վ. Դազախեցյանը, «Հայկական սփյուռքի նկատմամբ խորհրդային իշխանության քաղաքականության մշակումը գործնական նշանակություն ստացավ հատկապես 1922-1923թթ. Լոզանի կոնֆերանսից հետո, երբ վերջնականապես տապալվեցին Հայկական հարցը լուծելու և «Հայկական ազգային օջախ» ստեղծելու հայության հույսերն ու ակնկալիքները»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի խորհրդայնացումից հետո ԶՅԴ ակտիվ անդամ Սովսես Պետրոսյանը գլխավոր շրջվել էր: Նա, որպես պետական աշխատող, առաջնահերթ կարևորում էր պետական շահը՝ պատրաստ լինելով հանուն պետության շահի համագործակցել մինչև իսկ գաղափարական հակառակորդ բոլշևիկների հետ:

**ՀԱՍՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**  
պատմական գիտությունների  
թեկնածու

<sup>1</sup> Հ.Սուքիասյան, ԶՍԽԳ արտգործադրման տեղեկատու բաժնի գործունեությունը (1921-1922թթ.), «Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու», N 11, Երևան, 2010, էջ 295-298:

<sup>2</sup> Դազախեցյան Վ., Սփյուռքում խորհրդային իշխանության քաղաքականության հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, N 2, էջ 109:

## ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎԵՐԱՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ ՊԼԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ (1973Թ.)

1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի ստորագրումից հետո՝ ԽՍՀՄ-ի գոյության շուրջ 70 տարիների ընթացքում, խորհրդա-թուրքական (փաստորեն՝ հայ-թուրքական) սահմանի որոշման-սահմանագծման օրինականության հարցը վերածվել էր միջազգային, միջպետական և ազգամիջյան բարդ հիմնախնդրի: Տասնամյակներ շարունակ նշյալ պայմանագրերը դարձել էին մի կողմից թուրքիայի ու ԽՍՀՄ-ի, մյուս կողմից խորհրդային Հայաստանի ու ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների տարածայնությունների առարկան: Հայ ժողովրդի արմատական շահերի հաշվին տեղի ունեցած «Լենին-Աթաթուրք» գործարքը շարունակում էր մնալ նաև Սփյուռքի ազգային-քաղաքական շրջանակների ուշադրության կենտրոնում: Բնական է, որ խորհրդային Հայաստանում ու Սփյուռքում չէին կարող անտարբեր լինել խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծման պարբերական բնույթ ստացած աշխատանքների հանդեպ, որքան էլ որ դրանք գոնե արտաքուստ, տեխնիկական բնույթ ունենային:

Թվում էր, թե այդպիսին էր լինելու նաև Անկարայում 1967թ. փետրվարի 28-ին ԽՍՀՄ և Թուրքիայի կառավարությունների ստորագրած ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև սահմանի վերասահմանագծման մասին Արձանագրությանը համապատասխան ստեղծված խորհրդա-թուրքական Համատեղ հանձնաժողովի աշխատանքը: Խորհրդա-թուրքական նշյալ Արձանագրությունն ուժի մեջ մտավ 1968թ. նոյեմբերի 5-ին<sup>1</sup>: Այս Արձանագրությունում ևս չկար որևէ քաղաքական նախապայման, այսինքն՝ լուծության միջոցով շրջանցվում էր խորհրդա-թուրքական սահմանի օրինականության հարցը<sup>2</sup>:

Նման մոտեցումը պայմանավորված էր նրանով, որ ԽՍՀՄ ղեկավարությունը մինչ այդ բանավոր հայտարարությունների միջոցով էր միայն հրաժարվել Երկրորդ աշխարհամարտից հետո Թուրքիային առաջադրած տարածքային պահանջներից:

<sup>1</sup> Արձանագրությունը տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 5, գ. 12, ք. 32-36:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 5, գ. 12, ք. 33-43:

Բնական է, որ ԽՍՀՄ ղեկավարության կողմից ժամանակավորապես սառեցված նման լրջագույն խնդրի առկայությունը լրացուցիչ լարվածություն էր հաղորդում վերասահմանագծման հարցերով խորհրդա-թուրքական Համատեղ հանձնաժողովի աշխատանքներին: Նրա ողջ ժամանակամիջոցում ու մանավանդ 1973թ. դեկտեմբերին Անկարայում կայացած եզրափակիչ նստաշրջանում թուրքական կողմն ամեն ինչ անում էր խորհրդա-թուրքական սահմանի անձեռնմխելիության մասին լրացուցիչ հավաստիացումներ կորզելու համար: Նման պայմաններում Համատեղ հանձնաժողովում Խորհրդային Հայաստանը ներկայացնող գնդապետ Գուրգեն Նալբանդյանը, հայտնվելով Անկարայում ԽՍՀՄ դեսպանատան դրսևորած անտարբերության փաստի առաջ, համարձակորեն դիմագրավեց թուրքական կողմի անհիմն եւ ապօրինի նկրտումներին:

Մասնավորապես, երբ 1971թ. փետրվար-մարտին Համատեղ հանձնաժողովի խորհրդային պատվիրակությանը թույլ չէին տվել մեկնել Արևմտյան Հայաստան, Հայկական ԽՍՀ արտգործնախարարությանը ներկայացրած իր հաշվետվության մեջ Գ. Նալբանդյանը գրում էր. «Ամբողջության մեջ թուրքական ժողովուրդը գոյատևում է իր կողմից նվաճված օտար հողերի առատության և բնության գրեթե անսպառ պարզևների հաշվին: Ինքը՝ թուրքը որպես այդպիսին, ղեռնա գտնվում է սահմանափակվածության, բթանության և անգործուն վիճակում, նա շատ է հեռու այն հոգեբանական խոչընդոտի հաղթահարումից, որի ետևում իրեն թույլ կտար մտածել քաղաքական, տնտեսական և մշակութային առաջադիմության մասին»<sup>1</sup>:

Նույն փաստաթղթի մեկ այլ հատվածում նա նշում էր. «Իրենց իսկ սեփական հողերի վրա և իրենց սեփական տներում կոտորված միլիոնավոր հայերի ցեղասպանությունը մինչ այժմ չի դատապարտվել, ավելին, ցեղասպանության անմիջական կազմակերպիչները իրենց առջև հայերին ամբողջովին ոչնչացնելու խնդիր դրած սուլթան Մեհմեդը (նկատի ունի Համիդին - Ա. Հ.), Թալեաթ փաշան, Էնվեր փաշան, Ջեմալ փաշան, Իսմեթ փաշան, Կարաբեքիրը և այլք, որպես ժողովրդական հե-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 480, ք. 19:

րոսներ ժողովրդականացվում են: Ոչ պակաս կարևոր դեր է խաղում դրանում և վաղնջական հայկական հողերի հարցը»<sup>1</sup>:

Ի վերջո, Համատեղ հանձնաժողովը 1969թ. հունվարին սկսեց և 1973թ. դեկտեմբերի վերջին ավարտեց 616,5 կմ տարածությունը ընդգրկող խորհրդա-թուրքական պետական սահմանի վերասահմանագծման աշխատանքները: 1926թ. սահմանագծված խորհրդա-թուրքական պետական սահմանն ամբողջությամբ վերականգնվեց:

Իսկ արդեն թուրքական կողմի երկարատև ձգձգումներից հետո՝ 1973թ. դեկտեմբերի 1-ից 29-ը Անկարայում հրավիրված պետական սահմանի վերասահմանագծման Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի եզրափակիչ նստաշրջանը թուրքական կողմի խարդավանքների հետևանքով վերածվեց սուր բանավեճերի եւ պայքարի թատերաբեմի:

Ի դեպ, բոլոր հիմունքներով, այս եզրափակիչ նստաշրջանը պետք է գումարվեր, ըստ հերթականության, Մոսկվայում: Սակայն, խորհրդային պատվիրակությունը, քամահրելով ԽՍՀՄ-ի հեղինակությունը, զիջումների գնաց թուրքերին: Դրանով իսկ թուրքերն իրենց համար ապահովեցին ձեռնտու դիրք, որպեսզի ճնշում բանեցնեն վերադասից մեկուսացման մեջ գտնվող խորհրդային պատվիրակության վրա և ստիպեն նրան ստորագրել Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի իրավասության մեջ չմտնող քաղաքական փաստաթուղթ: Գ. Նալբանդյանը ժամանակին խորհրդային պատվիրակության ղեկավարության ուշադրությունը հրավիրել էր այդ կարևոր իրողության վրա, սակայն նրա բոլոր առաջարկությունները մնացին չքննարկված և առանց պատշաճ արձագանքի:

Խորհրդային պատվիրակությունը նստաշրջանում ներկայացված էր թուլացված կազմով, մինչդեռ թուրքական պատվիրակությունը ներկայացված էր ամբողջ կազմով, ավելին՝ նստաշրջանի աշխատանքին մասնակցեցին համապատասխան պայմանագրային փաստաթղթերում չհիշատակված առանձին անձինք:

Հենց սկզբից ակնհայտ դարձավ, որ նստաշրջանի աշխատանքներում թուրքական պատվիրակության հիմնական նպատակը լինելու է Համատեղ հանձնաժողովի տեխնիկական

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 480, ք. 32-33:

իրավասության շրջանակներից քողարկված ձևով դուրս գալը և իրենց օգտին քաղաքական բնույթի նոր փաստաթղթի ստեղծումը, որը որոշում է խորհրդա-թուրքական հարաբերություններն ընդհանրապես և ամենագլխավորը՝ երաշխավորում է «թուրք-խորհրդային սահմանի անփոփոխելիությունը»:

Կրկին շեշտենք, որ պայմանավորվածության համաձայն Հանձնաժողովն ի սկզբանե ի գորու էր գբաղվել միմիայն տեխնիկական բնույթ ունեցող գործառույթներով: Սակայն, թուրքիան ներկայացնող դիվանագետների, գինվորականների և այլ պաշտոնյաների կողմից Անկարայում սկիզբ առավ հարցի հետևողական քաղաքականացումը, որը ծանր դրության մեջ դրեց այդ ամենին միանգամայն անպատրաստ խորհրդային պատվիրակությանը: Այս պայմաններում ԽՍՀՄ պատվիրակությունում Հայկական ԽՍՀ պաշտոնական ներկայացուցիչ, ԽՍՀՄ պետանվտանգության համակարգի պաշտոնաթող գնդապետ Գուրգեն Սեդրակի Նալբանդյանը, խորհրդային պատվիրակության կազմում փաստորեն մնալով միայնակ, իր համառության ու հաստատականության շնորհիվ բավականին մեծ ծավալի աշխատանք կատարեց թուրքական կողմի նպատակների բացահայտման, ԽՍՀՄ մյուս պատվիրակներից անկախ, ինքնուրույն քաղաքական դիրքորոշում բանաձևելու և այն հետևողականորեն պաշտպանելու համար: Գ. Նալբանդյանը խորհրդա-թուրքական պետական սահմանի անփոփոխելիության մասին քաղաքական դրույթը նրա վերասահմանագծման վերաբերյալ տեխնիկական փաստաթղթի մեջ խցկելու թուրքական կողմի համառ պահանջը ԽՍՀՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի համար առավել ևս բացարձակապես անընդունելի էր համարում:

Նա իրավացիորեն քննադատում էր խորհրդային պատվիրակության ղեկավարության պահվածքը, որը թուրքիայի ԱԳՆ-ի գրեթե բացահայտ թելադրանքի պայմաններում, առանց ԽՍՀՄ ղեկավար որևէ մարմնի թույլտվության, դուրս եկավ իր իրավասության շրջանակներից և գնաց անտեղի եւ հայ ժողովրդի շահերին հակընդդեմ քաղաքական գիջումների: Այդ իսկ պատճառով Գ. Նալբանդյանը հենց սկզբից անհրաժեշտ համարեց կոշտ դիրքորոշում դրսևորել, որովհետև նրա համոզմամբ թուրքերը ցանկանում էին հայկական հողերի նվաճման փաստը ճանաչող նոր քաղաքական փաստաթուղթ ստանալ:

Հիմնախնդիրը դիտարկելով համազգային շահերի համատեքստում նա նախագուշացնում էր, որ խորհրդային դիվանագիտության վրիպումներն ամբողջ աշխարհում կարող են առաջ բերել հայ հասարակայնության բացասական հակազդեցությունը: Ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ Սփյուռքը խիստ զգայուն է հայկական հողերի մեծ մասը նվաճած Թուրքիայի հետ ԽՍՀՄ-ի հարաբերությունների հարցում, Գ. Նալբանդյանը միաժամանակ արձանագրում էր հայ ժողովրդի հողային կորուստների ու Հայոց Ցեղասպանության անխզելի կապի ու փոխպայմանավորվածության փաստը: Դրանով նա զգուշացնում էր, որ ճանաչելով հայկական հողերի զավթման փաստը, ԽՍՀՄ-ը փաստորեն հերքում է Հայոց Ցեղասպանության պատմական իրողությունը: Ուստի, լինելով խորհրդային «ինքնիշխան», իսկ իրականում ընդամենը «միութենական» հանրապետության պաշտոնական ներկայացուցիչ, Գ. Նալբանդյանը թուրքական կողմի նկրտումները չեզոքացնող որոշակի առաջարկներ, առարկություններ, խնդրանքներ ներկայացրեց, սակայն դրանք բոլորն էլ վերջնական արդյունքում խորհրդային պատվիրակության ղեկավարության կողմից անտեսվեցին:

Խորհրդային պատվիրակությունը և Թուրքիայում ԽՍՀՄ դեսպանատունն իրենց նախագծի<sup>1</sup> վճռական պաշտպանության համար թեպետ ունեին ծանրակշիռ դիվանագիտական, իրավաբանական և այլ փաստարկներ, բայց, ցավոք, դա չարեցին: Գ. Նալբանդյանն անհրաժեշտ էր համարում դրսևորել Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի աշխատանքի բնույթին և բովանդակությանն ամբողջությամբ համապատասխանող խորհրդային նախագծի պաշտպանության համար կոշտ դիրքորոշում, քանզի նրա համոզմամբ «թուրքերը մտադիր էին իրենց ձեռքը զցել հայկական հողերի նվաճումն իրենց օգտին ամրագրող նոր քաղաքական փաստաթուղթ»: Նա ԽՍՀՄ պատվիրակության ղեկավարին պաշտոնապես հայտարարեց. «Խորհրդա-թուրքական պետական սահմանի անփոփոխելիության մասին կետը համարում են բացարձակապես անընդունելի՝ ո՛չ ԽՍՀՄ-ի համար ընդհանրապես, ո՛չ էլ, առավել ևս, Հայկական ԽՍՀ-ի համար մասնավորապես: Թուրքերը

<sup>1</sup> Խորհրդային նախագիծը տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 53, գ. 83, ք. 48:

լուծում են հայկական հողերի զավթման մեր կողմից կրկին ճանաչելու իրենց ծայրահեղորեն հետաքրքրող կոնկրետ հարցը: Եթե անցնի թուրքական նախագիծը, հետևաբար թուրքերը, ըստ իրենց մտահղացման, կստանան ավելի ուժեղ և ծանրակշիռ փաստաթուղթ, քան Կարսի և Մոսկվայի 1921թ. պայմանագրերը: Այս անգամ զավթված հայկական հողերը թուրքերի օգտին ամրագրող նոր փաստաթղթի ծանրակշռությունը կպայմանավորվի այդ փաստաթղթի ընդունման մեջ Հայկական ԽՍՀ մասնակցությամբ՝ ի դեմս նրա ներկայացուցչի: Բայց խնդրում են հաշվի առնել, որ Հայկական ԽՍՀ ներկայացուցիչն այդպիսի փաստաթղթի ընդունմանը չի մասնակցելու: Մենք չենք կարող մոռանալ հայերի օրինական շահերի մասին: Ինչ որ դիվանագիտական վրիպում այդ հարցում կարող է ողջ աշխարհում հայ հասարակայնության բացասական հակազդեցությունն առաջացնել: Խորհրդա-թուրքական պետական սահմանի ճակատագիրը հայ ժողովրդի հետ ուղղակի, անմիջական առնչություն ունի: Հայկական հողերի տասնինը-քսաներորդ մասը նվաճված է թուրքերի կողմից: Հայկական ԽՍՀ հասարակայնությունը, ողջ հողագնդի վրա աստանդական հայերի բազմաթիվ գաղթօջախները հավանություն են տալիս և աջակցում են մեր երկրի (նկատի ունի ԽՍՀՄ-ը - Ա. Բ.) արտաքին քաղաքականությանը՝ քանի դեռ հաշտվում են իրենց ողբերգության հետ և ձայն չեն բարձրացնում արդարության վերակազմման համար, սակայն միևնույն ժամանակ նրանք պահանջում են, որպեսզի չփորփորեն իրենց վերքերը և չվիրավորեն իրենց ազգային զգացմունքները: Հաշվի առեք, հայկական հողերի զավթման ճանաչումը նշանակում է և ցեղասպանության ճանաչում, քանզի չի եղել հայոց ցեղասպանություն առանց թուրքերի կողմից հայկական հողերի զավթման և չի եղել հողերի զավթում առանց ցեղասպանության (ընդգծումը մերն է - Ա. Բ.): Ժամանակը չէ՞ արդյոք դադարեցնել գոնե պաշտոնական հռչակագրերը, որոնք փաստորեն ճանաչում են թուրքերի կողմից հայկական հողերի զավթումը»:

Գ. Նալբանդյանը վճռական կերպով պահանջեց իր առաջարկները եւ բողոքը հաղորդել ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարությանը, Մոսկվայում գտնվող ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի տեղակալ, ՀԽՍՀ Գերա-

գույն Խորհրդի Նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանին, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և Նախարարների Խորհրդի ղեկավարությանը: Ի դեպ, ուշագրավ եւ ինքնին խոսում մեկ փաստ եւս. Կրացական ԽՍՀ պաշտոնական ներկայացուցիչ Օ. Գիգինեյշվիլին այդպես էլ չմիացավ նրա բողոքի առաջարկին: Ինչեւէ, չնայած Գ. Նալբանդյանին խոստացվեց, որ նրա պահանջը կփոխանցվի ԽՍՀՄ ԱԳՆ-ի քննարկմանը, սակայն հետագայում պարզվեց, որ խոստումը չի իրականացվել:

Իմիջայլոց, այստեղ տեղին է հիշատակել Խորհրդային Հայաստանի ղեկավարության դիրքորոշման մասին: Այսպես, նրա ցուցումներով Խորհրդային եւ թուրքական պատվիրակությունների համար Հանձնաժողովի Հայկական ԽՍՀ-ում գտնվելու ժամանակահատվածում կազմակերպվել էին բազմաթիվ էքսկուրսիոն շրջայցեր: Հայաստանում Խորհրդային պատվիրակության հետ բոլոր հանդիպումներում թուրքերի նկատմամբ որևէ անբարյացակամ վերաբերմունքի դրսևորման նույնիսկ ոչ մի ակնարկի դեպք չի եղել: Թուրքերը տառացիորեն ցնցված էին Հայաստանում մնան բարյացակամ վերաբերմունքից, չգիտեին ինչպես արտահայտեն իրենց շնորհակալությունը: Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը Խորհրդային պատվիրակության աշխատանքը բարձր է գնահատել և նրա ղեկավարներին պարգևատրել է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Պատվոգրերով, իսկ պատվիրակության բոլոր անդամներին՝ Նախարարների Խորհրդի Պատվոգրերով, հանձնվել են նվերներ:

Ինչեւէ, թուրքական նախագիծը<sup>1</sup> նախաբանի «հրավառության» և ողջ տեքստի «չքեղ» բառակազմության մեջ հմտորեն թաքցրել էր թուրքերի համար ամենից կարևոր մի բառակապակցություն՝ «ԱՆՓՈՓՈՒՍ ՍԱՀՄԱՆ ԽՍՀՄ-Ի ԵՎ ԹՈՒՐԵԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ»:

Եվս մեկ ուշագրավ հանգամանք: Ինչպես հայտնի է, թուրքական դիվանագիտությունը «Թուրքիայի և ԽՍՀՄ-ի միջև սահմանի անփոփոխելիության մասին» հռչակագիր ամեն գնով փորձում էր կորզել Թուրքիա Խորհրդային յուրաքանչյուր

<sup>1</sup> ՀԱՍ, ֆ. 1, ց. 53, գ. 83, թ. 49-51:



պաշտոնական պատվիրակության այցելությունից, անգամ եթե այդ այցը կրեր թեկուզ գյուղատնտեսական բնույթ:

Եվ ահա եկավ թուրքերի համար վաղուց այդքան սպասված օրը: Նրանք կարծես թե հասել էին իրենց նպատակին. Անկարայի ԽՍՀՄ դեսպանատունը համաձայնվել էր պետական սահմանի անփոփոխելիության մասին դրույթը ներառել վերասահմանագծման վերաբերյալ տեխնիկական փաստաթղթում, իսկ Մոսկվայից այդ առիթով ժամանած խորհրդային բարձրաստիճան պաշտոնյաները սպասում էին միայն եզրափակիչ Կոմյունիկեի ստորագրմանը և հանդիսավոր բանկետին, վերջիններին կարծես թե միայն հենց դա էր հետաքրքրում:

Խորհրդա-թուրքական Համատեղ կոմյունիկեի ստորագրման հանդիսությանը ներկա գտնվելու համար լրացուցիչ Անկարա էր ժամանել հետեւյալ բարձրաստիճան խորհրդային պետական պատվիրակությունը. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի տեղակալ Յասնով, ԽՍՀՄ ԱԳՆ-ի գլխավոր քարտուղար-նախարարի տեղակալ Յու. Չերնյակովը, ԽՍՀՄ Ձինված Ուժերի Գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-գնդապետ Մ. Կոզլով, ԽՍՀՄ սահմանապահ զորքերի պետ, գեներալ-լեյտենանտ Վ. Մատրոսով:

Հանդիսությանը ներկա էին թուրքական մամուլի բազմաթիվ ներկայացուցիչներ, լուսանկարիչներ, կինովավերագրությունը: Հանդիսությունն ավարտվեց հիացական կենացներով, շամպայնով, իսկ հետո բանկետով «Բեյուք Անկարա» ռեստորանում:

Սակայն այդ գործընթացը սովետների եւ թուրքերի համար կրկին վերածվեց սև մղձավանջի, երբ ԽՍՀՄ միասնական պատվիրակության մեջ մտնող խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Գուրգեն Նալբանդյանը բացահայտ կերպով ըմբոստացավ, և ի տարբերություն իր գործընկերոջ վերջին պահին սեփական տեսակետից հետ կանգնած խորհրդային Վրաստանի պատվիրակ, պատմաբան Օ. Գիզինեյշվիլիի, հրաժարվեց ստորագրել եզրափակիչ Կոմյունիկեն և մասնակցել այդ առիթով խորհրդային հյուրերի պատվին կազմակերպված շքեղ բանկետին:

Հայկական ԽՍՀ 72-ամյա ներկայացուցիչը դեկտեմբերի 29-ին առավոտյան ժամը 8-ին, Կոմյունիկեի ստորագրման օրը.

ԽՍՀՄ պատվիրակության ղեկավարությանը և անդամներին պաշտոնապես հայտարարեց, որ հանդիսությանը ներկա չի գտնվելու և փաստաթղթերի ստորագրմանը մասնակից չի լինելու: Դա արվեց որպես պետական սահմանի վերասահմանագծման խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի ապօրինի ակտի դեմ ուղղված բողոքի նշան, և ամենագլխավորը այն բանի համար, որպեսզի Գ. Նալբանդյանի խոսքերով. «թուրքերը, ինչպես նաև մեր դիվանագետները, հասկանան, որ հայկական հողերի մասին հարցը օրակարգից հանված չէ (ընդգծումը մերն է - Ա.Գ.)»:

Ի վերջո, ինչ էր իրենից ներկայացնում այդ չարաբաստիկ հակահայկական Կոմյունիկեն: Այդտեղ մասնավորապես նշվում էր. «Թուրքիան եւ ԽՍՀՄ խաղաղության և անվտանգության պահպանման նպատակներով փաստագրում են իրենց անփոփոխ սահմանը, ինչը հույժ նշանակալից ձեռքբերում է ավելի քան կեսդարյա ժամանակահատվածի ընթացքում երկու երկրների միջև խաղաղության և բարիդրացիության սկզբունքների ոգով զարգացող թուրք-խորհրդային հարաբերություններում: Կողմերը գտնում են, որ անկախության, իրավահավասարության, տարածքային ամբողջականության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների հարգման շրջանակներում երկու երկրների օգտին զարգացող թուրք-խորհրդային հարաբերություններում ձեռք բերված այս դրական առաջընթացը տարբեր ոլորտներում նրանց համագործակցության մեջ կարևոր ներդրման նոր տարր է»<sup>1</sup>:

Իր հերթին, ԽՍՀՄ պաշտոնական տեղեկատվական խոսափոխ ՏԱՍՍ-ը Կոմյունիկեի ստորագրման առթիվ հաղորդագրության մեջ նույնպես շեշտում էր «անկախության, ինքնիշխանության, իրավահավասարության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության, ներքին գործերին չխառնվելու» սկզբունքները, փաստաթուղթը համարելով «նոր կարևոր ներդրում է խորհրդային Միության և Թուրքիայի համագործակցության մեջ»<sup>2</sup>:

Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի եզրափակիչ նստաշրջանի ավարտից անմիջապես հետո վերադառնա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 53, գ. 83, թ. 52-53:

<sup>2</sup> "Правда", 30 декабря 1973. ՀԱԱ, ֆ. 1, ց. 53, գ. 83, թ. 54-55:



լով Երևան, հենց հաջորդ օրը՝ 1973թ. դեկտեմբերի 31-ին, Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը ներկայացրած իր ընդարձակ, մանրամասն ու փաստարկված գեկուցագրում<sup>1</sup> գնդապետ Գուրգեն Նալբանդյանը համարձակորեն քննադատում էր ԽՍՀՄ պատվիրակության ղեկավարության դիրքորոշումը, որը Թուրքիայի ԱԳՆ-ի գրեթե բացահայտ թելադրանքի պայմաններում՝ առանց ԽՍՀՄ ղեկավար որևէ մարմնի թույլտվության, դուրս եկավ իր իրավասության շրջանակներից և զնաց անհիմն քաղաքական գիշումների: Նրա եզրակացությունը հետևյալն էր. «Այսպիսով, թուրքերը Խորհրդային դիվանագետների թուլության, նրանց կողմից անհասկանալի գիջողականության շնորհիվ ստացան իրենց համար ևս մեկ կարևոր, ավելի հեղինակավոր փաստաթուղթ այն մասին, որ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը կրկին ճանաչում է թուրքերի կողմից հայկական հողերի զավթումը: Մարդասպանը և թալանչին ևս մեկ համաներում ստացավ»:

Եզրափակելով, տեղին ենք համարում հակիրճ ներկայացնել Գուրգեն Սեդրակի Նալբանդյանի կենսագրությունը: Ո՞վ էր ի վերջո այն հայորդին, ով իր ամբողջ կյանքն անմնացորդ նվիրելով Խորհրդային իշխանությանը եւ դրա անվտանգության ամրապնդմանը, այդուհանդերձ, ըմբոստացավ հենց նույն սովետների դեմ՝ անվեհեր հայրենասիրությամբ մաքառելով հանուն Հայ Դատի:

Նա ծնվել է 1902թ. հունիսի 6-ին Մեծ Ղարաքիլիսայում (ներկայումս՝ Վանաձոր): Հայրը՝ Սեդրակ Մարտիրոսի Նալբանդյանը, զոհվել է 1918թ. Ղարաքիլիսայի հերոսամարտի ամենադաժան կռիվներից մեկում՝ Հաջիղարա (Լեռնապատ) գյուղի համար մարտում: 1929թ. գերազանցությամբ ավարտել է Կրեմլի միացյալ զինվորական դպրոցը, ապա ծառայել 40-րդ Երևանյան սահմանապահ ջոկատում: Մինչև 1938թ. նա սահմանապահ ջոկատի պետի տեղակալ էր, ապա ծառայել է Հայկական սահմանապահ օկրուգի զորքերի վարչությունում որպես 5-րդ (հետախուզական) բաժնի բաժանմունքի պետ: 1943թ. ավարտել է Մ. Ֆրունզեի անվան Ռազմական ակադեմիայի արագացված դասընթացները և նշանակվել նշյալ օկրուգի զորքերի պե-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 53, գ. 83, ք. 19-47:

տի տեղակալ-5-րդ բաժնի պետ և որպես օպերատիվ խմբերի պետ մասնակցել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին Անդրկովկասի համար մղված սահմանային բոլոր մարտական գործողություններին: 1951թ. պաշտոնաթող է եղել, 1952-1957թթ. աշխատել է ՀԽՍՀ ՍՏՆՊի արդյունաբերության նախարարությունում, 1958թ.-ից՝ եղել է Առևտրի նախարարի օգնական: ՀՀ սահմանապահ զորքերի վետերանների Խորհրդի պատվավոր նախագահն էր: Մահացել է 1998թ.՝ 96 տարեկան հասակում: Իրավամբ համարվել է Խորհրդային Հայաստանի եւ Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի պատրիարքը: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով, 22 մեդալներով, 8 կրծքանշաններով: Ծառայության ժամանակ և անգամ պաշտոնաթողությունից հետո եղել է թուրք սահմանապահների սարսափը և նրանց կողմից անվանվել Նալբանդ փաշա:

#### ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական  
բանգարանի տնօրեն,  
պատմական գիտությունների թեկնածու

**ՄԻՔԱՅԵԼ ՊԱՊԱԶԱՆՅԱՆԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ  
ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ**

Ազգային պատվիրակության լուծարումից հետո Միքայել Պապաջանյանը մի կարճ ժամանակահատված համագործակցեց ՀԲՍԸ-ին՝ համոզես գալով իբրև այս կազմակերպության ներկայացուցիչ: 1926թ. սկզբներին նա ընտրվեց ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության նախագահ:

«Հայաստանի օգնության կոմիտեն» (ՀՕԿ) հիմնվել է Հայաստանի խորհրդայնացման երկրորդ տարում՝ ՀՍԽՅ ժողովրդական կոմիսարների խորհրդի 1921թ. սեպտեմբերի 28-ի դեկրետով: Ըստ էության՝ ՀՕԿ-ը բացի Հայաստանի ազգաբնակչությանը նյութական օգնություն կազմակերպելուց, մեկ այլ կարևոր առաքելություն ևս ուներ, այն է՝ համախմբել երկրից դուրս գտնվող հայ մտավորականությանն ու կարող ուժերին Հայաստանի օգնության գաղափարի շուրջ և կապել նրանց խորհրդային Հայաստանի հետ: Իր նպատակների իրականացման համար ՀՕԿ-ի Երևանի կենտրոնական վարչությունը կարճ ժամանակամիջոցում մասնաճյուղեր հիմնեց խորհրդային երկրի ու արտասահմանի բազմաթիվ հայաշատ քաղաքներում: 1925թ. մայիսի 26-ին ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը՝ հաշվի առնելով, որ խորհրդային Միության տարածքում հիմնված մասնաճյուղերից ստացվում է աննշան օժանդակություն, որոշում կայացրեց լուծարել դրանք,<sup>1</sup> որից հետո ՀՕԿ-ի հիմնական հենարանը մնացին նրա արտասահմանյան մասնաճյուղերը: Սկզբնական շրջանում (մինչև 1924թ. սկիզբը) ՀՕԿ-ը արտասահմանում գրեթե չկարողացավ մասնաճյուղեր հիմնել, քանի որ հայ ազգային կուսակցությունները և գաղութահայության մեծ մասը չէին համակրում ու վստահում խորհրդային Հայաստանի կառավարությանն ու նրան օժանդակող կազմակերպություններին: Նշված ժամանակահատվածում ՀՕԿ-ը իր արտասահմանյան գործունեությունը ծավալում էր հիմնականում Հայակական բարեգործական ընդհանուր միության միջոցով, իսկ քաղաքական ուժերից Ռամկավար ազատական կուսակ-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 391, թ. 17:

ցությունն էր աջակցություն ցուցաբերում այդ գործին:<sup>1</sup> 1924թ. հունվարի 11-ին Հայաստանի Կենտգործկոմի նախագահության կողմից հաստատված ՀՕԿ-ի կանոնակարգով նախատեսվում էր. «Կոմիտեի ճյուղերը բացվում են կամ գլխավոր վարչության անդամների անմիջական ղեկավարությամբ և կամ նրա կողմից լիազորված անձանց նախաձեռնությամբ»:<sup>2</sup> Արտասահմանում ՀՕԿ-ի նոր մասնաճյուղեր հիմնելու, եղածների աշխատանքները աշխուժացնելու, խորհրդային Հայաստանի առաջընթացը պրոպագանդելու նպատակով ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից տարբեր ժամանակներում արտասահման գործուղվեցին պատվիրակություններ: Այսպես, 1924թ. վերջերին Եվրոպա գործուղվեց ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ, ՀՍԽՅ հողագործության ժողկոմ Ա. Երզնկյանը,<sup>3</sup> իսկ 1925թ. նոյեմբերին հայկական գաղթավայրեր մեկնեց մեկ այլ պատվիրակություն, որի կազմում էին կենտրոնական վարչության քարտուղար Գ. Վարդանյանը, վարչության անդամ Կ. Միքայելյանը և Հայաստանի Կարմիր խաչի նախագահ բժիշկ, Սպանդարատ Կանսարականը: Պատվիրակները ամենուրեք համոզես էին գալիս խորհրդային Հայաստանի ձեռքբերումների և զարգացման ծրագրերի մասին դասախոսություններով, տարածում էին բրոշյուրներ, բացիկներ, թռուցիկներ, կոչեր, կազմակերպում «խորհրդային Հայաստան» ֆիլմի կինոդիտումներ: Պատվիրակության գործադրած ջանքերը տվեցին շոշափելի արդյունքներ՝ աշխուժացան ու ընդարձակվեցին արդեն կազմակերպված մասնաճյուղերը, հիմնվեցին նորերը:

Ֆրանսիայում Հայաստանից գործուղված պատվիրակությունից զատ կազմակերպչական լայն աշխատանքներ էր կատարում նաև ՀՕԿ-ի Եվրոպայի լիազոր-ներկայացուցիչ Եսայի Կարիկյանը:

Նկատի ունենալով Փարիզի կենտրոնական դիրքը ու փոխադարձ շփումների դյուրությունները՝ որոշվեց Ֆրանսիայի ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը հաստատել Փարիզում: 1925թ. հուլիսի 29-ին կենտրոնական ժամանակավոր հանձնախմբի փոխարեն ՀՕԿ-ի ներկայացուցիչ Դ. Շահվերդյանը կազմեց

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 138, թ. 19:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 468, թ. 3:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 66, թ. 66:

Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչությունը:<sup>1</sup> Մինչ այդ Ֆրանսիական կառավարությանն էր ներկայացվել ԴՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի ներքին ծրագիր-կանոնագիրը, որը կառավարության կողմից գրանցվել էր 1925թ. մայիսի 29-ին:<sup>2</sup> Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության նախագահ ընտրված էսայի Կարիկյանը ֆրանսահայության մեջ տարածած կոչումն ընդունելով, որ ԴՕԿ-ը գաղութահայության մեջ պետք է հետապնդի երկու նպատակ. «Առաջինը՝ Հայաստանը ճանչցնել գաղութներուն, և հետաքրքրել զանոնք Հայրենիքի ներկայ իրականութեան և ապագայ հնարաւորութիւններուն, դաստիարակել զանոնք պետական և քաղաքացիական ըմբռնումներով զանգուածային աշխատանքի, կազմակերպելով դասախոսութիւններ և փրօպականտի զանազան միջոցներ: Եվ երկրորդ՝ նիւթական աղբիւրներ գտնել և ստեղծել, գործնականապէս օժանդակելու վերաշինութեան նուիրական գործին»:<sup>3</sup> Ըստ ԴՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի ծրագիր-կանոնագրի Կենտրոնական վարչությունը ԴՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի վերին գործադիր մարմինն էր, այն պետք է իր միջից ընտրեր իր դիվանը՝ նախագահ, քարտուղար, փոխանորդներ և գանձապահ: Կենտրոնական վարչության պարտականությունն էր ղեկավարել ԴՕԿ-ի ընդհանուր գործը՝ գործադրելով նրա նպատակի իրականացման համար հարկ եղած աշխատանքները: Պետք է վավերացնէր մասնաճյուղերի վարչությունների ընտրություններն ու որոշումները, հսկեր մասնաճյուղերի գործունեությանը, հասարակությանը տեղեկացներ Հայաստանում կատարվող վերաշինական աշխատանքների և ԴՕԿ-ի գործունեության մասին: Կենտրոնական վարչությունը մասնաճյուղերի ողջ հասույթը պետք է կենտրոնացնէր իր մոտ՝ նպատակին ծառայեցնելու համար:<sup>4</sup>

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 430, ք. 34 և շրջ.:

<sup>2</sup> Երեւան, 18 մայիսի 1926:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 397, ք. 58-59:

<sup>4</sup> Ծրագիր-կանոնագիր Հայաստանի օգնութեան կոմիտէի ԴՕԿ. Ֆրանսայի շրջանի, Փարիզ, ք.10-11:

Միքայել Պապաջանյանը, 1926թ. սկզբներին՝ ընտրվելով ԴՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության նախագահ, անմիջապես ու մեծ եռանդով ձեռնամուխ եղավ նրա նպատակների իրականացմանը: Նրա գործունեությունը այս նոր պաշտոնում տարվում էր հիմնականում երկու ուղղությամբ. ա) ԴՕԿ-ի ցանցի ընդարձակում՝ Ֆրանսիայի տարբեր քաղաքներում ու ավաններում նոր մասնաճյուղեր հիմնելով և բ) նյութական միջոցների հայթայթում ու դրանց առաքում Հայաստան:

Մ. Պապաջանյանը իր ուշադրությունը կենտրոնացրեց կազմակերպչական աշխատանքների վրա, և կարճ ժամանակում գրանցվեցին բավականին լուրջ արդյունքներ: Մայր հայրենիքի վերաշինությանը նպաստելու, հայրենիք-սփյուռք կապը հաստատ պահելու համար անհրաժեշտ էր առաջին հերթին ընդլայնել ԴՕԿ-ի ցանցը և հնարավորինս շատ սփյուռքահայ ընդգրկել նրա մեջ: 1926թ. ապրիլի 17-ին ԴՕԿ-ի Երևանի գլխավոր վարչությանը ուղղած նամակում Մ. Պապաջանյանը հայտնում էր, որ Ֆրանսիայում ԴՕԿ-ի մասնաճյուղերի թիվը արդեն հասել է 19-ի: «Պիտի աշխատենք Ձեր աջակցութիւնովը զօրացած, ուժեղ կազմակերպութիւն մ'առաջ բերել, որ կարդարացնէ իր վրայ դրուած բոլոր յոյսերը և կատարել իրեն վստահուած պարտականութիւնները»<sup>1</sup>,-նույն նամակում գրում էր Պապաջանյանը: Հիրավի, Ֆրանսիայում նոր մասնաճյուղեր հիմնելու աշխատանքները առաջ էին գնում մեծ թափով, և Երևանում դրանից գոհ էին: ԴՕԿ-ի Երևանի գլխավոր վարչությունը, մայիսի 18-ի գրությամբ այդ առթիվ իր գոհունակությունն էր հայտնում Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչությանը. «Ուրախ ենք, որ շրջանային վարչությունը կարճ ժամանակվա ընթացքում կարողացել է կազմակերպչորեն այդքան ուժեղանալ

<sup>1</sup> Մեզ չհաջողվեց նրա ընտրության ճիշտ ամսաթիվը պարզել: Հայաստանի ազգային արխիվում հայտնաբերված առաջին փաստաթուղթը, որը ստորագրված է Մ. Պապաջանյանի կողմից՝ իբրև Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության նախագահ, կրում է 3 մարտի 1926թ. ամսաթիվը:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 430, ք. 49-51:

և ընդլայնել մեր կազմակերպության ցանցը՝ ընդգրկելով ամբողջ ֆրանսահայ գաղութը»:<sup>1</sup>

ՅՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչությունը 1926թ. հուլիսի 29-ին՝ իր հիմնադրումից ճիշտ մեկ տարի անց, ժողով հրավիրեց, որին մասնակցում էր նաև Դ. Շահվերդյանը: Վերջինս, ծանոթանալով վարչության միամյա գործունեությանը և ձեռքբերումներին, միանգամայն գոհացուցիչ գտավ արդյունքները: Դ. Շահվերդյանը իրավունք տվեց վարչությանը մասնակցել ներգաղթի աշխատանքներին, ինչը, Մ. Պապաջանյանի վկայությամբ, մեծապես կբարձրացներ վարչության հեղինակությունը:<sup>2</sup> Թե՛ Դ. Շահվերդյանը, թե՛ Ս. Փիրունյանը այնքան գոհացուցիչ էին գտնում ՅՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական կոմիտեի գործունեությունը, որ նպատակահարմար էին համարում այն դարձնել արտասահմանյան բոլոր շրջանների (բացի Միացյալ Նահանգներից) կենտրոն:<sup>3</sup> Իսկապես, միառժամանակ ՅՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության վրա դրվեց նման գործառույթ: Այսպես՝ Անգլիայի, Բելգիայի, Արգենտինայի, Եգիպտոսի և այլ վայրերի ՅՕԿ-ի մասնաճյուղերի կողմից հանգանակված գումարները հորհրդային Չայաստան էին հասնում Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության միջոցով, վարչության նախագահ Միքայել Պապաջանյանը Երևան առաքած իր զեկուցագրերում պարբերաբար տեղեկություններ էր հաղորդում Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի ու Չարավային Ամերիկայի երկրներում գործող ՅՕԿ-ի մասնաճյուղերի գործունեության մասին: 1926թ. նոյեմբերի 3-ին ՅՕԿ-ի Երևանի կենտրոնական վարչությունը հանձնարարեց Մ. Պապաջանյանին հետամուտ լինել ՅՕԿ-ի գործունեությանը միայն Միջագետքում ու Սիրիայում, քանի որ այդ վայրերում մասնաճյուղերը դեռ նոր էին կազմակերպվում, և տակավին գոյություն չուներ այնպիսի մի փորձված մասնաճյուղ, որին կարելի լիներ վստահել «կենտրոնական ճյուղի» պարտականություններ:<sup>4</sup> Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում գործող ՅՕԿ-ի արդեն ստեղծված մասնաճյուղերի վերահսկողության և նորերի

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 423, թ. 10:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 430, թ. 34:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 443, թ. 130:

<sup>4</sup> Նույն տեղում, գ. 423, թ. 31:

կազմակերպման աշխատանքը ընթանում էր բավականին դժվարին պայմաններում: Արդեն ասվեց, որ ՅՕԿ-ի առաքելության խնդրում հայկական գաղթավայրերում տարբեր քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների ու խավերի դիրքորոշումը տարբեր էր: Դրանցից խոշորագույնը՝ Չայ հեղափոխական դաշնակցությունը սկզբից ևեթ թշնամակն դիրքորոշում ուներ ՅՕԿ-ի նկատմամբ՝ հայկական գաղթավայրերում նրանց գործողությունները ընդունելով իբրև համայնավարական գաղափարախոսության տարածող ու ազգային միասնությանը վնասող երևույթ: Հնչակյան կուսակցությունը սկզբնական շրջանում որոշ մասնակցություն ունեցավ՝ մասնաճյուղերում իր ներկայացուցիչները նշանակելով, սակայն արդեն 1926 թվականի վերջերին նրանք ևս դադարեցրին իրենց օժանդակությունը՝ հրապարակային հայտարարություններով արգելելով իրենց համակիրներին մասնակցելու ՅՕԿ-ի մասնաճյուղերի աշխատանքներին:<sup>1</sup> Ռամկավար ազատականները դեռևս շարունակում էին լայնորեն սատարել մասնաճյուղերի գործունեությանը՝ հայ ազգի գոյատևման միակ պայմանը տեսնելով հորհրդային Չայաստանի կայացման ու բարգավաճման մեջ: ՅՕԿ-ի Երևանի կենտրոնական վարչությանը հղած զեկուցագրերում Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության նախագահ Միքայել Պապաջանյանը բազմիցս նշում է վերոգրեալ կուսակցությունների հարուցած այն խոչընդոտների մասին, որոնք դժվարեցնում և երբեմն էլ անհանրին են դարձնում մասնաճյուղերի կազմակերպումը կամ ստեղծվածների գործունեությունը:

ՅՕԿ-երի նկատմամբ անվստահության ու թշնամանքի տրամադրությունները շարունակվում էին բոլոր գաղթավայրերում, այդ թվում և Ֆրանսիայում, որոնց մասին Մ. Պապաջանյանը պարբերաբար զեկուցում էր Երևանի ՅՕԿ-ի կենտրոնական վարչությանը: Նա հաճախակի հանդես էր գալիս դասախոսություններով, հրապարակային ելույթներով ու կոչերով, որոնցում շեշտում էր այն հանգամանքը, որ ՅՕԿ-ը զուտ հայրենիքի վերաշինությանը նպաստող կազմակերպություն է և որևէ քաղաքական ու կուսակցական նպատակներ չի հետապնդում: Վստահաբար կարելի է ասել, որ Միքայել Պապաջանյանը լուրջ ներդրում ունի հատկապես Ֆրանսիայում ՅՕԿ-ի մասնաճյու-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 135, թ. 37:

ղերի կազմակերպման, նրանց անդամների քանակի ավելացման ու գործունեությանը արդյունավետություն հաղորդելու գործում: «Այս պայմաններու տակ մեր ճիւղերու անդամները կուրծք տուած են այլազան խոչընդոտներու, աշխատած են անձնասեր կերպով և 304-ը հասցուցած են այնպիսի աստիճանի մը, որ առանց չափազանցելու կարելի է ըսել, թե Ֆրանսիայի մէջ գոյութիւն ունեցող ու է հայկական կազմակերպութիւն չ'ունի անոր հասարակական և ժողովրդական արժէքը», - գրում էր Պապաջանյանը իր նամակներից մեկում:<sup>1</sup>

Մասնաճյուղերի կազմակերպմանը զուգընթաց 304-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության միջոցով սիստեմատիկ Հայաստան էին փոխադրվում հանգանակված գումարներ ու նվիրատվությունների միջոցով գոյացած հագուստեղեն, կոշիկեղեն, դեղորայք, սարքավորումներ և այլ իրեր: Մեծ եղավ Միքայել Պապաջանյանի դերը հատկապես Լենինականի երկրաշարժից տուժած աղետյալների համար օգնություն կազմակերպելու գործում:

Երբ տեղի ունեցավ Լենինականի՝ 1926թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժը, որի հետևանքով ավերվեցին 50-ի չափ գյուղեր, ու մոտ 60.000 բնակչություն մնաց անօթևան՝ բաց երկնքի տակ, Ս. Պապաջանյանը հրահանգ ուղարկեց իր իրավասության տակ գտնվող բոլոր մասնաճյուղերին՝ դադարեցնելու բոլոր տեսակի նվիրահավաքությունները և «իրենց ջանքն ու կորովը կեդրոնացնել երկրաշարժի աղետեալներուն փութով օգնութեան հասնելու գործին կազմակերպութեան շուրջ»:<sup>2</sup> Միևնույն ժամանակ Փարիզում գտնվող 304-ի պատվիրակության՝ նախածեռնությամբ կազմակերպվեց մի կենտրոնական հանգանակիչ մարմին՝ «Հայաստանի երկրաշարժէն աղետեալներու օգնութեան կոմիտէ» (ՀԵԱՕԿ) անվամբ:<sup>3</sup> Կոմիտեի ստեղծման մասնակցություն ունեցան Փարիզում գործող գրեթե բոլոր հասարակական, բարեգործական ու հայրենակցական կազմա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 456, ք. 17:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 430, ք. 18:

\* 304-ի պատվիրակության անդամներն էին Ս. Կամսարականը, Գ. Վարդանյանը ու Կ. Միքայելյանը:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 382, ք. 18 և շրջ.:

կերպությունները:՝ ՀԵԱՕ կոմիտեի նախագահ ընտրվեց Պողոս Նուբար փաշան, փոխնախագահներ՝ Ս. Պապաջանյանը, Պ. Էսմերյանը և տիկ. Ճևահերճյանը: Նոյեմբերի 1-ին նրանք կազմակերպեցին հրապարակային ժողով, որը ավարտվեց նվիրահավաքությամբ: Միայն այդ երեկո հաջողվեց ժողովել 17-18.000 ֆրանկ: Հավաքի ժամանակ կոչ արվեց սկսել դրամի և հագուստեղենի ժողովարարություն:<sup>1</sup> Ս. Պապաջանյանը իրեն հատուկ եռանդով ձեռնամուխ եղավ աղետյալների օգնության գործի կազմակերպմանը այն անխախտ հավատով, որ «կառավարութեան ձեռք առած ազդու միջոցներուն և բարեկամներու ընձեռած օժանդակութեան շնորհիւ հայ ժողովուրդը կը յաղթահարէ աղետին հետևանքները և կը շարունակէ իր վերելքի ճանապարհը»:<sup>2</sup> Նա Շիրակի երկրաշարժից տուժածների օգտին հանգանակություններ կատարելու նպատակով կազմակերպում էր ժողովներ, որոնց ընթացքում անձամբ հանդես էր գալիս դասախոսություններով:<sup>3</sup> Պապաջանյանը կոչեր էր հղում ժողովրդին՝ աղետյալների համար նվիրահավաքներ կազմակերպելիս խորհրդակցել իրենց հետ, որպեսզի Հայաստան ուղարկվող նվերները առավելագույնս համապատասխանեն երկրի կարիքներին:<sup>4</sup> 1927թ. հուլիսի 15-ին Երևանի 304-ի կենտրոնական վարչությանը հղած նամակում Ս. Պապաջանյանը գրում էր, որ իր կողմից և 304-ի միջոցով հայթայթված ապրանքները առաքում է վարչության անունով, իսկ ՀԵԱՕ կոմիտեի կողմից, որի մաս էր կազմում և ինքը, ձեռք բերված իրերն ու դեղորայքը առաքում է Հայաստանի Կարմիր խաչի անունով՝ ժամանակ խնայելու, մաքսի և փոխադրության դյուրություններ ունենալու համար:<sup>5</sup> ՀԵԱՕԿ-ի և 304-ի միջոցով

\* Բարեգործականի Փարիզի մասնաճյուղը, 304-ը, Կարմիր խաչը, Փարիզի հայ տիկնանց միությունը, Եկեղեցիների վարչությունը, Աղքատախնամը, «Անի» նկարչական-գեղարվեստական ընկերությունը, Չափահաս որբերի ընկերությունը, Տեխնիկական ընկերությունը, բոլոր հայրենակցական միությունները և այլն:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 430, ք. 18:

<sup>2</sup> Նույն տեղում, ք. 18 շրջ.:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 174, ք. 1:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 443, ք. 2 և շրջ.:

<sup>5</sup> Նույն տեղում, ք. 17, 24:

Խորհրդային Հայաստան էին ուղարկվում դեղորայք, խինին, բժշկական գործիքներ, հագուստեղեն, կոշիկեղեն, պատվաստի շիճուկ, սպիտակեղեն, որմնադրի գործիքներ, քարի մեքենաներ և այլազան իրեր: «Շիրակի աղետեալներուն ի նպաստ ինչքան աշխատանք թափած և որքան արդիւնք ձեռք բերած ըլլանք դարձեալ քիչ կը նկատինք: Այնուամենայնիւ թոյլ տւեք յայտնել, որ մեր մասնաճիւղերը ըրին ինչ որ հնարաւոր էր մարդկորէն, ի նպաստ Շիրակի աղետեալներուն: Արդիւնքի գնահատականը ձեզի կը ձգենք», - գրում էր Միքայել Պապաջանյանը Երևանի ՀՕԿ-ի կենտրոնական վարչութեանը հղած նամակում:<sup>1</sup>

ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի մասնաճյուղերի գործունեութեանը ընդհանրապէս և երկրաշարժի աղետալների օգնութեան գործի կազմակերպմանը մասնավորապէս մեծապէս խանգարեց 1927թ. սկզբներին Ֆրանսիայում սկսված գործազրկութեան ալիքը: Գործազրկութեան հետևանքով խախտվեց ֆրանսահայ աշխատավորութեան կայուն վիճակը, նրանք սկսեցին հաճախակի փոխել իրենց բնակութեան վայրերը՝ աշխատանք գտնելու ակնկալիքով, բացի այդ ՀՕԿ-ի մասնաճյուղերի որոշ անդամներ ամսավճարներ կատարելու հնարավորություն չունենալու պատճառով հրաժարվեցին անդամակցությունից: Հետևանքը եղավ այն, որ ՀՕԿ-ի մասնաճյուղերը թուլացան կամ էլ վերջնականապէս կազմալուծվեցին:՝ Ստեղծված իրադրութեան մեջ ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչությունը ստիպված էր միջոցներ ձեռնարկել գործազրկութեան հետևանքները մեղմելու ուղղությամբ: Անդրադառնալով այս առթիվ կատարած քայլերին՝ Մ. Պապաջանյանը գրում էր. «Ուրախ ենք յայտնելու, որ մեր և մեր մ-ճիւղերու այս ուղղութիւնով թափած ջանքերը յաճախ արդիւնաւոր եղան: Շատ մը գործազուրկներու աշխատանք հայթայթուեցաւ: Ոմանց ցոյց տրուեցաւ բարոյական և երբեմն նիւթական՝ աջակցութիւն: Ինչ որ ամենէն կարևորն էր, հնարաւոր եղաւ բազմաթիւ անձերու ինքնութեան թուղթերը կանոնաւորել ՀՕԿ-ի կեդր. վարչութեան կողմէ կազմուած Գործազրկութեան Կոմիտէին Օժանդակող Յանձ-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ.178, ց. 1, գ. 436, թ. 26:

\* 1928թ. հունվարի դրությամբ գործազրկութեան հետևանքով կազմալուծվեցին Պորփերի, Սոնթելիմարի, Շաթուի, Փոն Տոպընայի, Փոն Ս. Եսփրեի մասնաճյուղերը (ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 456, թ. 28 և շրջ.):

նաժողովին ջանքերուն շնորհիւ. կրնանք ըսել՝ առանց համետութեան դէմ մեղանչած ըլլալու, որ մեր կազմակերպութիւնը ամենէն աւելի շահագրգռութիւն ցոյց տուաւ գործազուրկներու վերաբերեալ և ի նպաստ անոնց շարք մը առաւելութիւններ և միջոցներ ապահովեց»:<sup>1</sup>

Միքայել Պապաջանյանը, Ֆրանսիայի շրջանի ՀՕԿ-ի կենտրոնական վարչութեան նախագահ եղած շուրջ երեք ու կես տարիների ընթացքում մասնակցություն ունեցավ նաև տարագիր հայերի դեպի Խորհրդային Հայաստան ներգաղթի կազմակերպման գործընթացին:

Դեռևս 1923թ. հունվարին ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինը Լոզանի կոնֆերանսում դաշնակից Թուրքիային ճնշումից փրկելու համար քարոզչական նպատակով հայտարարեց, որ Խորհրդային կառավարությունը պատրաստ է ընդունել և տեղավորել 250 հազար հայ գաղթական, սկայն որևիցե իրական քայլ այդ ուղղությամբ չկատարվեց, քանզի Խորհրդային կառավարությունը պայման էր դրել, որ ծախսերը իրենց հաշվին չէր լինելու: Ալ. Մյասնիկյանը տեսնելով, որ Չիչերինի հայտարարությունն իրատեսական չէ, 1923թ. նոյեմբերն դիմում է Ստալինին, առաջարկելով Անդրկովկաս ընդունել 10 հազար փախստական, հիմնականում արհեստավորների, որոնք կարող էին ապրել իրենց միջոցներով:<sup>2</sup> 1924թ. մարտի 3-ին Անդրկենտրոնի նախագահությունը որոշում է կայացնում 1924-25 թթ. ընթացքում արտասահմանից՝ հիմնականում Հունաստանից, Միջագետքից ու Թուրքիայից, Խորհրդային Հայաստան ընդունել 10.000 գաղթականների և նրանց տեղավորել Սարդարապատի արևելյան մասերում՝ նախապէս այն դարձնելով ոռոգելի:<sup>3</sup> 1924 թվականի ընթացքում Կ. Պոլսից, Սիրիայից, Միջագետքից և Ֆրանսիայից հայրենիք եկան 4167 տարագիրներ, այդ թվում՝ նաև որբեր:<sup>4</sup>

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 384, թ. 2 և շրջ.:

<sup>2</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии. Т. 2, ч. 1. М. 2003. С. 620.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 305, թ. 39:

<sup>4</sup> Նույն տեղում, ց.1, գ. 418, թ. 28:

Երգադրի գործընթացը ավելի լավ կազմակերպելու համար 1925թ. հունվարի 28-ին ՀՍԽՅ ժողկոմխորիը որոշում ընդունեց ստեղծել ժողկոմխորիին առընթեր գաղթականական հանձնաժողով: Հանձնաժողովի նախագահ նշանակվեց ժողկոմխորիի նախագահի տեղակալ Ասքանազ Մռավյանը: Հաշվի առնելով ներգաղթի քաղաքական ու տնտեսական խոշոր նշանակությունը՝ 1925թ. սեպտեմբերին կառավարության կողմից գաղթականական հանձնաժողովը վերակառուցվեց՝ ստանալով ավելի լայն իրավունքներ ու լիազորություններ, և կոչվեց ժողկոմխորիին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով:<sup>1</sup> ՀՕԿ-ի Երևանի կենտրոնական վարչությունը 1926թ. մայիսի 24-ին հրահանգ է ուղղում ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչությանը ներգաղթի գործի կազմակերպման հետ առընչվող խնդիրների առթիվ:<sup>2</sup> Օգոստոսի 4-ին ֆրանսահայ քաղաքացիներին ուղղած կոչով Միքայել Պապաջանյանը հավաստիացնում էր, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը և նրա արտասահմանյան ներկայացուցիչները «չափազանց լաւ տրամադրութիւններով տոգորուած են և իրենց բոլոր կարելի միջոցները ի գործ կդնեն» Հայաստան մշտական բնակության մեկնել ցանկացողներին գոհացում տալու համար:<sup>3</sup> Նույն կոչում Պապաջանյանը տեղեկացնում էր, որ ցանկացողները պետք է դիմեն տեղերում ՀՕԿ-ի մասնաճյուղերին՝ ներկայացնելով մանրամասն տվյալներ իրենց մասին: Նախապատվությունը պետք է տրվեր որոշակի մասնագիտություն ունեցող անձանց (շերամապահներ, բամբակագործներ, ծխախտազործներ, դարբիններ, շինարարներ և այլն):

1926թ. սեպտեմբերի 3-16-ը Մ. Պապաջանյանը՝ իբրև ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի նախագահ,<sup>\*</sup> մասնակցեց Ժնևում կայացած Ազգերի լիգայի խորհրդակցությանը, որտեղ լսվեց նաև Սիրիայում գտնվող հայ գաղթականների օգնության, հայ տարագիրների Խորհրդային Հայաստան փոխադրելու և Սարդարապատի

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 415, ք. 13:

<sup>2</sup> Նույն տեղում, ց. 1, գ. 171, ք. 47:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 430, ք. 24:

\* Նրա ուղևորությունը Ժնև համաձայնեցված էր Ֆրանսիայում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ս. Փիրումյանի հետ (ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 356, ք. 214):

անջրդի հողերը ոռոգելի դարձնելու համար Հայաստանին փոխառություն տրամադրելու հարցերը:<sup>1</sup> Ժնևում եղած ժամանակ Պապաջանյանը առանձնազրույցներ ունեցավ Ֆ. Նանսենի ու Ազգերի լիգայի քարտուղարության մի քանի անդամների հետ: Ցավոք, այս խորհրդակցությունը որևէ արդյունք չունեցավ վերոհիշյալ խնդիրների կարգավորման հարցում.

Հասկանալի պատճառներով ներգաղթի կազմակերպման գործը մեծապես տուժեց Լենինականի երկրաշարժից հետո: Չնայած դրան՝ մեծ էր Խորհրդային Հայաստան ներգաղթել ցանկացողների թիվը, այդ թվում՝ նաև Ֆրանսիայում: Միքայել Պապաջանյանը անձամբ էր զբաղվում Հայաստան մեկնել ցանկացողների միջից առավել հարմար անձանց ընտրության գործով: Նա միջնորդագրեր էր հղում Ֆրանսիայում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ս. Փիրումյանին և Աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի նախագահ Ա. Մռավյանին՝ առանձին մարդկանց Հայաստան մեկնելու արտոնություն ստանալու խնդրանքով:<sup>2</sup> Պապաջանյանը նախապատվություն էր տալիս մասնագետներին՝ բժիշկ, ուսուցիչ, որմնադիր և այլն:

1928թ. օգոստոսի 27-ին ՀՕԿ-ի Երևանի կենտրոնական վարչությունը մի շրջաբերական հղեց արտասահմանյան ճյուղերի կենտրոնական վարչություններին, այդ թվում նաև Ֆրանսիայի կենտրոնական վարչությանը, որում ասվում էր. «Մի շարք լուրջ պատճառներով մեր Խորհրդային իշխանության կողմից խիստ սահմանափակված է ներգաղթը այս տարվա ընթացքում»:<sup>3</sup> Նույն շրջաբերականով խիստ հրահանգ էր տրվում ՀՕԿ-ի մասնաճյուղերին «ոչ մի կերպ չխրախուսել ներգաղթը և ոչ մի խոստում չտալ ներգաղթել կամեցողներին»:

Չնայած Երևանից պարբերաբար հնչող հավաստիացումներին, թե ՀՕԿ-ը բացառապես վերաշինական կազմակերպություն է և քաղաքական որևէ նպատակ չի հետապնդում, այնուամենայնիվ զնալով ավելի էին սրվում հարաբերությունները հայ քաղաքական կուսակցությունների և ՀՕԿ-ի միջև: Ռամկավար ազատական կուսակցությունը, որ սկզբնական շրջանում

<sup>1</sup> Հայ դատի նվիրյալը: Ֆրիտյոֆ Նանսեն, Փաստաթղթերի ժողովածու (1920 - 1930), Երևան, 2005թ., էջ 123-127:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 31, գ. 79, ք. 107:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 171, ք. 65:

եռանդով ու խանդավառությամբ որոշեց սատարել և մասնակցել ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի ձևավորմանն ու աշխատանքներին, քանի որ կուսակցությանը որոշեցրել էր խորհրդային Հայաստանի վերաշինությանն ու ներգաղթին օժանդակելու քաղաքականություն, աստիճանաբար սկսեց ավելի կասկածանքով ու զգուշավորությամբ վերաբերվել նշված գործընթացին: Կուսակցությունների ոչ բարեկամական տրամադրվածությունը ՀՕԿ-ի նկատմամբ զուրկ չէր իրական պատճառներից: Երևանի ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանը ուղղված մի զեկուցագրում\* կարդում ենք. «Ուսման վարչարարներին ՀՕԿ-երի մեջ առնելը խրախուսվում է արտասահմանյան մեր ճյուղերի կողմից, որովհետև Ամերիկայի օրինակը ցույց է տալիս, որ այդպիսով մեծապես թուլանում է ազգայնական այդ կազմակերպությունը: ՀՕԿ-ը արտասահմանում ներկայումս հանդիսանում է այն միակ, բավականաչափ ուժեղ կազմակերպությունը, որ ա) Սիստեմատիկ պրոպագանդ է մղում աշխատավորական զանգվածների մեջ և ինտիլիգենցիայի մի որոշ խավում՝ խորհրդային Հայաստանի և առհասարակ խորհրդային կարգերի համար. բ) Պայքարում է դաշնակցության դեմ. գ) Հանդիսանում է որպես մի պլատֆորմ, ուր կոմունիստ ընկերները մոտիկ շփման մեջ են մտնում բանվորական և մանրարհեստավորական տարրերի հետ և անում որոշ պրոպագանդ նրանց շրջանում. դ) Պատճառ է լինում, որ ռամկավարներից և հնչակյաններից բանվորական-աշխատավորական տարրերը հետզհետե պոկվեն, ազատագրվեն ազգայնական իդեոլոգիայից և մոտենան բանվորականին. ե) Տարածում է խորհրդային գրականությունը գաղութներում: զ) Տալիս է նյութական օժանդակություն և Հայաստանի շինարարության, է) Աշխատում է եվրոպայում և Ամերիկայում հայտնաբերված քիմիական, տեխնիկական և ինդուստրիական նորություններ մուծել Հայաստան»:<sup>1</sup> Ձեկուցագրից հստակ երևում է, որ ՀՕԿ-ի գործունեության մեջ առաջնային դերը վերապահված էր նրա քաղաքական նպատակների: Ի վերջո սա հանգեցրեց նրան, որ ՌԱ կուսակցու-

\* Ձեկուցագիրը պատճեն է, ամսաթիվ ու ստորագրություն չկա, բայց բովանդակությունից ենթադրվում է, որ պետք է գրված լինի 1927թ. կեսերին (ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 135, ք. 35-41):  
<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 135, ք. 37:

թյունը ևս որոշում կայացրեց իր անդամներին հեռացնել ՀՕԿ-ի մասնաճյուղերին անդամակցելուց: Կուսակցության 1928թ. հունիսի 16-ին հրապարակած շրջաբերականում, անդրադառնալով ՀՕԿ-ին, հայտարարվում էր. «Արտասահմանեան ՀՕԿ-երու մասնաճիւղերու մէջ գտնուող համայնավար անդամները վերջին երկու տարուան ընթացքին երևան հանեցին ՀՕԿ-ի բուն նպատակին և գաղութահայութեան վնասող կուսակցական նկատումներ: Այդ իրողութեան հանդէպ մեր ՀՕԿ-ի անդամ-ընկերները, ուր որ կարելի է, պէտք է դիմադրեն կուսակցական այդ հակումին, քանի որ այս կազմակերպութիւնը ըստ իր կանոնագրի քաղաքականութեամբ պիտի չզբաղուի, հակառակ պարագային մեր ընկերները պէտք է հեռանան ՀՕԿ-երէն, առանց վեճի և առանց հրապարակային արտահայտութեանց»:<sup>1</sup>

1928թ. սեպտեմբերին Սիքայել Պապաջանյանը, «առանց վեճի և առանց հրապարակային արտահայտութեանց» դադարեցրեց իր անդամակցությունը ՀՕԿ-ին: Դժվար է հավատալ, որ Պապաջանյանի նման փորձված քաղաքական գործիչը սկզբից ևեթ չէր գիտակցում, որ ՀՕԿ-ը, բացի հայրենիքի վերաշինության գործին նպաստելուց ուներ և այլ՝ քաղաքական առաքելություն: Չէ՞ որ, ի սկզբանե, գաղութահայությանը հայրենիքի հետ կապելու նպատակով լայն քարոզչություն էր տարվում խորհրդային Հայաստանի օգտին, որը ինքնըստինքյան վերածում էր խորհրդային կարգերի գովերգաման՝ դրանից բխող հետևանքներով: Ավելի հակված ենք կարծելու, որ Պապաջանյանը, հավատարիմ իր համոզմունքին, թե պետք է ամեն գնով ու բոլոր ճանապարհներով օգնել խորհրդային Հայաստանի կայացմանն ու բարգավաճմանը, անդամակցում էր ՀՕԿ-ին, որը տվյալ պահին հայրենիքին օգնություն հասցնելու ամենակարճ ու ամենահարմար ճանապարհն էր:

**ԳՈՐԱՐ ԱՎԱԳՅԱՆ**  
պատմական գիտությունների  
թեկնածու

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 7, ք. 39:



Խորհրդային իշխանության հաստատումից հետո առաջին շրջանում Հայաստանի տնտեսական, ֆինանսական, առողջապահական, սոցիալական և մշակութային կյանքը գտնվում էր անմխիթար վիճակում: Նման պայմաններում մի շարք հասարակական գործիչներ, ականավոր մտավորականներ դիմում են ՀՍԽ՝ Ժողովրդական կոմիսարների խորհրդին՝ հասարակական մի կազմակերպություն՝ «Հայաստանի օգնության կոմիտե» ստեղծելու խնդրանքով, որը, նախևառաջ պետք է միջոցներ հայթայթեր ժողովրդին սովի ու համաճարակի ճիրաններից փրկելու համար:

1921թ. սեպտեմբերի 15-ին ՀՍԽ՝ Ժողկոմխորին ընդունում է դեկրետ Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ) ստեղծելու մասին<sup>1</sup>, որի հիմնադիր ժողովը կայանում է 1921թ. սեպտեմբերի 13-20-ը՝ Երևանում<sup>2</sup>: ՀՕԿ-ի հիմնադիր անդամներ են եղել հասարակական-քաղաքական, պետական գործիչներ, մտավորականներ, հայ ժողովրդի նվիրյալ գավակներ, ինչպիսիք էին Հովհ. Թումանյանը, Լեոն, Դերենիկ Դեմիրճյանը, Նար-Դոսը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Սաքո Համբարձումյանը, Սարգիս Կասյանը, Արամայիս Երզնկյանը և ուրիշներ:

ՀՕԿ-ի Կենտրոնական վարչությունը բարեխղճորեն կատարում է իր բուն առաքելությունը՝ հայթայթելով և սովահար ազգաբնակչությանը բաշխելով սնունդ, հագուստեղեն և դեղորայք: ՀՕԿ-ի ողջ գործունեության ընթացքում թերևս ամենակարևոր աշխատանքը հայրենադարձության գործին աջակից դառնալն էր: ՀՕԿ-ը ամեն ջանք գործադրեց՝ մասնակից դառնալու հայրենադարձության կազմակերպչական աշխատանքներին և օժանդակելու այն անհատներին ու խմբերին, ովքեր ցանկություն էին հայտնել գալ ու բնակվել Հայաստանում<sup>3</sup>:

Ներգաղթողներին օգնություն կազմակերպելու համար սկզբնական շրջանում առաջին հերթին գործի էին անցել ՀՕԿ-ի անդրկովկասյան և մյուս խորհրդային երկրների ՀՕԿ-ի մասնաճյուղերը: Մասնավորապես ՀՕԿ-ի Աջարիայի մասնաճյուղի

նախագահության 1922թ. հունվարի 12-ի նիստում որոշվել էր կազմել 100 որբերի ցուցակ Դիլիջանի որբանոց տեղափոխելու համար<sup>1</sup>: Սկսվել էր նաև Ռուսաստանից փախչող հայ գաղթականների հոսանք, որոնք խնդրում էին ՀՕԿ-ի տեղի մասնաճյուղից զոնե ժամանակավոր ապաստան տրամադրել<sup>2</sup>:

1921թ. դեկտեմբերի 20-ին Վրաստանում ՀՍԽ՝ դիվանագիտական ներկայացուցիչ Հ. Սուրխաթյանը Թիֆլիսից հեռագրում է Երևան՝ Ժողկոմխորիին, որ արդեն Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի ուղեկցությամբ Բաթում է հասել շոգենավ՝ իր հետ բերելով 3 հազ. միջազատքահայ: Սա փաստորեն հայրենադարձների առաջին քարավանն էր: ՀՍԽ՝ Ժողկոմխորիը 1921թ. դեկտեմբերի 27-ին քննարկելով միջազատքահայերի նոր խմբերի ընդունելության հարցը, որոշում է ծնունդ ամիսներին անհնարին համարել գաղթականներին Հայաստան ընդունելը և մինչև 1922թ. գարունը ներգաղթ չկատարել: Այս որոշումը բացատրվում էր նրանով, որ Հայաստանի տնտեսական վիճակը այդ ընթացքում չափազանց ծանր էր, զգացվում էր բնակարանների խիստ պակաս:

Այդուհանդերձ 1922թ. հունվարի 2-ին ՀՍԽ՝ արտգործժողկոմատը Կոստանդնուպոլսում բրիտանական գերագույն կոմիսարին հղում է մի հուշագիր, որով հայտնում է, որ, այնուամենայնիվ, կընդունի արդեն ժամանող հայրենադարձներին:

1922թ. հունվարի 10-ին Բաթում է ժամանում 3 հազ. հոգուց բաղկացած միջազատքահայերի երկրորդ քարավանը: Հայաստան հասնելով՝ նրանք ժամանակավորապես տեղավորվում են Ղանարլուի շրջանի զորանոցներում<sup>3</sup>:

Աջարիայում արդեն գարնանը սկսվել էր գաղթականների ցուցակագրումը (1500 ընտանիք՝ շուրջ 5000 հոգի), բայց այդ գործընթացը դանդաղում էր, քանի որ վերջիններս խուսափում էին ցուցակագրվել: Գաղթականներն հիմնականում ապրում էին զորանոցներում կամ բաց երկնքի տակ: Մանթաշևի զորանոցներից դուրս էին արել 115 գաղթականների, և ՀՕԿ-ի Բաթումի մասնաճյուղը դիմել էր Սայելակին նրանց նոր ապաստան տրամադրելու:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 33, ք. 85:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 1, ք. 1:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 165, ք. 9:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 295, ք. 12 շրջ.:

<sup>2</sup> Նույն տեղում, ք. 29 շրջ.:

<sup>3</sup> Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980թթ., էջ 83-85:

տան հատկացնելու համար: Շուտով գաղթականներին իրավունք է տրվում զորանոցների բակում բացել իրենց տրամադրության տակ գտնվող անգլիական վրանները: Գաղթականներին Հայաստան տեղափոխելու խնդիրը ծանրացել էր ՀՕԿ-ի տեղի մասնաճյուղի ուսերին: Միջազգեսփց եկած մոտ 7 հազ. գաղթականների 7 զնաքցով տեղափոխում են Հայաստան: Բաթումի մասնաճյուղը հոգում էր նրանց պարենավորումը, կազմակերպում մահացած գաղթականների թաղումը<sup>1</sup>:

Ղամարլուի շրջանում տեղավորված Ուրմիայի և Սուլդուզի գաղթականները ՀՕԿ-ից ստանում էին բժշկական օգնություն և այլուր: Այս շրջանի գաղթականները կլիմայական վատ պայմանների մեջ լինելով՝ կառավարական պատշաճ մարմինների կողմից հնարավորություն են ստանում փոխադրվել Միլիդարայի շրջան: ՀՕԿ-ը այդ գործին օժանդակություն է ցույց տալիս 2000 փուլ ցորենով<sup>2</sup>:

ՀՕԿ-ի 2-րդ համագումարից հետո 1922թ. հուլիսի 28-ին ՀՕԿ-ի Նախագահության առաջին նիստին Ա. Երզնկյանը հաղորդում է Բասարգեչարի շրջանում արդեն հաստատված գաղթականների մասին: ՀՕԿ-ը տեղի գաղթականներին բաշխում էր իր տրամադրության տակ գտնվող այլուրը և միաժամանակ ձեռնարկել էր սննդակայանների կազմակերպման գործը<sup>3</sup>: Էջմիածնի շրջանի Եղիլ, Ագարակ Բախչազյուղ գյուղերում վերաբնակեցված 1000 հոգի սասունցի գաղթականների տրվում է 500 փուլ հացահատիկ:

1922թ. օգոստոսի 24-ին Ս. Հարությունյանը ՀՕԿ-ի Գլխավոր վարչությանը տեղեկացնում է Թիֆլիսում, վանքի գավթում, Սաբորթալու արվարձանում և Վրաստանի մյուս մասերում անխնամ թափված գաղթականների մասին: Գաղթականների 90%-ը հիվանդ էր՝ գլխավորապես մալարիայով: ՀՕՍ-ը Կոստանդնուպոլսից Դ. Շահվերդյանի միջոցով ուղարկել էր 1500 թուրքական լիրա բանկնոտ Վրաստանում գտնվող գաղթականների կարիքները հոգալու համար: Այդ գումարով գաղթականներին տալիս էին թեյ և նորաբաց ամբուլատորիայում ցուցաբերվում էր բժշկական օգնություն: Բացօթյա պայմաններում ապրելով,

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 295, թ. 46, 47 շրջ.:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 54, թ. 2 շրջ.:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 35, թ. 3:

վատ սննդի պատճառով շատերը մահանում էին: Միայն վանքի գավթից օրական 1-2 դիակ էր հանվում, նույնը տեղի էր ունենում Սաբորթալոյում: Երկու վագոնով՝ գաղթականները՝ մոտ 150-200 հոգի ուղարկվում են Ալեքսանդրապոլ, մեկ վագոնով՝ Երևան: Գաղթականների մի մասը Հյուսիսային Կովկասից եկած արևմտահայեր էին, իսկ մեծ մասը՝ Օլթիից, Արդահանից, Կարսից և այլ վայրերից<sup>1</sup>:

Տաճկական պատերազմի հետևանքով 1922թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Կոստանդնուպոլսի հայ ազգաբնակչությունը խուճապի էր ենթարկվել: Սպասվում էր գաղթականների նոր հոսանք դեպի Սև ծովի ափերը, Խորհրդային Ռուսաստան, Բաթում և Հայաստան: Այդ նպատակով ՀՕԿ-ի Գլխավոր վարչության Նախագահությունը հանձնարարում է Ս. Հարությունյանին գնալ Բաթում՝ կարգավորելու Կոստանդնուպոլսից եկող հայ գաղթականների հարցը: Մինչև նրա Բաթում հասնելը Կոստանդնուպոլսից Բաթում էին եկել մի քանի նավեր՝ մասամբ գաղթականներով, բայց նրանց չէին ընդունել և ետ էին ուղարկել, քանի որ նրանցից ոմանք կանոնավոր վիզա չէին ունեցել: Այդ գաղթականները փախել էին Արդվիհից, Արդանուշից, Ջավշեթից և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից<sup>2</sup>:

1922թ. հոկտեմբերի 10-ին ՀՕԿ-ի Գլխավոր վարչությունը հրավիրում է արտակարգ նիստ, որին բացի նախագահության անդամներից մասնակցում են նաև Կոստանդնուպոլսից եկած Ջավեն Ջորյանը, Վահան Թոթովենցը, Հրանտ Գալիկյանը: Վերջիններս տեղեկացնում են Կոստանդնուպոլսում տեղի ունեցած դեպքերի մասին, որի հետևանքով տեղի էր ունեցել մի խումբ հայ մտավորականների փախուստը դեպի բալկանյան երկրներ, արտասահման և խորհրդային հանրապետություններ և հինգ հազարից անցնող հայ որբերի ծանր դրության մասին, որոնց Կոստանդնուպոլսի հայ ազգային և հասարակական մարմինները ցանկություն էին հայտնել փոխադրել Խորհրդային Հայաստան<sup>3</sup>:

Սփյուռքահայ կուսակցությունները հատկապես Հայ հեղափոխական դաշնակցությունը, մեղադրանք էին ներկայացնում

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 295, թ. 8, 18:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 47, թ. 14-15:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 35, թ. 27 և շրջ.:

խորհրդային կառավարությանը հայրենադարձներին երկրում չընդունելու գործում: Այս առիթով Ալ. Մյասնիկյանն իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» աշխատությունում նշում էր. «խորհրդային Հայաստանը յերբեք ել աչքաթող չի արել գաղութահայությանը: Մեր երկրի սահմաններից դուրս ապրում ե ավելի հայություն, քան ներսումը... խորհրդային Հայաստանը արտասահմանից նյութական սպասելիքներ չունի. նրա սպասելիքն այն քաղաքական ու հասարակական համակրանքն ու համերաշխությունն է, վորը հավատացած ենք, թե ունի և պիտի ունենա այսուհետև գաղութահայ աշխատավորության մեծագույն մասը...»<sup>1</sup>

Թեև հայրենադարձության հարցում խորհրդային ղեկավարությունն ուներ որոշակի վերապահումներ, և Ալ. Մյասնիկյանը Հայաստանի խորհուրդների առաջին համագումարում բացահայտ հայտարարում էր, որ խորհրդային իշխանություններին ընդդիմադիր տարրերին, ինչպիսիք էին «Դարբինյանները, Օհանջանյանները, Վրացյանները» չէին ընդունելու<sup>2</sup>, սակայն, օգտագործելով քարոզչության ամենատարբեր եղանակներ, նրանք ամեն ինչ անում էին, որ համայն հայության հայրենիք այլևս դիտվեր բացառապես խորհրդային Հայաստանը:

Զսպասելով Լոզանի կոնֆերանսի արդյունքներին՝ 1923թ. փետրվարից արտասահմանի հայերը փորձում էին իրենք լուծումներ գտնել Եվրոպայի և Մերձավոր Արևելքի երկրներում սփռված տասնյակ հազարավոր հայ գաղթականներին տեղավորելու համար:

ՀԲԸՄ Կենտրոնական վարչության անդամ Միքայել Բաբաջանյանը (Պապաջանյան\*)՝ որպես Հայկական ազգային պատվիրակության ներկայացուցիչ, 1922թ. դեկտեմբերի 1-ին ժամանել էր Մոսկվա՝ Հայկական օջախի ստեղծման հարցում ստանալու խորհրդային պետության աջակցությունը: Նա Մոսկվայում հանդիպումներ է ունենում Լևոն Կարախանի, Հայաստանի ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանի, ՀԱԽՅ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինի, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Ա.

<sup>1</sup> Մարտունի Ալ., Կուսակցությունները գաղութահայության մեջ, N 190, Թիֆլիս 1924թ., էջ 6-7:

<sup>2</sup> Մարտունի Ալ., խորհրդային Հայաստանի ուղին, N 101, Թիֆլիս 1924թ., էջ 28:

Հովհաննիսյանի հետ և անձամբ լսում է հայ գաղթականներին ու որբերին Հայաստանում ընդունելու հարցում նրանց փափագը<sup>1</sup>: ՀԲԸՄ-ի մեկ այլ անդամ Եսայի Կարիկյանը 1923թ. հոկտեմբերին մասնակցում է ՀՕԿ-ի 3-րդ համագումարին, որի ժամանակ խորհրդային իշխանության պատասխանատուները հաստատում են իրենց համաձայնությունը որբերին Հայաստան տեղավորելու հարցում<sup>2</sup>:

Ազգերի լիգայի 5-րդ ընդհանուր ժողովը հանձնարարում է Աշխատանքի միջազգային բյուրոյին՝ Ֆրիտյոֆ Նանսենի գլխավորությամբ ուսումնասիրություն կատարել պարզելու համար Կովկասում և այլուր մեծ թվով գաղթականներ տեղավորելու հնարավորությունը՝ այդ նպատակի համար 1925թ. գաղթականների բյուջեի վրա ավելացնելով 50 հազ. ֆրանկի հավելյալ վարկ<sup>3</sup>:

Հայրենադարձության աշխատանքները ավելի կանոնակարգված կազմակերպելու համար ՀԱԽՅ ժողկոմխորհի 1925թ. հունվարի 28-ի որոշմամբ ստեղծված Գաղթականական հատուկ հանձնաժողովի<sup>4</sup> աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր նաև ՀՕԿ-ի ներկայացուցիչ Գր. Վարդանյանը<sup>5</sup>:

Հայ գաղթականության տեղավորման համար խորհրդային Հայաստանի հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով 1925թ. հունիսի 17-ին Հայաստան է ժամանում Ֆ. Նանսենի գլխավորած հանձնաժողովը<sup>6</sup>: ՀՕԿ-ի Գլխավոր վարչության 1925թ. հունիսի 30-ի թիվ 18 որոշմամբ՝ Ֆ. Նանսենն ընտրվում է ՀՕԿ-ի Կենտրոնական վարչության մշտական պատվավոր

\* Ս. Բաբաջանյանը ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի Կենտրոնական վարչության նախագահն էր:

